




Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

UNIVERSITE D'ETAT D'EREVAN

**FUNDAÇÃO
CALOUSTE GULBENKIAN**



Գիրքը լույս է տեսել
ԳԱԼՈՒՍԻ ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ
հիմնարկության հովանավորությամբ

Ի հիշատակ
ՍԻՐԱՐՓԻ ՏԵՐ ՆԵՐՍԵՍՅԱՆԻ

À la mémoire de
SIRARPIE DER NERSESSIAN

Լիլիթ Չարարյան

ԱՂԶՈՅ ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍ

- 11 ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
- 21 ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
- 24 ԶԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ
- 32 ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
- 86 ՊԱՏԿԵՐԱԶԱՆԴԱԿՆԵՐԻ ՈՃԸ
- 112 ՎԵՐՁԱԲԱՆ
- 117 ՀԱՎԵԼՎԱԾ

Lilith Zakarian

AGHDJOTS SAINT STEPANOS

Edition bilingue

Traduit de l'arménien
par
AIDA TCHARKHTCHIAN

EDITION
DE L'UNIVERSITE
D'EREVAN



Ն Ա Խ Ա Մ Ո Ւ Տ Ք

Այս աշխատության առաջին ընթերցողը եղել է Սիրարփի Տեր-Ներսեսյանը: Որոշ դիտողություններով հանդերձ, նրա դրական վերաբերմունքը և ուսումնասիրությունը հրատարակված տեսնելու ցանկությունը, ինձ դրդեց այն պատրաստել տպագրության: Դա անցած դարի 80-ական թվականների վերջն էր: Երկրի հասարակական կյանքում շուտով տեղի ունեցած փոփոխությունները կասեցրին գրքի հրատարակությունը:

Անցել է ավելի քան տասնհինգ տարի: Կյուլպենկյան բարեգործական հաստատության տնօրեն դր. Ջավեն Եկավյանի համաձայնությունը հրատարակության պատրաստել ներկայացվող աշխատությունը, այն վերանայելու ազդակ հանդիսացավ: Նյութը հարստացվեց, ինչպես նաև պատրաստվեց վանքի արձանագրություններն ամփոփող հավելված:

Ուրեմն և ամենից առաջ հայտնում եմ իմ խորին երախտագիտությունը Կյուլպենկյան հաստատությանը, մասնավորապես դր. Ջ. Եկավյանին, ինչպես նաև Քլոդ-Արմեն Մութաֆյանին ի սկզբանե նրա ցուցաբերած շարունակական և արժեքավոր օգնության համար, առանց որի այս գրքի հրատարակումը չէր իրականանա:

Ծնորհակալության իմ ջերմ զգացումները թարգմանիչ Աիդա Չարախչյանին, որը ոչ միայն բարեխղճորեն կատարեց իր աշխատանքը, այլև օգնեց ինձ գրքի ամբողջացման խնդիրներին վերաբերող իր խորհուրդներով: Երախտապարտ եմ հնազետ Արամ Գևորգյանին և լուսանկարիչ Ջավեն Սարգսյանին, որոնց աջակցության շնորհիվ էր, որ կայացան իմ աշխատանքային այցելությունները հեռավոր, դժվար մատչելի Աղջոց վանք: Մատենադարանի իմ գործընկերների՝ Լուսիկ Ստեփանյանին, Վարդան Դերիկյանին, Արմեն Տեր-Ստեփանյանին, ինչպես նաև պրոֆ. Պարույր Մուրադյանին, երախտագիտությանս անկեղծ զգացումները: Վարվառե Բասմաջյանին, Ալիս Ազատխանյանին, Աիդա Գառնիկյանին իմ ջերմ զգացումների հա-

Ս. Պետրոս Պողոս եկեղեցեակ յԷլինձէ

Գրավորը արտատպված է Ռ. Դ. ԱԼԻՇԱՆԻ Այրարատ, բնաշխարհ հայոց գրքից

Petite église St' Pierre et Paul au village d'Elindzé.

Gravure reproduite du livre Ayranat de L. ALICHAN.

վաստիքը նրանց ֆրանսերեն բնագրի որոշ ուղղումների համար: Նկարիչ Մկրտիչ Մաթևոսյանին երախտապարտ եմ աշխատանքի ողջ ընթացքում նրա ցուցաբերած գործնական, անշահախնդիր օգնության համար:

Ծնորհակալ եմ Վիգեն Թադևոսյանին, որը ոչ միայն ամենայն լրջությամբ, մասնագիտորեն աշխատեց գրքի ձևավորման վրա, այլև սիրահոծար մասնակցեց բնագրերի համեմատությանն ու շտկումներին:

Ձեռն կարող չնշել Գուրգեն Գասպարյանի մտացի աշխատանքը, որը ըստ ամենայնի օժանդակեց գրքի լավագույնս հրատարակելու ընթացքին:

Թող որ նշված անձինք այս տողերի մեջ գտնեն իմ երախտիքի խորը զգացումները:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Գեղարդից ոչ հեռու, նրա հարավային կողմում, Գառնիից ու Հավուց Թառից դեպի արևելք, Գեղարքունյաց բարձրադիր լեռներից աստիճանաբար դեպի Ազատ գետն իջնող հյուսիսային լանջի մի գեղատեսիլ ձորագոգում տեղավորված է Աղջոց սբ. Ստեփանոս վանքը:

Վանքի հիմնադրումն ու անվանումը առնչվում է Հայաստանում շատ տարածված մի ավանդության հետ, համաձայն որի այդ վայրում պաշտամունքային կառույց հիմնելու գաղափարը ներշնչվել է Գրիգոր Լուսավորչի կողմից: Այդ ավանդության գրական, ընդարձակ տարբերակը՝ Հոփսիսիմյանց կույսերի հիշատակմամբ, կապված վանքի անվանակոչության հետ, արտացոլված է Հայսմավուրքներում: Օրինակ, Գրիգոր Խլաթեցու խմբագրությամբ կազմված Հայսմավուրքում ասվում է հետևյալը. «...երեք քահանայքն, որ էին ընդ սրբոցն մին ի կուսանացն, Նունի անուն, ի կոտորել զայլսն, փախստական եղեն դեպ յարևելս: Եւ մի ոմն ի քահանայի որն Ստեփանոս անուն, անկաւ փախստական ի լեոն Գառնոյ և անդ կեցեալ կատարեցաւ ի ՔՍ և թաղեցաւ ի տեղւոջն: Եւ յետոյ սուրբն Գրիգոր ազոմամբ հրեշտակաց արար զտեղինս վանք միաբնակեցաց, որ է մինչ ի ցայսօր և կոչի Աղջոց վանք: Եւ զանուն սրբոյն ուսաւ ի հրեշտակէն Սուրբն Գրիգոր Ստեփանոս գոլ, վասն որոյ ասի Աղջոց վանս Սուրբ Ստեփանոս»¹:

Հայտնի է, որ Հոփսիսիմյանց կույսերի, ինչպես նաև հավատքի այլ նահատակների անունով վանքեր ու եկեղեցիներ կոչելու սովորույթը հայոց մեջ վաղուց ի վեր տարածված է եղել և պահպանվել մինչև ուշ

1 Հայսմավուրք, ԳՐ. ԽԼԱԹԵՑՈՒ խմբագրություն, Կ. Պոլիս, 1706, Հոտի ի, իգ, էջ ԾԽ:

միջնադար: Բացառված չէ, որ այնտեղ, ուր այսօր կանգնած է Աղջոց վանքը, եղել են Ստեփանոս քահանայի Աշխարհնորը, որոնց վրա էլ, հավանաբար, IV դարում կառուցվել է մի վկայարան: Այդ մասին նույնպես հիշատակումներ կան Հայսմավուրքներում: «Բազում քանոց բժշկին այժմ ի վանքն յայն Աշխարաց սրբոյն Ստեփանոսի»²:

Հիշյալ նախնական կառույցից այսօր ոչինչ չի մնացել: Սակայն, XIII դարում, բանուկ ճանապարհներից հեռու, նորովի հիմնադրված մենավոր վանքը մինչև այժմ էլ շարունակում է իր գոյությունը, բանուկ ճանապարհներից հեռու, առանց մարդու օգնության, դիմադրելով ժամանակի անողորմ ավերածություններին:

Իր հիմնադրման օրից այն հայտնի է «Աղջոց» անվանումով և որպես այդպիսին հիշատակվում է Վարդան Արևելցու մոտ: Պատմիչը գրում է նաև, որ Աղջոցում պահպանվել է «Սուրբ աջն Ստեփանոս քահանայի և սուրբ աջն Արիստակեսի՝ որդւոյն Գրիգորի սուրբ Լուսաւորչին»³: XIII դարի 70-ական թվականներին Արևելցին Երեմիա վարդապետի հրավերով այցելել է վանք, աշխատել այնտեղ ու ավարտել *Դանիէլի մեկնությունը*⁴: Իր հիշատակարանում նա գրում է. «Եւ սկսաք ի ՉԺԶ թու. ի սբ. Վիրապին, եւ կատարեցաւ ի ՉԺԷ առաջի սբ. եւ փառաւոր ճահատակիս սբ. Ստեփանոսիս ի սբ. ուխտս Աղջոց վանիցս, յառաջնորդութեան Երեմիայ գովելի ասպնջականի եւ գոհանայի եղբարց»:

Ժամանակի մյուս մատենագիրների մոտ վանքն այլևս չի հիշատակվում: Երկարատև ընդմիջումից հետո, XVIII դարում Միքայել Չամչյանը անդրադառնում է վանքի հետ կապված ավանդությանը, որը, իհարկե, դարերի ընթացքում ապրել է որոշ փոխակերպումներ: Նա գրում է. «...Ստեփաննոս քահանայն ի խմբէ անտի սրբոց Հոնիփսիմեանց շինեաց անդ վանս միաբնակեցաց, որ յետոյ կոչեցաւ Աղ-

2 Նույնը:

3 ՎԱՐԳԱՆ ԱՐԵՎԵԼՑԻ, Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, Փարիզ, 1960, էջ 143:

4 ԱՐԵՎԵԼՑՈՒՆ *Մեկնությունը*՝ այժմ Մատենադարանի թիվ 2019 ձեռագրի մասերից մեկն է, ինչպես նաև ներկայացված է առանձին ձեռագրերով, որոնք են N N 5452, 6089, 6938 և այլն: ԳԱՐԵԳԻՆ ՅՈՎՍԷՓԵԱՆ, *Խաղբակեանք կամ Պողտեանք հայոց պատմութեան մէջ*, Անթիլիաս, 1969, էջ 44:

ջոց վանք»⁵: Վանքը հիշատակելիս նույն ավանդապատումն է մեջբերում նաև Ղուկաս վարդապետ Ինճիճյանը⁶:

XIX դարի պատմիչները հիշում են վանքը, բարեբախտաբար, այլ առիթներով: Սիմեոն Երևանցին խիստ կարճատև տեղեկություն է հայտնում վանքի տիրույթների մասին⁷, իսկ Սարգիս Զալալյանը, մտաբերելով 1679 թ. երկրաշարժը, ի շարս այլ վայրերի հիշում է և Աղջոցը, որն ինչպես և Գեղարդը, ըստ նրա, «հիմնայատակ աներեցան վասն ծովացեալ մեղաց մերոց»⁸: Սակայն, թվում է, թե վերջինիս հաղորդած տեղեկությունները այնքան էլ չեն համապատասխանում իրականությանը: Աղջոց վանքը 17-րդ դարում, ամենայն հավանականությամբ, հիմնահատակ չի քանդվել. վնասվել են, հավանաբար, շինության որոշ մասեր, հատկապես գլխավոր եկեղեցու գավիթը և Պողոս-Պետրոս մատուռի ծածկը:

Առավել մանրամասն վանքին անդրադառնում է հմուտ հայագետ հայր Ղևոնդ Ալիշանը, սակայն դժբախտաբար նա ևս նկարագրությունից ու վանքի պատմությունից այն կողմ չի անցնում⁹:

Աղջոց ս. Ստեփանոս վանքը գիտական շրջանառության մեջ դնելու առաջին լուրջ փորձը ձեռնարկվել է Ռուսաստանի կայսերական հնագիտական արշավախմբի կողմից 20-րդ դարի սկզբին: Մինչ այդ, վանքը ըստ երևույթին գիտնական այցելուներ չի ունեցել: 1907-1908 թվերին Մոսկովյան կայսերական հնագիտական ընկերության առաջարկով Վ. Սիսոևը և Տարագրոս վարդանյանը, տեղում նրանց միացավ և Խաչիկ Դադյանը: Այս խումբը չափագրել, լուսանկարել է մի շարք հուշարձաններ, այդ թվում և Աղջոցը: Ծուրջ 53 արձանագրություն հրատարակված է Կովկասի հնագիտությանը վերաբերող նյութերի XIII հատորում¹⁰:

5 Մ. ՉԱՄՉԵԱՆ, *Պատմություն հայոց*, Վենետիկ, 1784, էջ 397:

6 ՂՈՒԿԱՍ ԻՆՃԻՃԵԱՆ, Տեառն Ղուկաս վարդապետի Ինճիճեան: *Ստորոգութիւն հին Հայաստանեաց, Մեծ Հայք*, ի Վենետիկ, 1822, էջ 268:

7 ՍԻՄԵՈՆ ԵՐԵՎԱՆՑԻ, *Զամբո*, Վաղարշապատ, 1878, էջ 291: (*Տե՛ս Գ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, Աշվ. աշխ. Յանելուած Ա, արձ. N 120*):

8 Ս. ԶԱԼԱԼՅԱՆՑ, *Ժամապարհորդութիւն ի մեծն Հայաստան*, Վաղարշապատ, 1878, մասն Բ. էջ 127: *Նույնն է վկայում և ԶԱՔԱՐԻԱ ՍԱՐԿԱՎԱԳԸ իր Պատմագրության մէջ*:

9 ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇՅԱՆ, *Այրարատ*, Վենետիկ, 1890, էջ 352-354, 360, 560-561:

10 *Материалы по археологии Кавказа*. Москва, 1916. выпуск XIII.

1918 թ. լույս տեսավ պրոֆ. Ստրժիգովսկու «Հայոց շինարարական արվեստն ու Եվրոպան» երկհատորյա աշխատությունը¹¹: Երկրորդ հատորում հեղինակը խոսում է ս. Ստեփանոս վանքի մասին և հիմնվելով ձեռքի տակ եղած լուսանկարների վրա՝ թուուցիկ ռճական վերլուծության ենթարկում բարձրաքանդակները¹²:

Աղջոց վանքին է անդրադարձել և հայ մշակույթի մեծ երախտավոր, գիտնական կաթողիկոս Գարեգին Հովսեփյանը իր «*Խաղբակեանք կամ Պողոսեանք հայոց պատմութեան մէջ*» հիմնարար աշխատության մեջ: Նրան ենք պարտական համալիրի պատմության, որպես հոգևոր կենտրոնի, խաղացած դերի համակողմանի ուսումնասիրությունը, ինչպես նաև արձանագրությունների, հնարավորինչ ասի, բարեխիղճ ընդօրինակումն ու ծանոթագրությունները: Հիմնվելով իր վերծանած արձանագրությունների վրա՝ Գարեգին Հովսեփյանը վանքի գլխավոր եկեղեցու շինարարության սկիզբը համարում է 1212 թիվը, ավարտը՝ 1217-ը¹³:

Համալիրի արձանագրությունների ուսումնասիրության ասպարեզում մեծ ավանդ ունի նաև վիճագրագետ Սուրեն Սաղումյանը. ի մասնավորի, նա վիճարկում է Գ. Հովսեփյանի կողմից առաջարկված եկեղեցու հիմնադրման թվականը, հավաստիացնելով, որ կաթողիկոսին չի հաջողվել ի մոտո ընթերցել շինարարությանը վերաբերող արձանագրությունը¹⁴: Բացի դրանից, Սաղումյանը վանքի գերեզմանոցում գտել է մինչ այդ անհայտ մի խաչքար. մանրատառ արձանագրությամբ, որը վկայում է վանքի գոյության ու գործունեության մասին դեռևս 1197 թվականին: Խաչքարի արձանագրության տվյալների վրա հիմնված Սաղումյանի վարկածը թվում է միանգամայն տրամաբանական: Հավանական է, որ 12-րդ դարի վերջերին այդ իսկ վայրում եղել է մի անշուք, հնամենի կառույց, անհարիր վանքի տերերի՝ երկրի քաղաքական կյանքում նոր հաստատվող ու վերելք ապ-

րող տոհմի՝ Զաքարյանների ճաշակին ու պահանջներին: Այս ժամանակաշրջանում էր, որ նրանց տիրությունը սկսեցին ընդարձակվել. ընդգրկելով նորանոր վանքեր ու ավաններ: Քեղվա ձորը, ուր գտնվում էին Աղջոց ու Վանատան վանքերը, նրանց իշխանության միայն մի՝ ոչ մեծ մասն էին կազմում¹⁵: Հավանական է, որ հենց այդ ժամանակ էլ սկսվեց վերակառուցվել Աղջոցի հին եկեղեցին: Սա հաստատվում է Սաղումյանի՝ շինարարական միակ արձանագրության վերընթերցմամբ, որը զետեղված է հարավային պատի ձախ անկյունում, Դանիելի հարթաքանդակից քիչ բարձր: Պակասող քարերի հայտնաբերման շնորհիվ (որոնց բացակայության մասին, ի դեպ, խոսում է և Գ. Հովսեփյանը) Սաղումյանին հաջողվում է մանրամասն ուսումնասիրել արձանագրությունը և նորովի այն մեկնաբանել:

Սաղումյանի փաստարկները հիմնվում են պատմական անցքերի, հիշատակվող հայտնի այն կարևորագույն անձնավորությունների պաշտոնավարման ու մահվան թվականների վրա, որոնց անունները ընթերցվում են նորահայտ երկու քարերի վրա¹⁶:

Արձանագրության առաջին տողը փաստում է, որ շինությունը կառուցվել է հայոց և վրաց սպարապետ Զաքարեի օրոք ՈԿԶ (1217) թվին: Մինչդեռ Զաքարեն մահացել է 1208 թվականին: Սաղումյանը գտնում է, որ թվական արտահայտող տառաշարի մեջ տեղի է ունեցել վրիպում, որը, ի դեպ, բացառիկ երևույթ չէ վիճագրերի ու նույնիսկ ձեռագրերի հիշատակարանների պարագայում¹⁷: Եվ որ ՈԿԶ-ի տասնավորը կարելի է սրբագրել *միակ հավանական տարբերակով՝ ՈՄԶ-ով*, այն է 1207 թվական, երբ և Զաքարեն էր ողջ, և մյուս հիշա-

15 Արատեսի վանքում պահպանվել է մի արձանագրություն, որ խոսվում է վասակ խաղբակյանի տիրությունների սահմանների մասին: Այն հետևյալն է. «Ես վասակ որդի Խաղբա... կողմնապահ ի Գառնոյ մինչև ի Բարգուշատ եւ առի զամրոցացիս եղեգեաց ձորոյս ազնութեմբն Այ ի հայրապետութե... տր Սարգսի և առաջնորդ վանացս եւ նոր աւանացս հաստատեցաք...», Տե՛ս Գ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, *Աշխ.* աշխ. էջ 19, 31. Յաւելուած Ա, էջ 299:

16 Ս. ՍԱՂՈՒՄՅԱՆ, *Աշխ.* աշխ.:

17 Իրոք, Դանիելի քանդակից աջ տեղադրված արձանագրության վերջին տողը «...Կաննի և Յուղայի մասնակից եղիցի եւ ՅժԺԸ հայրապետացն Նգովեսցի» (Տե՛ս, Գ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, *Աշխ.* աշխ. Յաւելուած Ա, արձ. թիվ 120) բանաձևի մեջ ՅժԺԸ թվային արտահայտության «ճ» տառը ավելորդ է, քանի որ առանց դրա ստացվում է 318, որը հայրապետների հաստատված, հայտնի թիվն է:

11 J. STRZYGOWSKI, *Die Baukunst der Armenier und Europa*. Wien, 1918. Band II. p. 812, 813. abb. 766, 767.

12 Վերը նշված աշխ. էջ 813:

13 ԳԱՐԵԳԻՆ ՅՈՎՍԷՓԵԱՆՅ, «*Խաղբակեանք կամ Պողոսեանք հայոց պատմութեան մէջ*», էջ 32, 226:

14 Ա. ՍԱՂՈՒՄՅԱՆ, «Պատմական մի հուշարձանի կառուցման հարցի շուրջը», *Պատմա-բանասիրական հանդես*, Երևան, 1986, թիվ 2:

տակվող անձը՝ Դավիթ Գ Արքայակաղնեցի կաթողիկոսը: Վերջինս մահացել է 1209 թվին:

Այսպիսով, գլխավոր եկեղեցու 1207 թվին հիմնադրված լինելը թվում է միանգամայն համոզիչ, մանավանդ որ հենց Աղշոց վանքի այլ արձանագրությունների տառային արտահայտություններում ևս դիտարկվում են նման վրիպումներ¹⁸:

Գավթի կառուցումը նախաձեռնվել է մոտավորապես մեկ և կես տասնամյակ հետո: Գ. Հովսեփյանը գտնում է, որ այն սկսվել է ոչ ավելի վաղ, քան 1222 թիվը և վերջնականապես ավարտվել, հավանաբար, 1234-ին: Ուրեմն, շինարարության սկզբի և ավարտի թվականները տեղավորվում են այս 10 - 12 տարիների տարբեր հատվածների մեջ¹⁹:

Տաճարի հյուսիսային կողմի պատին կից տեղադրված է Պողոս-Պետրոս փոքր եկեղեցին: Նրա մուտքի ճակատակալ քարին կա հագիվ ընթեռնելի մի արձանագրություն: Գարեգին կաթողիկոսը դժվարավ վերծանել է այն, քանի որ նախադասության սկիզբը դեղագիր է, իսկ շարունակությունը փորագրված և իմաստային առումով կիսատ: Այդուհանդերձ հնուտ վիմագրագետին հաջողվում է պարզել փոքր եկեղեցու շինարարության թվականը, 1270: Հիմնվելով վանքի այլ արձանագրությունների տվյալների վրա՝ Գ. Հովսեփյանը ճշտում է, որ Պողոս-Պետրոս եկեղեցու մուտքի կամարակալ քարի շինարարական արձանագրության մեջ հիշատակվում է Վասակը, Խաղբակաթոռը, Գրիգորի որդին, որի ժամանակ էլ կամ հենց նրա կողմից շինվել է եկեղեցին²⁰:

Այսպիսով, ըստ Գարեգին կաթողիկոսի, Աղշոց Ս. Ստեփանոսի բոլոր շինությունները պետք է համարել Խաղբակյան տոհմի Գրիգոր՝ Խաղբակյանի ճյուղի հովանավորության ներքո իրականացված կառույցներ²¹:

Այն հանգամանքը, որ հիշյալ ավատատիրական ընտանիքը ծագումով այս կամ մոտակա այլ գավառներից չէր, դժվարացնում է

նրանց կալվածքների սահմանների վերջնական ճշգրտումը: Հայ պատմիչների հաղորդած տեղեկությունները այդ տոհմի մասին նույնպես կցկտոր են: Առաջին անգամ Կիրակոս Գանձակեցին է, որ իվանե Աթաբեկի առաջնորդությամբ 1229 թ. Գանձակի մոտ վրացիների ու ղփչաղների միջև տեղի ունեցած ճակատամարտի կապակցությամբ, հիշում է այս ընտանիքին ու հատկապես «որդի Հաղբակայ» Գրիգորին, որը գերի ընկավ և ապա նահատակվեց հանուն հավատի: Ըստ պատմիչի, Խաղբակյանները Արցախի Խաչեն գավառից էին, «հաւատաւ քրիստոնէայք, ուղղափառք և ազգաւ հայ»²²: Նրանց մասնակցությունը պատերազմին վճռորոշ դեր խաղաց այդ տոհմի հետագա բարգավաճման հարցում: Խաղբակեանք, որ այնուհետև հայտնի դարձան Պոռշեանք անունով, Ջաքարյանների զորապետներն էին: Նրանք իրենց քաջությամբ ու անկոտրում կամքով նպաստեցին Իվանեին ու Ջաքարեին Հայաստանի բազում գավառների վերանվաճման գործում:

Գ. Հովսեփյանի հետազոտությունները ցույց են տալիս, որ Խաղբակյանների իշխանությունը բաղկացած էր մի քանի մեծ ու փոքր մասերից, սակայն փաստագրական նյութի սղության պատճառով ամենայն մանրամասնությամբ ուրվագծել դրա սահմանները՝ դժվար է²³: Այդ պատճառով նա նպատակահարմար է գտնում հիշյալ տոհմի մշակութային գործունեությունը լուսաբանել Խաղբակյանների կամ Պոռշյանների անվան հետ կապված այն հայտնի կենտրոնների կապակցությամբ, որոնք XIII դարի սկզբից նշանակալի դեր խաղացին համահայկական քաղաքակրթական կյանքի ոլորտում: Դրանք են՝ Կեչառիս, Գեղարդ, Թամահատի վանք, Սպիտակավոր Աստվածածին, Բոլորածորի անապատ, Կուրի և Ոճուպի վանքեր, Գլաձոր²⁴: Այս շարքը գալիս է լրացնելու Աղշոց ս. Ստեփանոսը, որը, ամենայն հավանակալությամբ, Խաղբակյանների մի ճյուղի հոգևոր կենտրոններից էր:

22 Նույնը, էջ 33, ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, Պատմություն հայոց, Երևան, 1961, գլ. ԺԲ, էջ 206:

23 Գ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, էջ 34:

24 Այրի կամ Գեղարդա վանքը ի սկզբանե Վասակ Խաղբակեանի իշխանության մեջ չէր մտնում. այն գնվել է հետագայում, նրա որդու՝ Պոռշ մեծ իշխանի կողմից. Գ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, *նշվ. աշխ.*, էջ 31:

18 Գ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, *նշվ. աշխ.* էջ 332, ծանոթագրություն:

19 Նույնը, էջ 229:

20 Նույնը, էջ 43, 229, հավելված Ա էջ 331, թիվ 124:

21 Նույնը, էջ 229:

Այսօր գրեթե ամբողջապես ավերված Վանստանը՝ տեղադրված Քեղվա ձորի հարավ-արևելյան կողմում, Աղջոց վանքի հետ միասին, Խաղբակյանների սեփականությունն էր²⁵: Իսկ Աղջոց ս. Ստեփանոսը, դատելով Գրիգոր Խաղբակյանի անվան հիշատակման հաճախականությունից, վայելել է իշխանի առանձնահատուկ հոգացողությունը: Թե որքան շուտ է եղել նրա մասնակցությունը վանքի կառուցման գործում, այնքան էլ պարզ չէ, քանի որ արձանագրությունները խիստ պակասավոր են: Այդուհանդերձ, ինչպես իրավացիորեն նշում է Գ. Հովսեփյանը, հենց միայն եկեղեցու ամենապատվավոր տեղում՝ մուտքի ճակատակալ քարի վրա Գրիգորի անվան հիշատակումը, նրան հատկացված պատարագների թիվը, խոսում են եկեղեցու կյանքում մեծ իշխանի խաղացած դերի մասին²⁶: Ընդհանրապես, նվիրատվական արձանագրությունները Խաղբակյան պայազատների և այլ բարձրաստիճան անձանց հիշատակումով, վկայում են, որ Աղջոց ս. Ստեփանոսը XIII դարում, հիրավի, Այրարատյան աշխարհի կարևորագույն հոգևոր կենտրոններից էր:

Սակայն, որքան էլ որ անսպասելի լինի, այդ հոգևոր կենտրոնից շատ քիչ ձեռագրեր են հասել: Թերևս, դրանք չեն դիմացել ժամանակի արհավիրքներին ու անհետ կորել են ասպատակությունների թողնուրդի մեջ, բայց հնարավոր է նաև, որ այս՝ Գեղարքունյաց լեռների մեջ թաքցված հեռավոր վանքում, գրչության արվեստը մեծ զարգացում չի ապրել ձեռագրական արվեստի կենտրոններից հեռու լինելու պատճառով: Դրա փոխարեն, զարմացնում է պատերի շարվածքի մեջ ազուցված կամ թե առանձին կանգնած մեծ ու փոքր, վարպետորեն կերտված խաչքարերի ներկայությունը: Մի հանգամանք, որ խոսում է քանդակագործական արվեստանոցի գոյության ու դրա աշխույժ գործունեության մասին այս շրջանում²⁷:

25 Նույնը, էջ 33, 34, 41:
 26 Գ. ՅՈՎՍԵՓԵԱՆ, *Նշվ. աշխ.*, էջ 43:
 27 Գ. ՀՈՎՍԵՓԵԱՆԸ խոսելով Քեղույայ ձորի Խաղբակեան տան սեփականություն լինելու մասին, հիշում է Իմիրզեբ գյուղի Վանստան վանքի ավերակների մեջ գտնված մի խաչքար, որի վրա գետեղված է մի արձանագրություն, ուր հիշատակվում է պր. Թաճերը, որը ըստ կայսրոհիկոսի պետք է որ լիներ ամիր Հասան Ա-ի որդու՝ Պոռչ իշխանի կինը: Այս Թաճերը կենդանի էր դեռևս 1307 թվին (Գ. Հովսեփյան, էջ 81): Աղջոց վանքում արևմտյան դռան կամարի գլխին գե-

ինչպես էլ որ եղած լինի, XIII-XIV դարերից որևէ ձեռագիր առ այսօր հայտնի չէ: XV դարից մեզ են հասել տարբեր բովանդակության մի քանի ձեռագիր մատյաններ²⁸: Վկայակոչենք դրանցից մեկի՝ 1442 թվին Գալուստ գրչի, կողմից գրված Ծաշոցի (Մատենադարան թիվ 939) հիշատակարանից մի հատված, պատկերացում տալու համար այդ ժամանակ Հայաստանում տիրող քաղաքական իրավիճակի մասին. «Աւարտեցաւ ածախաւս, մարգարէական եւ առաքելական հոգիարուխ այս տառ... ի հայրապ. հայոց տն. Կիրակոսի: Եւ յաշխարհակալութե. ըստ ներելոյն Այ. արիւնարբու գագանին Ջհանշահին: Չոր իբրեւ էառ զիշխանութիւն. եւ նստաւ յաթոռ առաջին աշխարհաշէն եւ բարէմիտ դանորէիցն սկսաւ սայ աւերել եւ տապալել զբազում քաղաքս և զգաւառս եւ ամայի եւ անմարդաբնակ արկանել, եւ ոչ ոք կարէ զչարութի. սորա ընդ գրով արկանել... Եւ ով կարէ զաղետ տարակուսանացս լեզուս պատմել, գոր եղել ի սոյն ամի ընդ ազգիս հայոց...»:

տեղված արձանագրության մեջ նույնպես հիշատակվում է Թաճեր անունը՝ որպես Սմբատի որդի Սևադայի ամուսին: Գ. Հովսեփյանը երկու Թաճերների նույնություն վրա չի պնդում, այլ գրում է, որ նույնության միտքը ծագում է «Քեղույայ ձորի Խաղբակեան տան սեփականություն լինելու պատճառով» (Նույնը, էջ 33): Վանստանի շինարարական արձանագրության մեջ հիշատակվում է Իվանէ Աթաբեկը, իսկ նվիրատվական մի այլ արձանագրության մեջ «ամիր սպասալար և աթապակ» Սադունը: Թե ինչ դեր է խաղացել Աղջոցից ոչ հեռու, նույն Քեղուայ ձորի հարավ-արևելյան մասում կառուցված Վանստանը XIII դարի հոգևոր կյանքում, դժվար է ասել: Ծիսությունից այսօր շատ քիչ բան է պահպանվել: Բայց և այնպես կարևոր, նույն անձանց անունների հիշատակումը երկու վանքերի արձանագրություններում հուշում է մեզ այդ անձանց ունեցած կարևոր դերի մասին երկու վանքերի կյանքում: Այդ են հաստատում և XX դ. վերջերին Հնագիտության և Ազգագրության ինստիտուտի արշավախմբի պեղումների արդյունքները: (Տե՛ս ASHKHARBEK KALANTAR. *The Medieval Inscriptions of Vanstan. Armenia*. Neuchatel, Paris 1999): Պեղումներից հայտնաբերված մի քանի քանդակագործ երկրորդը վկայում են կատարողական բարձր մակարդակի մասին թե՛ նախազարդերում, թե՛ պատկերաքանդակներում:

28 15-րդ դ. ձեռագրերը հետևյալն են. *Մանրումունք*, 1442 թ. (Մատենադարան N 769), *Ծաշոց*, 1442 թ. (Մատենադարան N 939), *Ավետարան*, 1442 թ. (Մատենադարան N 6342), *Ավետարան*, 1443 թ. (Մատենադարան N 10372), *Ավետարան*, 1452 թ. (Մատենադարան N 8409), *Ավետարան* 1471 թ. (Մատենադարան N 161), *Ավետարան*, 1447 թ. (տե՛ս Ալիշան, Այրարատ բնաշխարհ Հայաստանաց, Վենետիկ 1890. էջ 354) *Ավետարան*. Կ. Պոլիս Անտոնյան վանք N 95 (Տե՛ս Լ. ԽԱՉԻԿՅԱՆ, *Ժե դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, Երևան, 1955, մասն Ա, էջ 553: Վերոբերյալ բոլոր ձեռագրերի մասին, տե՛ս նաև Գ. ՅՈՎՍԵՓԵԱՆ, *Նշվ. աշխ.* էջ 232, 233:

XV դարում արդեն իշխանական ընտանիքների մեծ մասը կամ լքել էր հայրենի երկիրը կամ էլ ընդհանրապես դադարել գոյություն ունենալուց: Նույն ճակատագրին արժանացավ նաև XII-XIV դարերի համահայկական մշակութային կյանքի ճշմարտական դերակատարներից մեկը՝ Խաղբակյան-Պոռշյան ավատատիրական ընտանիքը, որի գործունեության՝ այսօր մեզ հայտնի վկաներից միայն մեկի՝ Աղջոց ս. Ստեփանոս վանքի մասին խոսք կգնա հաջորդ էջերում: XIV դարի կեսերից այդ տոհմը հետզհետե անկում է ապրում, կորցնելով իր հզորությունն ու ազդեցության նախկին շրջանակները, իսկ XVII դարում Պոռշյանների վերջին ճշմարտ շատավղի՝ Իսրայել Օրու մահվամբ իսպառ դադարում է գոյություն ունենալուց:

Իր ավարտին էր հասել հայոց միջնադարյան մշակույթի ստեղծագործական բռնկումներով հարուստ կարևորագույն փուլերից մեկը, որի շարժիչ ուժն ու ճաշակի իրավարարն էր տոհմական ազնվականությունը՝ իր հոգևոր Հայաստան ստեղծելու երազային ձգտումներով:

Իսկ ի՞նչ եղավ Աղջոց ս. Ստեփանոս վանքը, Չաքարյանների հավատի ու կենաց մենաստանը: 1679 թ. երկրաշարժից հետո այն ավերվեց, ապա վերականգնվեց: Դեռևս XVIII դարի կեսերին այստեղ գոյություն ուներ միաբանություն, ուրեմն և գործող վանք: Վերջին վանահայրը եղել է Մովսես վարդապետը: Սակայն լեզգիների երկրորդ արշավանքից հետո Աղջոցը վերջնականապես լքվեց ու հետզհետե քայքայվեց:

ԾԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Աղջոց ս. Ստեփանոս վանքը խճակրային միջուկով, բազալտե սալերի ագուցմամբ կառուցված մի շինություն է: Այն բաղկացած է երեք մասից՝ գլխավոր եկեղեցուց, գավթից և հյուսիսային կողմից եկեղեցուն հարող Պողոս-Պետրոս մատուռից:

Գլխավոր եկեղեցին կիսավեր վիճակում է: Գմբեթը հիմնովին կործանված է ու միայն թմբուկն է, որ դեռևս խախտված չէ: Այն հենված է առագաստների վրա, դրանց վերին եզրերին: Կիսաշրջանաձև, գմբեթակիր կամարները հանգչում են շրջանաձև կտրվածքով որմնասույների վրա: Եկեղեցու հատակագիծը ներգծված խաչ է՝ չորս անկյունային սենյակներով: Արտաքինից կառույցը ուղղանկյուն է: Հատակագծի չափերն են՝ 9,25×6,76 մ:

Աբսիդի բացվածքը հմտորեն մշակված մի կատարյալ կիսաշրջան է: Գմբեթից այն բաժանվում է երկու ուլիեֆ կիսագլաններից կազմված գոտիով, որոնց միջև ընկած տարածությունը ծածկված է իրար հաջորդող շեղանկյունաձև և շրջանաձև նախշերով: Սրանց վերի՝ հարթ երիզի վրա պատկերված են ավելի փոքր, սեղմ ուրվանկարով կիսաշրջաններ, կենտրոնում՝ զնդիկներ: Այս նույն մոտիվը շարունակվում է արսիդի գոտու վրա և այնուհետև վերածվում որմնասյուների զարդանախշի մի տարրի:

Աբսիդի պատի դեպի վար տարածվող հարթության վրա տեղադրված է կիսաշրջանակների մեջ քանդակված վարդյակների մի շարք: Աբսիդի երկու կողքերին տեղավորված որմնասյուների վերնասալերը ծածկված են հայ ճարտարապետության մեջ հաճախակի հանդիպող, բարդ ուրվանկար ունեցող մի զարդով՝ այն է, եռանկյունաձև, կտրտված եզրերով տերևիկներ: Գմբեթարդի կենտրոնում քանդակված է ձգված համաչափություններով մի նրբագեղ խաչ:

Աբսիդի ներքին հարթության աջ և ձախ կողմերում տեղադրված են երկու օժանդակ ուղղանկյուն խորշեր, երիզված հստակ ուրվանկար ունեցող հյուսկեն գարդաքանդակներով: Բեմի ճակատային մասը կազմված է տասնվեց նախշազարդ սալիկներից, որոնցից միայն մեկն ունի պատկերաքանդակ: Մնացածների վրա, ութանկյուն աստղերի մեջ, քանդակված են թռչուններ, վարդյակներ և այլ զարդեր: Տարբեր չափի և ձևի բազմաթիվ խաչեր զարդարում են եկեղեցու պատերը:

Գավիթը բուն եկեղեցու շարունակությունն է արևմտյան կողմից: Այն ուղղանկյուն է, ժամանակին հավանաբար ունեցել է երկու մուտք: Արևմտյան կողմի մուտքը, դատելով շինության հատակագծի չափերից, մոտեցել է ուղղակի ժայռի եզրին, որտեղից գեղեցիկ տեսարան է բացվում դեպի հովիտն ու շրջակա լեռները: Այսօր մասամբ կանգուն են գավթի հարավային և հյուսիսային պատերը: Հյուսիսային կիսաքանդ պատի վրա երևում են մուտքի հետքեր՝ կիսով չափ կանգուն կամարով, որի վրա նշմարելի է ոմն Խաչիկի արձանագրությունը:

Պողոս-Պետրոս փոքրիկ եկեղեցին հյուսիսային կողմից անմիջապես հարում է գլխավոր եկեղեցուն: Այն շատ ավելի վատ է պահպանված, քան բուն տաճարը: Ծածկույթի հետքն անգամ չկա: Պատերը պահպանվել են գետնից ընդամենը 1-1,5 մ բարձրության վրա: Աբսիդի երկու կողմերում տեղավորված են մեկական ավանդատուն: Հարավային թևի վրա կա ևս մեկ մուտք, որը տանում է դեպի մի շատ փոքր սենյակ: Նմանատիպ մի սենյակ բացված է ուղղակի հարավային պատի վրա: Աբսիդին հարող սենյակի մուտքի կամարակալ քարը առնված է բավականին լայն շրջանակի մեջ, որը մշակված է հմտորեն ոճավորված, եռանկյունիներ հիշեցնող, բուսական զարդաքանդակներով: Իսկ կենտրոնում ուշագրավ ուրվանկարով մի բարձրաքանդակ է. դժբախտաբար, այն այնքան է մաշված, որ նախշի մանրամասները բոլորովին կորցրել են իրենց հստակությունը: Իր ամբողջության մեջ այդ զարդը հիշեցնում է հավերժության նշան, կենտրոնում վարդյակ կամ դեմք: Աբսիդի շարունակությունը կազմող նույն պատի վրա տեղադրված է ևս մի մուտք, որն ունի հարթ, առանց որևէ զարդանախշի, թեթևակի սլաքավոր բարավոր:

Բեմի ճակատային հատվածը ծածկված է երկու խոշոր սալերով, որոնց վրա, կիսակամարների տակ, քանդակված են խաչեր: Արևելյան և հյուսիսային պատերի հատման կողմնասում, մոտավորապես մեկ և կես մ բարձրության վրա, տեղավորված է մի ուղղանկյուն քար՝ շթաքարային փոխանցումներ հիշեցնող նրբագեղ զարդաքանդակով: Դրսից վեց աստիճաններ տանում են դեպի եկեղեցի: Մուտքի բարավորի վրա գետեղված է հազիվ ընթեռնելի մի արձանագրություն, որն ըստ Գ. Հովսեփյանի վերաբերում է մատուռի շինարարությանը²⁹: Կրկնակի որմնասյուների վրա հանգչող այս քարը երիզված է սլաքաձև կամարով: Մուտքը երկու կողմերից շրջանակող կողերը ծածկված են ռեյիեֆ խաչերի անընդմեջ շարքով: Անմիջապես դրանից հետո տեղավորված են իրենց չափերով ու ոճով բացառիկ Պողոս-Պետրոս առաքյալների հարթաքանդակները: Եկեղեցու արևելյան և հյուսիսային պատերը արտաքին կողմում որևէ զարդաքանդակ կամ արձանագրություն չունեն:

29 Գ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, *Աշխ.*, էջ 43: Աղբյուր վանքի ճարտարապետության վերաբերյալ տե՛ս PAOLO CUNEO, *Architettura Armena*. Roma, 1988, t. 2, p. 119. Н. ТОКАРСКИЙ, *Архитектура Армении IV-XIV вв.* Ереван, 1961, стр. 341, Х. О. ХАЛПАХЧЯН, *Архитектурные ансамбли Армении, VIII в. до н. э. до XIX в. н. э.* Москва, 1980.

ՔԱՆ ԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Մոտավորապես երկու հարյուրամյակ տևող երկարատև ընդմիջումից հետո, 10-րդ դարում հայոց եկեղեցիները նորից սկսեցին ծածկվել զարդաքանդակներով: Ծարտարապետության ու քանդակագործության սինթեզը շարունակվում էր իրականացվել հին, ավանդական կանոնների համաձայն: Քանդակապատ մակերեսները ճարտարապետական համատեքստում գրավում էին միանգամայն որոշակի տեղ՝ զարդարելով պատուհանների քիվերը, խոյակների երեսները, երբեմն մուտքերի բարավորները, երբեմն էլ հարթ մակերեսի որևէ հատված: Դիտարկել դրանք շինության ամբողջական մարմնից դուրս, որպես յուրահատուկ մտածողության արդյունք, անիմաստ է: Միայն XIII դարի 70-ական թվականներից, այն էլ բացառիկ դեպքերում, Հայաստանում քանդակի մշակման մարզում դիտարկվում են նոր ոճի նախանշաններ: Սա վերաբերում է հատկապես անտրպոմորֆ քանդակին, որի ներկայությունը բավականին մեծ թիվ կազմող հուշարձաններում ոգևորիչ է, բայց սահմանափակ թեմայի ընտրության տեսակետից: XIII- XIV դարերի քանդակային համակարգի հիմնական կերպարներն էին Հիսուս Քրիստոս, Մարիամ Աստվածածին, ինչպես նաև վերջին դատաստանը տարբեր պատկերագրական հորինվածքներով: Իր տեսակի մեջ բացառիկ օրինակ է Ամաղու Նորավանքի Հովհաննես Նախակարապետի եկեղեցու պատուհանի բարավորի հարուստ իմաստաբանությամբ հագեցված «Հինավուրցի» պատկերաքանդակը³⁰: Մինչդեռ աշխարհիկ պատկերներ ի տարբերություն հայկական վաղ միջնադարի խիստ սակավ էին³¹: Միայն մեկ

անգամ մեզ հայտնի հուշարձաններից՝ Թանահատի վանքի հյուսիսային մուտքի ճակատակալ քարի վրա է, որ պատկերվում է որսի տեսարան, մի հանգամանք, որն արժանի է հատուկ ուսումնասիրության:

Արդյոք միայն հայոց եկեղեցու պահպանողականությամբ է բացատրվում այլոթների ընտրության նման սահմանափակությունը: Մասամբ այո, բայց ոչ լիովին: Հայտնի է, որ վաղ միջնադարից սկսյալ քրիստոսաբանության առանցքը հանդիսացող Մարիամ կույսն ու նրա Միածին Որդին դավանաբանական վեճերի շարժառիթ են եղել հայոց և կաթոլիկ եկեղեցիների միջև: Միջնադարյան մշակույթը իր «հոգե-մտավոր» կառույցով չէր կարող անտարբեր մնալ միջեկեղեցական այդ խնդիրների նկատմամբ: XII-XIII դարերում դավանաբանական միտքը Հայաստանում և Կիլիկիայում, թերևս ավելին քան երբևէ, կենտրոնացած էր քրիստոսաբանության հետ կապված խնդիրների վրա: Դա մի ժամանակաշրջան էր, երբ միարարության վտանգը հատկապես սպառնալի էր հայ առաքելական եկեղեցու համար: Կիլիկիայի հայկական թագավորությունում այս վեճերը վարվում էին ավելի ճարպիկ դիվանագիտական մակարդակով, մինչդեռ մայր երկրում դրանք շատ ավելի ճակատային էին ու վճռական³²: Թվում է, թե պատկերագրական թեմաների ընտրությունը Հայաստանում պայմանավորված էր նաև դավանաբանական այդ խնդիրների լրջությամբ: Հայոց եկեղեցին հաճախ դիմում էր արվեստի օգնությանը իր տեսակետներն արտահայտելու համար: Դրա ակնհայտ հաստատումն է Ամաղու Նորավանքի քանդակախումբը Հինավուրցի պատկերով, որն իր խորախորհուրդ իմացքով համահունչ է հայոց եկեղեցու դավանաբանությանը³³:

մեջ պատկերված սրբերի կողքին, ականատես ենք աշխարհիկ թեմաների հայտնվելուն», – գրում է Ս. Տեր-Ներսեսյանը, հիշատակելով Մրենի, Պողոսի, Զվարթնոցի, Դվինի, Քասախի քանդակները: Տե՛ս S. DER HERSESSIAN, «L'art arménien». *Etudes byzantines et arméniennes*. Louvain, 1973, t. I, p. 497, 498.

32 Կլոդ Մորթաֆյան, *Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում*, Երևան, 2001, էջ 404:

33 S. DER HERSESSIAN, « Deux tympanes sculptés arméniens datant de 132 ». *Cahiers Archéologiques*. Paris XXV, p. 109-122. TH. F. MATHEWS, «The Annunciation at the Well: A Metaphore of Armenian Monophysitism. In: *Medieval Armenian Culture, T. Samuelian and M. Stone*, University of Pennsylvania Armenian Texts and Studies. Chicago. CA: 1983 p. 343 to 356.

30 S. DER-NERSESSIAN, « Deux Tympanes sculptés arméniens datant de 132 », *Cahiers Archéologiques*, XXV. Paris 1976.

31 «Կրոնական թեմաների, հրեշտակների, Քրիստոսի և կանգնած մեղալիքների

Քրիստոնեական եկեղեցին ինչպես նաև հայկականը սովորաբար տեղադրվում է արևելք-արևմուտք ուղղությամբ: Նման կողմնորոշումը խորհրդանշում է արևածագն ու արևամուտը, երևույթներ, որոնց զգացումը ի վերուստ իր մեջ կրում է մարդը և որոնք նոր հավատի ու Տիեզերքի միջև եղած կապի բազմաթիվ ու բազմազան թելերից են: Ըստ այդմ էլ արևելյան ճակատը համարվում է եկեղեցու ամենակարևոր կողմը՝ գլուխը, ուր ծագում է արևը: Արևելյան կողմում է արևիդը, որտեղ ընթանում է ծիսակատարությունը, փառաբանվում է Աստված: Ըստ վաղուց սահմանված հասկացությունների, սա է Աստուծո տաճարը, իմացության շտեմարանը, որտեղից նրա իշխանությունը տարածվում է Տիեզերքով մեկ, կարգավորում մարդկային գործունեությունը³⁴:

Խորհրդանշական այս հարուստ համակարգը ինքնին, արևելյան կողմը դարձնում է ինքնաբավ: Իսկ հայկական եկեղեցու պարագային այն սովորաբար ծանրաբեռնված չէ զարդարարական տարրերով: Աղջոց վանքի գլխավոր եկեղեցու արևելյան պատին չկա որևէ արձանագրություն, միայն անհրաժեշտ խորհրդապաշտական տարրերն են, որ պատկերված են այստեղ: Սա հաղորդում է պատին մի առանձնահատուկ կոթողայնություն, որը հիշեցնում է հայ ճարտարապետության վաղ շրջանի հուշարձանները: Պատի միօրինակությունը խախտում են երկու հովհարաձև վեղարներով որմնախորշեր: Հովհարի յուրաքանչյուր գլանիկ ավարտվում է նրբագեղ բուսական ճախշով: Պատի կենտրոնում, լուսամուտից վեր տեղադրված է մի խոշոր վարդյակ-սկավառակ՝ կարծես ամրաձուլված պատի հարթությանը: Այս սկավառակը, առանձին վերցրած, խորհրդանշում է Տիեզերքը: Այստեղ՝ եկեղեցու պատի վրա այն խորհրդանշում է Տիեզերքի և Եկեղեցու միջև (որպես Աստուծո տաճարի) գոյություն ունեցող հոգևոր կապը՝ արտահայտված բազմապիսի գաղտնատեսական ճախշերով: Դիտողի աչքը, սահելով սկավառակի մակերեսի վրայով, փնտրում է այդ ճախշերի հանգուցակետը: Բայց այն մեկը չէ, դրանք բազմաթիվ են, անսկիզբ ու անվախճան³⁵:

34 *Symbolisme cosmique et monuments religieux*, Paris 1953, p. 79. E. MAI.E. *L'art religieux du XIIIes. en France*. Paris, 1958, p. 35, 36.

35 Նման վարդյակ սկավառակներ հանդիպում են դեռևս 5-րդ դարում, Երեբունյքում,

խորշերի երկու կողքերին տեղադրված են ավանդատները լուսավորող երկու ճեղ լուսանցքներ՝ պսակված չորս շարք նրբագեղ կամարներով: Առաջին հայացքից աննշան թվացող այս մանրամասնը իր խորքում թաքցնում է որոշակի խորհրդանիշ: Նույնատիպ չորս կամարներ մենք տեսնում ենք V-VI դարերով թվագրվող Երեբունյքի

Արփայի եկեղեցու կամարակապ ուղղանկյուն քարի վրա, Աթենիում (VII դ.) Տաթևում, Գեղարդում, Կեչառիսում: Նմանատիպ սկավառակներ շատ տարածված էին և իսլամական արվեստում IX դ. սկսած: Տե՛ս CLAUDE HUMBERT, *Islamic Oornamental Design*. London, Boston 1980: Ի դեպ, Տաթևի տաճարում հիշյալ սկավառակը տեղադրված է տաճարի արևելյան կողմի հյուսիսային խորշի նախազարդ երեսակալի վերին մասում: Անմիջապես դրանից վար երեսակալի կենտրոնում պատկերված է նրբորեն մշակված մի դիմաքանդակ. հավանաբար, կանացի (?): Մրան, ուղղակի ականջներին, երկու կողմից մոտենում են օձեր՝ երախները բաց, լեզուները հանած: Այս նույն պատկերաքանդակը կրկնվում է նույն կողմի հարավային խորշի երեսակալի վրա. այս անգամ արդեն առանց սկավառակի: Նշենք, որ նույնատիպ պատկերաքանդակներ կան հյուսիսային և հարավային ճակատների լուսամուտների երեսակալների վրա: Ժան-Միշել Թիերին, Տաթևի արևելյան կողմի հյուսիսային խորշի վերի պատկերը մեկնաբանում է որպես իրանական բանահյուսությունից հայտնի բոճապետ Ջահհակի կերպարի փոխառություն կամ Գրիգոր Լուսավորչի ճեստ կապված առասպելի անդրադարձ (Տե՛ս P. DONABEDIAN, J.-M. THIERRY, *Les arts arméniens*. Paris, 1987, fig 57)՝ մոտանալով մանատիպ մյուս երեք դիմաքանդակները, որոնցից միայն մեկն է, որ պատկերված է հարավային կողմում և իր կողքերին չունի օձերի պատկերներ: Ստ. Մճացականյանը այս չորս դիմաքանդակները դիտարկում է որպես տաճարի շինարարությանը հատկապես մեծ մասնակցություն ցուցաբերած իշխանների պատկերներ: Տե՛ս Ս. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ, *Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը*, Երևան, 1960, էջ 206-211: Այս վերջին վարկածը նույնպես մեզ քիչ հավանական է թվում, թեև կոտորների պատկերման ավանդույթը Սյունիքում վաղուց ի վեր գոյություն ուներ: Բավական է հիշել Սիսիանի գմբեթի ներսի կողմի Թեոդորոս Սիոնի վանականի, ինչպես Կոհագատի, եսիկեսոսու Հովսեփի կիսանդրի քանդակները, որոնք իրոք օժտված են անհատական մանրամասներով: (Տե՛ս DONABEDIAN, J.-M. THIERRY, *Les arts...* fig. 209, 210, 211): *Տաթևի պատկերները, սակայն, իրենց խիստ ընդհանրացված կերպարանքներով, և չորսից երեքը* կողքերին օձերով, ավելի շուտ ընկալվում են որպես «չարը խափանող» ճշաններ, քան որևէ այլ բան: (Տե՛ս J. P. MAHE, *Origène et la baleine. Un fragment pseudo-origénien sur Job et le dragon, en traduction arménienne*, REArm, XIV, 1980): Տաթևի վանքը 10-րդ դարում այդտեղ հավաքված մտավորականների մակարդակով յուրահատուկ էր: Հայտնի է, որ եկեղեցու զարդարման վրա աշխատել են արևմտյան վարպետներ: Ուրեմն և հնարավոր է, որ արտաքին ազդեցությունների ներքո Տաթևում երևալին այսպիսի՝ ավանդականից շեղված պատկերագրական սխեմաներ, որոնք Հայաստանի մյուս վայրերում չկային: Տե՛ս Պատմության հանգիստ Սիսիան, Ստ. Օրբելյան, Փարիզ, 1859, էջ 302:

բազիլիկայի հարավային կողմի մուտքի բարավորի վրա, ուր կենտրոնում պատկերված է խաչ՝ մեծ շրջանակի մեջ, երկու կողքերին կենաց ծառեր: Խաչերն ու կենաց ծառերը միասին թվում է, թե ուղակիորեն ակնարկում են Խաչելությունն ու Հարությունը: Աղջոցում չորս կամարները հիշեցնում են Դրախտի չորս գետերը, որոնք իրենց բարեբեր ջրերով ոռոգում են աշխարհի չորս կողմերը: Այս խորհրդանիշը հաճախ զուգորդվում է նաև չորս ավետարանների հետ, որոնք էլ իրենց քաղցրաբարո խոսքերով սնուցանում են մարդկային հոգիները:

Այսպիսով, Աղջոցի արևելյան ճակատը իր խորհրդապաշտական նշանակությամբ ակնարկում է դրախտը, ուր և տեղի ունեցավ նախնական Մեղքը: Այն ողջ համալիրի պատկերագրական ծրագրի բանալին է, որն այնուհետև կբացահայտվի մանրամասներով, մինչև իր իմաստաբանական ավարտը, որի վերջին, եզրափակիչ իրադարձությունը՝ *Ահեղ դատաստանը* պատկերված է արևմտյան ճակատին:

Հարավային կողմը խորհրդանշում է փրկության գաղափարը, և ներկայացնում Աստուծո Շնորհի ազդեցության տակ գտնվող ժամանակաշրջանը:

Աղջոց վանքում հարավային ճակատի քարերը մասամբ ավերված են կամ կորած: Այդ պատճառով արձանագրությունների վերծանումը Գարեգին Հովսեփյանը համարում է թերի³⁶: Այս պատի ձախ կողմի վերին մասում է գետեղված Իվանե Աթաբեկի արձանագրությունը՝ վանքին նրա մատուցած հողային նվիրատվության մասին, հանուն իր և որդու՝ Ավագի երկարակեցության: Նույն պատին է փորագրված և Աբել վարդապետի, վանքի առաջնորդի արձանագրությունը, որից տեղեկանում ենք, որ նա Իվանե Աթաբեկի իշխանության ժամանակ կառուցել է եկեղեցին³⁷:

Իվանեի արձանագրությունից աջ, խորանը լուսավորող փոքր պատուհանի վերևում է գտնվում *Դանիելը առյուծների գրում* ոչ շատ մեծ հարթաքանդակը: Դանիելը այստեղ պատկերված է Օրանտի ավանդական դիրքով, ոտքերի մոտ մարմինները հորիզոնական

ձգված հնազանդ առյուծներով: Նրա ուսերին հստակորեն երևում է ուսափոկը: Պատուհանի երկու կողմերում տեղավորված են մեկական աղավնի՝ կտուցները դարձրած դեպի հյուսածո, բավականին հողմահարված զարդաքանդակը, որն ըստ երևույթին ժամանակին ներկայացրել է խիստ ոճավորված մի սկահակ կամ գավաթ: Կենտրոնում տեղադրված է ավելի մեծ մի պատուհան, որի շրջանակը ծածկված է հյուսկեն նախշով: Անմիջապես պատուհանի տակ արևի ժամացույցն է:

Գլխավոր եկեղեցու հյուսիսային ճակատին է հարում կից եկեղեցու հարավային պատը: Ծինարարական այս հնարանը՝ թելադրված տեղանքի դիրքով, ճարտարապետի վարպետության շնորհիվ օժտվել է որոշակի իմաստային հագեցվածությամբ: Հայտնի է, որ քրիստոնեության կողմից որդեգրված տիեզերական պատկերացումների համաձայն հյուսիսային կողմը նախանշում է մարդկության խավարի մեջ գտնվելու ժամանակները, և հատկացվում է Հին կտակարանային թեմաների պատկերմանը, իսկ հարավայինը՝ աստվածային շնորհի ոլորտում գտնվող փրկության հետ կապված սյուծեների: Չեզոքացնելով գլխավոր եկեղեցու հյուսիսային պատի արտաքին մակերեսը՝ դրան անմիջականորեն հավող փոքր եկեղեցու հարավային պատով, ճարտարապետը կառուցողական խնդիրը լուծել է՝ հաղորդելով պատին սիմվոլիկ նշանակություն, այն է՝ խավարի մերժում. այս գաղափարը ընդգծվում է եկեղեցու հարավային կողմի վրա բացված, դեպի երկու փոքր սենյակները տանող մուտքերով, որոնցից մեկի՝ այն, որ ուղակիորեն փորված է արսիդի հարավակողմում, դրան կամարակալ քարի կենտրոնում գետեղված է մի նշանակ: Վերջինս բավականին հողմահարված է, բայց և այնպես ուշադիր զննողը կնկատի միջնադարում տարածված մի հետաքրքրական հորինվածքի հետքեր: Այն իրենից ներկայացնում է մի բոլորակ, ներքմաստում երկայնակի, օձաձև ուռուցիկ նախշերով, որոնք գետեղված են կենտրոնում պատկերված վարդյակի կամ, որ քիչ հավանական է, մարդկային դիմապատկերի շուրջ: Եթե այս վարկածը ճիշտ է և այս փոքրիկ հարթաքանդակը մտածված է եղել որպես հավերժության խորհրդանիշ, ապա նրա տեղադրումը արսիդի հարավային թևի վրա պետք է որ հետապնդեր որոշակի իմաստ: Արդյոք այն չի խորհրդանշում

36 Գ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, *Նշվ. աշխ.* էջ 225, 226:

37 Նույնը, էջ 226:

հյուսիսից թափանցող, չարը մարմնավորող խավարը, որը ցրվեց ու անհետացավ Փրկչի գալուստով. *Մազեաց ի խաւարի լոյս ուղղոց, ուղորմած, գթած եւ արդար է Տէր* (Սաղմոս ԾԺԱ, 4-5): Նշենք, որ նույն այդ հարավային պատը հատվում է փոքր եկեղեցու արևմտյան կողմի այն հատվածի հետ, որի արտաքին մասում պատկերված է հեթանոսներին դարձի բերող Պողոս առաքյալը:

Գլխավոր եկեղեցու արևմտյան ճակատի, մուտքի կամարակալ քարը ամբողջապես մշակված է ու ներկայացնում է քանդակի և արձանագրության միասնության՝ հասուն միջնադարում հազվադեպ հանդիպող մի ամուշ: Բարավորի հարթությունը զբաղեցնում է *Վերջին դատաստանի* պատկերը, իսկ ավելի ճշգրիտ վերջին դատաստանի առաջին դրվագը ըստ Հովհաննո Հայտնության Դ գլխի. գահավորակին բազմած է Քրիստոսը, աջ ձեռքին *գիրք՝ գրված ներսից ու դրսից կնքած յոթը կնիքով*: Թեև քանդակը բավականին վնասված է ու հողմահարված, բայց այժմ էլ Քրիստոսի երկու կողմերում կարելի է նշմարել 12-ական երեցների դիմահայաց պատկերները:

Վերջին դատաստանի քանդակապատկերի տակ, ճակատակալ քարի ներքևի եզրին գետեղված է Գրիգոր Խաղբակյանի արձանագրությունը, ուր նա ասում է, թե օգնել է «եկեղեցույս բազում արդեամբք»:

Բարավորի վերի մասն ավարտվում է արմավենիկների գոտով, վարի մասում երկրաչափական նախշ է, եզրագիծը հանգչում է զույգ որմնասյուների խոյակների վրա, որոնց երեսի 3/4-ը ծածկված է հյուսկեն գարդով, իսկ մնացած մասում բացառիկ վարպետությամբ ու նրբագեղությամբ, որպես Սուրբ Հոգու խորհրդանշան, քանդակված է գլխիկը դեպի վար մի աղավնի: Մուտքը պարփակված է ձվաձև նախշերով պատած ուղղանկյուն գոտով: Արևմտյան ճակատին կան բազմաթիվ մեծ ու փոքր խաչքարեր: Մուտքից դեպի ձախ, պատի մեջ ագուցված է Աբել վարդապետի խաչքարը, որը վանքի հիմնադրման ժամանակ եղել է միաբանության առաջնորդը:

Մեր ուսումնասիրության առարկան՝ Աղջոց ս. Ստեփանոսը, հայկական հասուն միջնադարից մեզ հասած այն բացառիկ հուշարձաններից է, ուր վաղ քրիստոնեական պատկերագրության որոշ տիպեր պահպանվել են իրենց նախնական անաղարտությամբ: Այս տեսան-

կյունից ս. Ստեփանոսը հիշեցնում է X դարում կառուցված իր փառահեղ նախորդին՝ Աղթամարի ս. Խաչ եկեղեցուն: Մանրանկարչության կապակցությամբ վաղուց հայտնի այն միտքը, թե քրիստոնեական սկզբնատիպերը իրենց առավել անխաթար արտացոլումն են գտել հայ արվեստում՝ գոյատևելով մինչև ուշ միջնադար³⁸, այս դեպքում էլ հաստատվում է քանդակագործությամբ:

Բացի դրանից, Աղջոց վանքը մեր տեսադաշտում գտնվող քանդակազարդ հուշարձաններից առաջինն է, ուր, գեղագիտական մտածողության հետ կապված, նորարարական միտումները ինչ-որ չափով իրական մարմնավորում են ստանում՝ արտահայտվելով փոքր եկեղեցու մուտքի երկու կողմերում գետեղված Պողոս, Պետրոս առաքյալների քանդակապատկերներում: Ավանդականն ու նորը այստեղ անմիջականորեն մեր առջև են, դյուրին բաղդատելի: Մուտքի աջ կողմում գետեղված է Պետրոս առաքյալի քանդակապատկերը՝ աջ ձեռքին բանալի կողպեքով, ձախը դեպի վեր բարձրացրած: Ձախ կողմում Պողոսն է՝ երկարամազ և մորուքով, աջ ձեռքով նա կարծես մատնացույց է անում Պետրոսին, ձախը հպված է կրծքին: Երկուսն էլ մարդահասակ են (1, 68 սմ և 1,70 սմ):

Ինչ վերաբերում է համալիրի հարթաքանդակների թեմատիկ շարքին, ապա XIII դարի 70-ական թվականներին Պողոս, Պետրոս առաքյալների քանդակապատկերների կերտումով այն ընդարձակվում է՝ ձեռք բերելով պատկերագրական ծրագրի արժեք: Հին կտակարանային մարգարեների կողմից կանխագուշակված փրկության գաղափարը ենթադրում էր երկար ճանապարհ, որը պետք է հաղթահարվեր: Նոր աշխարհի հանուն հավատի նահատակների չարչարանքներն ու մարտիրոսությունը այդ ճանապարհի հանգուցային դրվագներից են, որոնք հաստատում են այդ՝ մեկ անգամ ևս ամրապնդելով երկու կտակարանների խորհրդանշական, վերժամանակյա կապը:

38 BAUMSTARK, *Eine Gruppe illustrierter armenischer Evangelien-Bücher des XVII und XVIII Jh. in Jerusalem*. Leipzig, 1911.

ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աղջոց վանքի կառուցապատման տարբեր ժամանակահատվածներում կերտված պատկերաքանդակները ընդամենը երեքն են. Դանիելը առյուծների գրում, Ահեղ դատաստանը և ապա Պողոս, Պետրոս առաքյալների մարդահասակ քանդակապատկերները: Վերջիններս ստեղծվել են Դանիելի և Ահեղ դատաստանի հարթաքանդակներից մոտավորապես հիսուն տարի հետո, 60-ական թվականների վերջին, մատուռի մուտքի ձևավորման կապակցությամբ: Այս հանգամանքն ինքնին ենթադրում է մի նոր ազդակի հայտնվելու մասին: Այլապես, դժվար է պատկերացնել, որ ժամանակային այդքան մեծ ընդհատումից հետո, գլխավոր եկեղեցուն կից, այսօր, բավականին անհարմար թվացող տեղանքում, հիմնադրվեր XIII դ. արվեստի համար անսովոր, քանդակապատկերներով ճշանակալի մի փոքր եկեղեցի: Նախաձեռնողն ու ոգեշնչողը, կարծում ենք, պատվիրատուն էր, Վասակը՝ «Թոռն Ղաղբակայ, որդի Գրիգորոյ ի Աեղ... ժամանակ»: Զաքարյան եղբայրներն այլևս չկային. նրանց փոխարինած, ազգակից տոհմի ներկայացուցիչ Վասակը, ի նշան իր նախորդների վարած մշակութային գործունեության շարունակականության և տոհմի հարատևության, ձեռնարկեց նոր եկեղեցու շինարարությունը: Այս պարագայում նրա համար պետք է որ շատ կարևոր լիներ Վարդան Արևելցու ներկայությունը վանքում, որի գիտելիքներից ու լայն մտահորիզոնի առկայությունից խելամտորեն օգտվեց Վասակը, Վարդան Արևելցու անվան հետ անմահացնելով և իր անունը՝ որպես իշխանության ժառանգորդի ու նորարարության շատագույի: Նրան քաջ հայտնի էր Վարդանի վայելած հեղինակությունը. երևելի գիտնական, որի մասին ժամանակակիցներն ասում էին. «...Փառք և պարծանք Այրարատեան գաւառիս եւ իբրեւ զարեգակն փայլէր յաշխար-

հի սքանչելի այրն ԱՄյ եւ մեծանուն հոեւտորն Վարդան վարդապետն, երեւելին ի գիտնականս», նշում է Գ Հովսեփյանը, իր «*Խաղբակեանք կամ Պողոսեանք*» աշխատության մեջ³⁹:

Պաշտամունքային շինության միասնական կառուցվածքի մեջ տեղ գտած ամեն մի հնարանք կամ նույնիսկ աննշան մանրամասն, հետապնդում է ոչ միայն ճարտարվեստի հետ կապված յուրահատուկ նպատակներ, այլև ամենից առաջ ծառայում է նրա բարձրագույն հոգևոր իմաստին՝ այն է Աստծո կողմից մարդկային գործունեության կարգավորմանը, նրա ճանաչողության ընդլայնմանը⁴⁰: Այս տեսակետից դիտված՝ խիստ կարևոր է եկեղեցական ծեսի, պատարագի և արվեստի դերը: XIII դարում էր, որ հայկական պատկերագրությունը, անդրադառնալով տեղական ու համընդհանուր քրիստոնեական արվեստի ակունքներին, բյուրեղացավ որպես իր միջավայրի մտքի ասպարեզում տեղի ունեցած փոփոխությունների կնիքը կրող, նորամուծություններից երբեք չխուսափող մի երևույթ: Պատկերագրական տիպերի մշակման, դրանք մտքի փոխանցողներ դարձնելու գործում պակաս դեր չխաղացին գրական աղբյուրները՝ մեկնությունները, հայսմավուրքները, ծիսական գրքերն ու պարականոն տեքստերը և իհարկե նաև վանական մեծ համալիրները, որոնք ստանձնեցին մշակույթի համակարգողի դեր: Առաջնորդվելով բարձրաստիճան հոգևորականության կողմից մշակված սկզբունքներով ու որոշակի կանոնակարգով, վանքերը՝ իրենց բազմակողմանի գործունեությամբ նոր շունչ հաղորդեցին արվեստի կազմակերպման գործին՝ թեմաների դասակարգումն ու պատկերագրության կիրառումը դնելով իմացության լուրջ մակարդակի վրա:

Այդուհանդերձ, հայոց միջնադարյան արվեստը մեկուսացված, ինքնաբավ աշխարհ չէր: Այն մի կենդանի կառույց էր, որը պարզապես ապրում էր իր տրամաբանությամբ: Իրենց իկոնոգրաֆիայով ու կատարողական սկզբունքներով, երբեմն բյուզանդական կամ արևմտյան այս կամ այն գործերը հիշեցնող պատկերաքանդակները, եկեղեցու պատերին դրոշմված նրբագույն, բազմազան զարդանախ-

39 Գ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, *Աշխ. աշխ.* էջ 253:

40 L. GRODECKI, "Moyen Age occidental", dans: *Symbolisme cosmique et monuments religieux*. Paris, 1953, texte, p. 79.

շերը, XIII դարի սկզբի հայ արվեստին ժամանակային ու հոգևոր առումով իրապես համայնական իմաստ հաղորդեցին, նույնքան համայնական, որքան էր քրիստոնեությունն ինքը:

Համալիրի գլխավոր եկեղեցու ներսի ու դրսի պատերի տպավորիչ քարակոփ արձանագրությունները, ժամանակի հայտնի գործիչների հիշատակումով, նվիրատվությունների փաստագրումով, վկայում են այս փոքր հոգևոր Տիեզերքի ու աշխարհի միջև եղած անխզելի կապի ու նաև մարդկային կարևորագույն առաքինություններից՝ բարեպաշտության ու հեզության մասին:

Եկեղեցին իր՝ սովորական մարդու համար անհասկանալի, բարդ կառուցվածքով, կարծես օդում կախված գմբեթով, որը խորհրդանշում էր երկինքը՝ դեպի վեր ձգվող որմնասյուներով, արսիդի անսպասելի կորագծով, թվում էր Աստվածային Ընդհանրությունների կողմից ստեղծված, տիեզերքի կատարյալ ֆորմաները կրկնող մի փոքր ինքնամփոփ աշխարհ: Աստուծո ստեղծագործությունը՝ Տիեզերքը, կատարյալ էր ու ավարտուն: Հրաշակերտ ու զմայլելի է նաև այն խորհրդանշող արևելյան պատի վարդյակ-սկավառակը: Բայց մարդը, մեղք գործելով, խախտեց աշխարհի ներդաշնակությունը: Նա կփրկվի Քրիստոսի գալուստով, նրա զոհաբերությանը ու Ընդհանրությանը: Մինչ այդ, գալուստը կազդարարվի Հին կտակարանի մարգարեների կողմից:

Եվ այսպես, *Դանիելը առյուծների գրոմ* (*Դանիել*, Զ 20-23) պատկերաքանդակը, Աղթամարից⁴¹ երեք հարյուր տարի հետո, նորից հայտնվում է ս. Ստեփանոսում: Այս երկու հարթաքանդակներն իրենց պատկերագրական հիմնական գծերով ու մանավանդ իմաստային հագեցվածությամբ շատ մոտ են իրար ու երկուսն էլ կրկնօրինակում են հայկական վաղ քրիստոնեական հուշարձանները: Դանիելին՝ առյուծների գրոմ պատկերող ամենահին օրինակի համար ներշնչման աղբյուր են ծառայել քրիստոնեության վաղ ժամանակներում տարածված *Commendatio animae* աղոթքները, որոնցով հավատացյալները Աստուծո տնօրինությանն էին հանձնում հանգուցյալների հոգիները, հայցելով փրկություն նրանց համար⁴²:

41 S. DER NERSESSIAN, *Aght'amar. Church of the Holy Cross*, Cambridge, Massachusetts, 1965, fig. 49.

42 *Նույնը*, էջ 22:

Հայկական միջավայրում Դանիելի առաջին՝ որոշակիորեն 364 տարեթվով թվագրվող պատկերաքանդակը գտնվում է Աղջ գյուղի (այժմ Ջորափ) Արշակունի թագավորների դամբարանում⁴³: Այստեղ, շինության ձախ պատին աղոթողի դիրքով պատկերված է բազկատարած Դանիելը՝ կանգնած երկու հնազանդ առյուծների միջև: Մարգարեի մեկ ուրիշ պատկեր, նորից առյուծների հետ, հայտնաբերված է Երզնկայում հայր Ղևոնդ Ալիշանի կողմից: Քարե սալիկի վրա փորագրված այս պատկերը Ալիշանը թվագրում է II-III դարերով: Նա հետևյալ դիտողությունն է անում այդ քանդակի վերաբերյալ «...բազկաբաց անձին կերպարանքն՝ հեթանոսության նշմար կհայտնե»: Եվ ապա հիմնավորում, թե ինչն է հեթանոսության. Բարձր Հայքի Դերջան գավառը և նրան սահմանակից Երզնկա, Անի, Թորոս, Սատաղ գավառները դիցապաշտության գլխավոր կենտրոններ էին. քանի որ «մօտ և առաջին բնիկ սահման (էին) Հայոց երկրի, Արտաշիսի և Տիգրանայ յարեստից բերած յունական շաստուածներն ընդունելով, կամ բերողքն յարմար դատեր են այն կողմը, որ դրկից և աւելի ծանօթ էր այնպիսի դից»⁴⁴: Հիշեցնենք, որ նույն երկրամասում, Սատաղի մոտ է գտնվել Անահիտ աստվածուհու բրոնզե կիսանդրին⁴⁵:

Հայր Ալիշանից ավելի քան կես դար հետո պրոֆ. Անդրե Գրաբարը⁴⁶, ուսումնասիրելով բյուզանդական արվեստի առնչությունները վաղ քրիստոնեականի հետ, նշում է, որ հունա-հռոմեական և միջնադարյան արվեստների ծաղկման շրջանների միջև ընկած են եղել լճացման կամ խավարի անկումային մի քանի դարեր. և սակայն՝ այդ ժամանակաշրջանում էլ հունական արվեստի ժառանգության ազդեցությամբ ստեղծվել են գործեր թե՛ նկարչության, թե՛ քանդակի ասպարեզում, որոնք իրենց ներդրումով հարստացրել են միջնադարյան

43 Բ. ԱՌԱՔԵԼՅԱՆ, *Վաղ հայկական պատկերաքանդակները IV դարում*, Երևան, 1949, Գլ. 9: С. С. МНАЦКАНЯН, "Рельефные изображения и символика Даниила в мемориальной пластике Армении раннего средневековья". Լրաբեր ԳԱ, 1977 N 5.

44 ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ, *Հին հատարը կամ հեթանոսական կրոնը հայոց*, Վենետիկ, 1910, էջ 469, 470:

45 Այժմ այդ կիսանդրին գտնվում է Բրիտանական Թանգարանում:

46 A. GRABAR, « L'art paléochrétien et l'art byzantin ». *Recueil d'études*, 1967-1977. London, 1979.

արվեստի պատկերացանկը: Այնուհետև, պրոֆ. Գրաբարը շարունակում է. «Էական ձևախեղումները, նրանք, որոնք թույլ են տալիս խոսելու այդ (դասական) կանոնի իրական լքման մասին, ընդհանրապես թվագրվում են կայսրության վերջին դարերով, և մեծամասամբ հայտնվում են հոռմեական պետության ծայրամասային կամ էլ սահմանամերձ զավառներում, ինչպիսիք են Միջագետքն ու Հայաստանը, և ապա հասնում մինչև Եգիպտոս ու Մեծ Բրիտանիա»: Ի հաստատումն Գրաբարի, կուզենայինք հիշատակել Երզնկայի պատկերաքանդակը, որ, ինչպես տեսանք վերը, հայր Ղևոնդ Ալիշանը բնորոշում է որպես «հեթանոսության Աշմար յայտնող»: Եվ իրոք, հնարավոր է, որ այն պատկանում է «հունա-հռոմեական արվեստի ծաղկումից հետո եկող լճացման կամ խավարի անկումային ժամանակներին», իսկ ավելի որոշակի II կամ III դարում, առաջին քրիստոնյաների կողմից ստեղծված գործերի շարքին: Երզնկայում հայտնաբերված Դանիելի պատկերաքանդակը, իր հորինվածքով հիշեցնում է պրոֆ. Գրաբարի կողմից մոտավորապես 200 թվականով թվագրվող Կալիքստոսի տոհմական դամբարանի առաստաղին պատկերված Դանիելին, երկու հնազանդ առյուծներով իր կողքերին⁴⁷: Անդրե Գրաբարը գտնում է, որ, ընդհանրապես, ամենավաղ քրիստոնեական պատկերները հայտնվել են 200 թվականից հետո, «իսկ մինչ այդ, գրեթե մեկ և կես դարի քրիստոնեական համայնքների հոգևոր կառուցվածքի և նրանց միջև եղած գաղափարական տարաձայնությունների մասին չունենք ոչ մի վկայություն»⁴⁸:

Այնուհետև, 359 թ., Աղցի դամբարանից ընդամենը չորս տարի առաջ, Դանիելը Փրկության հարացույցի մյուս թեմաների հետ ներկա է Յունիոս Բասսուսի սարկոֆագի քանդակների շարքում⁴⁹, հիմնականում կրկնելով նույն պատկերագրությունը, ինչ կատակոմբներում:

Միսիսում (Կիլիկիա, հին Մոպսուեստ) մի հին եկեղեցու հատակին կա խճանկար, *Դանիելը առյուծների գրում* պատկերով: Խճա-

նկարը գտնվում է անհայտ գերեզմանի վրա և թվագրվում է III դարով⁵⁰: Ոճը շատ հեռու է դասական հելլենիստականից. այն զծային է ու խիստ պարզունակ: Մինչդեռ պատկերագրությունը հիշեցնում է հելլենիստական նախատիպերը: Ո՞ւմ է պատկանել եկեղեցին, ո՞ր քրիստոնեական համայնքին, պարզ չէ: V դարում Կիլիկիայից ոչ շատ հեռու, Երուսաղեմում կար կազմակերպված հայկական համայնք, որը, որպես Սուրբ Քաղաքում իր ներկայության վկա թողել է երկու մեծ խճանկար հայերեն մակագրություններով⁵¹: Դրանք իրենց ոճով և պատկերագրությամբ լիովին համահունչ են հելլենիստական արվեստի արևելյան ճյուղի ավանդույթներին: Արդյոք Կիլիկիայում գտնված Դանիելի պատկերաքանդակը չի՞ ստեղծվել այստեղով անցած, ապա Երուսաղեմում հաստատված հայկական որևէ քրիստոնեական համայնքի կողմից: Սա ընդամենը մի վարկած է, որն անշուշտ լուրջ գիտական հիմնավորման կարիք ունի:

Մեզ համար, մեր ուսումնասիրության այս հանգրվանին, կարևոր է Աշել Փրկության հարացույցի կարևորագույն թեմաներից մեկի՝ «Դանիելը առյուծների գրում» պատկերի ներկայությունը, III-IV դարերի վաղ հայկական արվեստի մեջ: Այնուհետև, V-VII դարերում այն հանդիպում է Հառիհի, Փարոսի, Ագարակի, խորանարդաձև պատվանդանների, ինչպես նաև Երեբունյքի, Ավանի եկեղեցիների խոյակների վրա, ապա Մրենում, Մաքենացոց վանքում և այլուր ու գոյատևում մինչև XIII-XIV դարերը⁵²:

Սակայն հիշյալ թեման հայ արվեստի շրջանակներում հայտնի

50 A. GRABAR, *L'art paléochrétien et l'art byzantin*, p. 10, fig. 7.

51 *Armenian Art Treasures of Jerusalem*. Edited by B. NARKISS. Massada Press, 1979, p. 21-28. pl 2-39. S. Der Nersessian, *L'art arménien*. Paris, 1977, p. 71, fig 44, 45.

52 Լեվոն ԱԶԱՐԹԱՆ, *Վաղ միջնադարյան հայկական քանդակը*, Երևան, 1975, նկ. 3, 4. Բ. ԱՌԱՔԵԼՅԱՆ, *Վաղ հայկական պատկերաքանդակները*, Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ, *Հայկական ճարտարապետության Սյունիքի դարոքը*, Երևան 1960, նկ. 41: Ի դեպ Մաքենացոց վանքի Դանիելը առյուծների գրում քանդակը հետաքրքիր է իր պատկերագրությամբ. այստեղ առյուծները կանգնած են հետևի ոտքերի վրա, գլուխները Դանիելի գլխին մոտեցրած, տե՛ս Ս. Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ, *Վաղ միջնադարյան հայկական մեմորիալ հուշարձանները*, Երևան, 1982, նկ. 23. P. DONABEDIAN, J.-M. THIERRY, *Les arts arméniens*. Paris 1987, fig 192 ; M. et N. THIERRY, « La cathédrale de Mren et sa décoration ». *Cahiers Archéologiques*, XXI, MCMLXXI. Paris, fig 12.

47 A. GRABAR, *Christian Iconography. A Study of its Origins. Bollingen Series XXXV. 10*. Princeton University Press 1968, pl. 1.

48 A. GRABAR, *Les voies de la création en iconographie chrétienne*. Paris, 1979, p. 11.

49 A. GRABAR, *Christian Iconography*, պատկերացանկ, նկար 29.

միակը չէ, որը գուգահեռներ ունի *Փրկության հարացույցի* պատկերագրական ծրագրում: Օգտվելով առիթից՝ նշենք նաև *Երեք մանկունքն կրակե հնոցում*, *Աբրահամի զոհաբերությունը*, *Աստվածամայրը մանկան հետ* և Պողոս, Պետրոս առաքյալների պատկերները⁵³:

Այս թեմաներից *Դանիելը առյուծների գրում* պատկերն է, որ առավել մեծ տարածում է գտել վաղ քրիստոնեական հայկական արվեստում: Ծարժառիթը, հավանաբար, Դանիելի կերպարի հետ կապված վաղ քրիստոնեական շրջանի պատկերացումների հարատևումն ու կայունությունն է հայկական միջավայրում: Այս առիթով տեղին է հիշել Մաղաքիա Օրմանյանին, որը գրում է, թե «Քրիստոնեությունը ստուգապես գոյություն ունեցած է Հայաստանի մեջ առաջին երեք դարերու շրջանին..., այլապես «Հայաստանի գրեթե վայրկենապես քրիստոնեության դառնալը 4-րդ դարու սկիզբը հնար չէ ուրիշ կերպով մեկնել»⁵⁴: Նույն կարծիքին են և հայր Ղևոնդ Ալիշանն⁵⁵ ու հայր Պողոս Անանյանը: Նրանք երկուսն էլ տրամաբանական, ծանրակշիռ փաստարկներով ապացուցում են իրենց հայեցակետը: Հայր Անանյանը, ի մասնավորի, նշում է. «Արդարև Հայաստանի հարաւային և հարաւ-արեւմտեան գաւառներում մէջ քրիստոնեութիւնը շատ կանուխէն մուտք գործած է՝ Ուոհայի կամ Եդեսիոյ ճամբով. իսկ հիւսիս-արեւմտեան գաւառներում մէջ՝ Կապադովկիայէն՝ Սատաղ-Արտաշատ արքունական ճամբուն երկայնքին, ինչպէս կը փաստուի ըլլայ Թէոդորոս Սալիունի նահատակին պատմութենէն, ըլլայ հայ Ագաթանգեղոսի և յունարէն վարքի»⁵⁶:

Եվ այսպես, բնական է, որ դեռևս վաղ շրջանում, նոր հավատի հիմնադրույթներին հաղորդակցված մի ժողովրդի պաշտամունքային ծեսի մեջ Դանիել մարգարեն կարևոր տեղ զբաղեցնէր: Քանի որ նա ոչ միայն առաջին մարգարեներից էր, որ կանխագուշակեց Փրկչի Գալուստն ու Երկնային թագավորության հաստատումը, այլև ընդ-

53 P. DONABEDIAN, J. M. THIERRY, *նշվ. աշխ.* fig 32, 195, 222.
 54 ՄԱՂԱՔԻԱ ՕՐՄԱՆԵԱՆ, *Հայոց եկեղեցին և իր պատմությունը, վարդապետությունը, վարչությունը, բարեկարգությունը, գրականությունը ու ներկայ վիճակը*, Կ. Պոլիս, 1911, էջ 28, 29:
 55 Ղ. ԱԼԻՇԱՆ, *Արշայոյս քրիստոնեության հայոց*, Վենետիկ, 1920:
 56 Հ. ՊՕՂՈՍ ԱՆԱՆԵԱՆ, *Քրիստոնեության հետքեր Հայաստանի մեջ Ս. Գրիգոր Լուսավորչի քարոզչութենէն առաջ*, Վենետիկ, 1979, էջ 77:

հանրապես մարդկանց մտապատկերում չարի դեմ հաղթանակի խորհրդանիշ էր:

Քրիստոնեական համայնքների գոյությունն ու նրանց հալածյալ վիճակը մ. թ. առաջին երեք դարերում հայոց թագավորների կողմից հիշատակվում է պատմիչների մոտ⁵⁷ և փաստվում հայոց եկեղեցու Տոնացույցով⁵⁸ ու Հայսմավուրքով⁵⁹, ուր ամրագրված են այդ ժամանակաշրջանում նահատակված շատ մարտիրոսների անուններ: Այս առիթով Մաղաքիա Օրմանյանը գրում է. «Հայոց աշխարհին լուսաւորութեան բուն պատմութիւնը կը սկսի Թադէոսի (առաքյալի) Հայաստան մտնալէն» և շարունակում է ասելով, որ Արտազ գավառում հազարավոր մարդիկ հավատի եկան և մկրտվեցին Թադէոսի կողմից. դրանցից ամենանշանավորներն են Սանատրուկ թագավորի դուստր Սանդուխտը, իշխանուհի Զարմանդուխտը, իշխան Սամուէլը և այլոք⁶⁰:

Հանուն հավատի մահվան երթի մեջ մարդիկ իրենց աղոթքներում ոգեկոչում էին Դանիելի կերպարը, որն արժանացավ Փրկության ի պատասխան այն աղոթքի, որ նա ուղղեց առ Աստված իր՝ «փորձության մեջ դրված, երկրային, անցողիկ էության խորքերից»: Նույնպիսի աղոթքներով էին դիմում Աստծուն և Հայաստանում տեղական

57 ԱԳԱԹԱՆ ԳԵՂԱՅ Պատմութիւն հայոց. *Աշխատութեամբ Գալուստ Տէր Մկրտչեանի և Ստ. Կանայեանցի*, Տիգրիս, 1912, էջ 98 գլ. ԺԶ, ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ, *Հայոց պատմութիւն*. Թարգմանություն, ներածություն, ծանոթագրություններ Ստ. Մալխասյանցի, Երևան, 1947, գլ. ԺԲ:
 58 Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, *Հայոց Տոնացույցը IV-XV դարերում*. Երևան, 1999, էջ 145-146:
 59 Փետրվարի Իգ և մեհեկի ի. Յիշատակ է սբ. կուսանացն Գայիանեայ և Հոնիսիմեայ, Նոյեմբերի իթ և Տրէի իա. Յիշատակ է սրբոյն Տրդատայ թագաւորին հայոց և քուեր նորին խոսրովիդխտոյ և Աշխէն տիկնոջ, էջ 261: Հոկտեմբերի Իթ և Սահմի Ի, Պատմութիւն Սրբուհի կանանցն Նունեայ և Մանեայ, էջ 212: *Յայսմ ատր* վկայութիւն Շուշանայ կոսնատրի և մարտիրոսի, էջ 97: *Յայսմ ատր* կատարեցաւ ի Հայք աղախինն Քս-ի Շուշանիկ վս Քս-ի խոստովանութեանն, էջ 315: Տես, *Հայսմավուրք*, Կ. Պոլիս, 1834: Կան և այլազգի մարտիրոսներ, որոնք, սակայն, մկրտված են հայ առաքելական եկեղեցու կողմից, հետևաբար և հայացած են: Մանրամասն տես՝ ԸՆՈՐՀՔ պատրիարք ԳԱԼՈՒՍՏԵԱՆ «Հայագի սուրբեր». Երևան, 1997, էջ 222:
 60 ՄԱՂԱՔԻԱ արքեպիսկոպոս ՕՐՄԱՆԵԱՆ, *Ազգապատմ. Հայ ուղղափառ եկեղեցոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը. յարակից ազգային պարագաներով պատմուած*, Ա հատոր, Պեյրուք, 1959, էջ 26:

թագավորների կողմից մահվան դատապարտված քրիստոնյաները: Ահա մի հատված այդ աղոթքներից. «Տէր զօրութեանց, դու ես Աստուած ճշմարիտ որ և զԴանիէլ կուր արկեալ գազանաց՝ ասրեցուցեր յահագին ժանեացն և կացուցեր զրպարտեալն առաջի մեղչացն փառաւորութեամբ: Դու և զերիս մանկունսն, որ արկեալ յայրել վասն զՔեզ պաշտելոյն՝ ողջ և անարատ ի հրոյն պահեցեր, զի փառաւորեացնն զՔեզ՝ որք տեսին զսքանչելիս Քո...»⁶¹. սա ճշմարիտ, խորը հավատի արտահայտություն էր՝ բնորոշ վաղ քրիստոնեական աշխարհին: Եվ, թերևս, այս է պատճառը, որ արդեն III-IV դարերում Հայաստանի վաղ քրիստոնեական արվեստի մեջ, հոռոմեական սարկոֆագներից գրեթե զուգընթաց հայտնվում է Դանիելի պատկերը: Պատկերները այդ ժամանակաշրջանում պաշտամունքի և ոչ թե աստվածաբանական մտքի արտահայտություն էին. նրանց նպատակը Սուրբ գրքի նկարագարողումը չէր: Նախնական քրիստոնեության ծրագրում պատկերների դերն էր «հեռվել Սուրբ գրքի վրա, ինչպես այդ արվում էր պատարագի, և այն աղոթքների արտասանության ժամանակ, որ հաճախ լսվում էին ու թերևս կրկնվում», - ասում է Պիեթր Պրիծանը⁶²: Հայկական նյութը գալիս է հաստատելու Պրիծանի այդ միտքը: Դրա մասին են վկայում նաև մինչ այսօր հայտնի Դանիելի ամենավաղ, երկու պատկերաքանդակները՝ մեկը Աղցի Արշակունիների դամբարանից և մյուսը՝ Երզնկայից, որ հրատարակել է հայր Ալիշանը: Դրանք ոչ այլ ինչ են, եթե ոչ հավատացյալների կողմից Տիրոջը ուղղված աղոթքների քարեղեն վկայություններ: Մանավանդ որ հիշյալ ժամանակաշրջանում հայատառ գրականություն դեռևս չկար ու տեքստը չէր իշխում մարդկանց մտքերի վրա: Մինչդեռ պատարագը մատուցվում էր, աղոթքներն արտասանվում էին՝ հիշատակելով հանգուցյալներին, որոնց հոգիները հանձնվում էին Աստծու տնօրինությանը՝ «Փրկիր Տեր նրանց հոգիները, ինչպես փրկեցիր Դանիելին աշուժների գրից» աղաչանքով:

Ի վերջո, չմոռանա՞նք նաև, որ հայոց հիշողության մեջ Դանիելի կերպարը դարեր շարունակ զուգորդվում էր խոր Վիրապը նետված,

61 Ագաթանգեղոսի Պատմութիւն Հայոց, Երևան 1983, էջ 104, պարբ. ԺԶ:

62 P. PRIGENT, *L'art des premiers chrétiens, L'héritage culturel et la foi nouvelle*. Paris, 1995, p. 246.

օձերի մեջ երկար տարիներ ապրած ու ողջ մնացած սուրբ Գրիգոր Լուսավորչի հետ: Եվ իրոք, «պատկերները կարող էին լինել մի ժողովրդի կյանքի վկաները, որն իր հավատի կենտրոնում չէր դնում նույն սահմանումները, ինչ աստվածաբանները: Այս տեսակետից ևս դրանք շատ արժեքավոր են»⁶³:

Այս բոլորից հետո հասկանալի է դառնում, թե ինչու Դանիելի հետ կապված պատմությունը այդքան տարածված էր ու հաստատուն տեղ էր գրավում հայկական վաղ միջնադարի հարթաքանդակային արվեստի մեջ: Ավելացնենք սրան, որ Պատրիկ Տոնապետյանը իր «Աստվածաշնչային թեմաները և նախարարական շրջանի քանդակագործությունը» շահեկան հոդվածի մեջ ներկայացնում է 18 մուշ Դանիելը աշուժների գրում պատկերով⁶⁴:

Մինչ այսօր Դանիելի Գիրքը Հայաստանեաց եկեղեցում մեծ հեղինակություն է վայելում: Փրկչի ծննդյան տոնին նախորդող գիշերը, պատարագի ժամանակ, Դանիելի մարգարեությունը ընթերցվում է ամբողջովին: Հատուկ աղոթք է նվիրված Երից մանկանցն Դանիելի, որ արտասանվում է «յառաւօտու ժամու ի դէմս որդւոյն Աստուծոյ»⁶⁵, իսկ Դանիել մարգարեի գրքի «Գ» գլուխը, որը նույնպես հիմնականում նվիրված է Երեք մանկանց ու Նաբուգոդոնոսոր թագավորի պատմությանը, հայոց եկեղեցում ամենօրյա ընթերցանության նյութ է⁶⁶:

V-VII դարերում Հայաստանում շրջառության մեջ հայտնվեց Դանիելի VII տեսիլքը համարվող պարականոն բնագիրը: Հայր Գրիգորիս Գալենքեարյանը գտնում է, որ «Տեսիլքը գրուած է հունարէն, է դարուն կիսուն, նոյն դարէն է անշուշտ նաև հայերէն թարգմանութիւնը»⁶⁷: Պարականոն տեքստի համար հիմք է ծառայել Դանիելի VI տեսիլքը. (Դանիել, Ժ-ԺԴ): Արդեն VIII դարում, Կ. Պոլսի պատրիարք

63 Նույնը, էջ 247:

64 P. DONABÉDIAN, « Thèmes bibliques et sculpture pré-arabe », *REArm N. S. T XXII* 1990-1991.

65 Ժամագիրք Հայաստանեաց Ա. եկեղեցւոյ արարեալ սրբոց թարգմանչացն մերոց ՍԱՀԱԿԱՅ և ՄԵՍՐՈՎԱԿՅ և երանելի հայրապետացն մերոց ԳԻՒՏՈՅ ԵՒ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԱՆ ԴԱԿՈՒՆԻՈՅ և սրբոյն ՆԵՐՍԻՍԻ ԾՆՈՐՀԱԼԻՈՅ, Վաղարշապատ, 1902, էջ 157:

66 Մաշոց գիրք Հայաստանեաց եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1872, էջ 778:

67 Գրիգորիս ԳԱԼԷՄՔԵԱՐԵԱՆ, «Տեսիլ Դանիելի երթերորդ», *Հանդես ամսօրեայ*, 1882 թ. օգոստոս, էջ 241:

Նիկիփորոսը (վախճանված 828 թվին) հիշատակում է Դանիելի *Հայտնության* պարականոն գիրքը: Ուրեմն և պետք է ենթադրել, որ այն, իրոք, ստեղծվել է ոչ ուշ, քան VII դարը: Դա մի ժամանակաշրջան էր, երբ Հայաստանը (III-IV տասնամյակներից սկսած) ասպատակությունների էր ենթարկվում արաբների կողմից. Դարակեսին երկիրը ամբողջովին ընկավ արաբական իշխանության տակ: Հասարակությունը տազնապալի, հուսալքված վիճակում էր. մասն հոգեբանական մթնոլորտում *Դանիելի վեցերորդ տեսիլքի* նորովի մշակված պարականոն բնագիրը իր՝ ապագա ազատագրման խոստումով, համահունչ էր հասարակության հոգեբանական վիճակին: Հաշվի առնելով այս բոլորը՝ ֆրանսերեն տեքստի հրատարակիչ Ֆրեդերիկ Մակլերը թվագրության հարցում լիովին համաձայնվում է հայր Գրիգորիսի հետ: Ավելին, Մակլերը ավելացնում է, որ այնքան ժամանակ, քանի դեռ պարզ չէ, թե որն է իրական բնօրինակը, որի մասին խոսում են պատրիարք Նիկիփորոսը և կեղծ Աթանասը, «սպասելով դրան, մենք հակված ենք տեսնելու մեր *Հայտնության* մեջ հայկական բնօրինակ»⁶⁸:

XIII դարում, երբ կերտվում էր Աղջոց վանքն ու զարդարվում պատկերաքանդակներով, կացությունը Հայաստանում նորից անկայուն էր: Իշխող ավատատիրական տոհմի՝ Չաքարյանների ղեկավարությամբ ժողովուրդը լծված էր երկիրը ռազմական ուժով սելջուկներից ազատագրելու գործին: Տրամաբանական է, որ այսպիսի իրադրության մեջ Չաքարյանների տիրույթներում գտնվող Աղջոց ս. Ստեփանոսում, նորից հայտնվում է *Փրկության հարսացույցի* կարևորագույն, իր կենսագրությամբ բոլոր ժամանակների համար այժմեական կերպարներից մեկը՝ Դանիելը: Աղջոց վանքի հարթաքանդակը մարգարեի կյանքի որոշակի փուլի արտացոլումն է. մարգարեի ուտերին, որպես իշխանական տիրողոսի խորհրդանշան, պատկերված է նրան շնորհված ուսափուկը: «Եւ հրաման ետ Բաղդասար, եւ զգեցուցին մնա ծիրանիս, եւ մանեակ ոսկի ի պարանոցին նորա, եւ քարոզ կարդայր առաջի նորա լինել իշխան երրորդ ի թագաւորութեան նորա»

68 F. MACLER, "L'Apocalypse arménienne de Daniel", dans: *Les Apocalypses Apocryphes de Daniel*. Paris, 1895. p. 56.

(*Դանիել*, Ե 29): Այսպիսի հանդերձանքով Դանիելի պատկերագրական տիպը իր արմատներն ունի IV-V դարերի հոռոմեական արվեստի մեջ: Նմանատիպ քանդակագործ մի փոքր սալիկ գտնվում է Ստամբուլի հնագիտական թանգարանում⁶⁹:

Աղջոց վանքում պատկերված Դանիելի պատկերագրական այս տիպը ոգեկոչում է մեծ իշխան Իվանե Չաքարյանի կենսագրության այն դրվագները, որոնք խոսում են նրա՝ վրաց պետության մեջ խաղացած դերի և վերջապես առանձնահատուկ հովանավորության մասին, որին արժանացել էին Չաքարյան եղբայրները Թամար թագուհու կողմից: Վաղուց հայտնի փաստ է, որ Իվանե Աթաբեկը վրաց պետության կարևորագույն, եթե չասենք առաջին պաշտոնյաներից մեկն էր:

Գարեգին Հովսեփյանը, անդրադառնալով ավատատիրական այդ ընտանիքի ծագման խնդրին, նշում է, որ ըստ արձանագրությունների՝ Չաքարյանները սերում էին Բագրատունյաց տոհմից⁷⁰: Իվանեի կինը՝ Խոշաքը, իրեն անվանում է «վրաց և հայոց թագուհի»: Իվանեն իրեն կոչում է «թագազն եւ աշխարհակալ»⁷¹: Հասկանալի է, որ այս ամենը Իվանեի պատվասիրության արտահայտությունն էր, ու, թերևս, պատահական չէր, որ նա հողային խոշոր նվիրատվության մասին իր արձանագրությունը գետեղում է անմիջապես Դանիելի պատկերաքանդակի հարևանությամբ: Հնարավոր է նաև, որ այս մեծանուն պետական գործչին հատկապես սրտամոտ էր Դանիել մարգարեի կերպարը, որպես «չարի» դեմ հաղթանակի խորհրդանշի, իսկ երկուսի կենսագրությունների մեջ առկա զուգահեռները՝ ոգևորիչ նրա համար: Երկու դեպքում էլ քաղաքական պաշտոնակարգության մեջ վերընթացը սկսվեց «Փրկությունից» հետո: Դանիելը անվճար ելավ աշունձների գբից, Իվանեն գերի ընկավ անհավատների ձեռքը և ապա փրկագնվեց: Թվում է, թե սա հենց այն դեպքն է, երբ պատկերագրության ներքնահայտ, շերտերի գիտակցումը լրացնում, կենսականություն է հաղորդում նրա բնագանցական բնույթին: Քանի որ միջնա-

69 A. GRABAR, *Sculptures byzantines de Constantinople (IV^e-X^e siècles)*. Paris 1963, pl. XVII-1.

70 Գ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, *նշվ. աշխ.* էջ 6, 7;

71 *Նույնը*, էջ 6:

դարում արվեստը որքան էլ որ հոգևոր երևույթ էր, այդուհանդերձ կյանքի համընդհանուր հոսքից մեկուսացված չէր: Այն ուներ նաև սուցողական արժեք և արարվում էր ամենքի, բոլոր հավատացյալների համար՝ որպես այդպիսին դառնալով փոխառությունների և փոխազդեցությունների մի հանգուցակետ, մշակույթի տարբեր ժանրերի ու երբեմն կյանքից անդրադարձվող կենդանի տպավորությունների միջև: Եվ եթե մենք *Դանիելը առյուծների գրում* քանդակը իր կից արձանագրությամբ դիտարկենք որպես մեկը մյուսին լրացնող մտայնության արտահայտություն, ապա կունենանք պատկերագրական տիպերի ընտրության վրա միջավայրի ու նույնիսկ որոշակի անհատականության ազդեցությամբ ստեղծված մի հետաքրքրաշարժ ու հասուն միջնադարում ոչ այնքան հաճախ հանդիպող օրինակ:

Մատենագրության, իսկ ավելի ճշգրիտ գրական աղբյուրների ազդեցությունը արվեստի վրա առավել համոզիչ է դառնում, երբ անդրադառնում ենք Գրիգոր Լուսավորչին վերագրված, V դարում Ագաթանգեղոսի *Հայոց պատմության* հետ շրջանառության մեջ մտած *Վարդապետությանը*: Դա իրոք հայ արվեստի պատկերագրության խնդիրների պարզաբանման մի անգնահատելի աղբյուր է⁷²: Այստեղ կարելի է նաև վկայություն գտնել այն մասին, թե որքան խորն էր հայոց մեջ մարդու փրկագործության հետ կապված «Աստվածային ծրագրի» ընկալումը դեռևս վաղ քրիստոնեության ժամանակներում: Ահա մի հատված այդ վարդապետությունից. «Քանզի հենց օրենքը, որը Քրիստոսի ստվերագիրն է ու օրինակատարը՝ ոչնչացրեց մահը... նա ամենքին տկարացրեց, դրեց անեծքի ու դատապարտության տակ, որպեսզի երբ գա Ամենափրկիչ Քրիստոսը և վերացնի անիծաբեր և մահածին մեղքերը ազատվածներն ասեն. «Ծնորհակալություն նրան, որ այդպիսի մահվանից փրկեց մեզ»⁷³: Վարդապետությունը իր բազմազան ու բազմաթիվ հարցերի մեկնաբանությամբ օգնում է բացահայտելու այս հուշարձանի վրա դրոշմված այլ հարթաքանդակների իմաստը ևս: Ի՞նչ են արդյոք խորհրդանշում պատուհանի կամարի երկու կողմերին պատկերված աղավաղները, սկիհը և խաղողի ողկույզ-

72 Ա.Գ.ԹԱՆԳԵՂԱՅ Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Ա. Տեր Ղևոնդյանի, Երևան, 1983:

73 Նույնը, էջ 193, պարբերություն 348:

ները: Նույն այս տարբերով հորինվածք հայտնի է դեռևս IV դարից, արդեն հիշատակված Աղցի դամբարանում: XIII դարում աննշան փոփոխություններով, այն նորից բավականին լայն տարածում է ստանում՝ հայտնվելով բազմաթիվ հուշարձաններում⁷⁴: Հարթաքանդակների այս փոքրիկ խմբում առկա են վաղ քրիստոնեական արվեստին հատուկ դասական սխեմայի բոլոր տարրերը:

Սկիհի մոտ պատկերված աղավաղները, համաձայն վաղ քրիստոնեական արվեստի համընդհանուր սիմվոլիկայի, խորհրդանշում են Աստուծո հոգին. «Քանզի և հոգին Աստուծոյ յորժամ յայտնեցաւ աշխարհի, զոր ի վերն պատմեցաք, ի կերպարանս մարմնաւոր աղանոյ երևեցաւ, զի ցուցցէ զբարերարական զմիամտական սիրոյ զառաւելութիւն»⁷⁵: Ըստ մեկ ուրիշ մեկնաբանության, երբ նրանք պատկերվում են խաչի թևերի մոտ խաղող կտցահարելիս, հավատի նշանակ են⁷⁶: Համաձայն Նոր կտակարանի՝ աղավաղն իր մեջ խտացնում է քրիստոնեական բարոյականության կարևոր հատկանիշներ (*Մատթեոս*, Ժ 16) և միաժամանակ մարմնավորում Աստուծո հոգին (*Մատթեոս*, Գ 16, *Մարկոս*, Ա 10 և այլն): Գրիգոր Լուսավորչի *Վարդապետության* մեջ այս բնորոշումը զարգացված է ու վերածված լուրջ բարոյա-էթիկական հիմնադրույթի: Այստեղ աղավաղն ներկայացված է որպես մի էակ, որն իր մեջ ամփոփում է քրիստոնեական բարոյականության կարևոր հատկանիշներ, այնպիսիք, որ արժանի են ընդօրինակման. «...զմիամտութիւն զանվնաս և զսուրբ աղանոյն, որ և բարս Աստուածութեանն յինքեան բերէ». որպես մի էակ, որ մարմնավորում է Աստուծո հոգին և նրա միջոցով է, որ Աստված «ցուցցէ զբարերարական զմիամտական սիրոյ զառաւելութիւն»: Այստեղից, ահա, քրիստոնեական բարոյախոսության հիմնական դրույթներից մեկը, լինել

74 L. DER MANUELIAN, "The Monastery of Getard; New Revelation of its Architectural Sculpture". Terzo Simposio Internazionale di Arte Armeno. *Atti*, 1980. Venezia Պատրիկ Տոնապետյանը գտնում է, որ միայն V-VII դարերի ճարտարապետական հուշարձանների թիվը Հայաստանում, որոնք կրում են խաղողի զարդանախշ, 24 է: Տե՛ս P. DONABEDIAN, "Thèmes bibliques et sculpture pré-arabe". *REArm* N. S. T. XXII, 1990-1991

75 Ա.Գ.ԹԱՆԳԵՂԱՅ Պատմություն..., հատված 603, 604, A. Grabar, *Le premier art chrétien*. Paris 1966, p. 82. fig 75, 81.

76 Լ. ԱԶԱՐՅԱՆ, *Վաղ միջնադարյան հայկական քանդակը*, էջ 88:

«...բարերարք առ չարս և առ թշնամիս և յամենեցունց հալածեալք վասն արդարութեան, զի հայրն ձեր բարերար է...»⁷⁷:

Ի՞նչ է խորհրդանշում խաղողը: Նախ, սա հայ քանդակագործության մեջ ի վերուստ անտի ամենից առավել տարածված զարդանախշերից մեկն է: Աղջոցում այն պատկերված է ողկույզի ձևով: Խաղողի խորհրդապաշտական նշանակությունը թերևս ամենից պարզ բացատրված է հենց իրեն՝ Քրիստոսի կողմից. «Ես եմ որթն ճշմարիտ և հայր իմ մշակ է: Ամենայն ուտ, որ յիս է և ոչ բեր է պտուղ՝ կտրել զնա. և ամենայն որ բեր է պտուղ՝ սրբել զնա, զի առաել ես պտղաբեր լիցի: Դուք արդէն սուրբ էք վասն բանին զոր խօսեցայ ընդ ձեզ: Կացեք յիս և ես ի ձեզ: Ես եմ որթ եւ դուք ուտ» (*Յովհանն, ԺԵ 1-5*):

Արդ, փորձենք պարզել, թե ինչ հմաստաբանական կապ կա հարթաքանդակների այս փոքրիկ խմբի առանձին մանրամասների միջև և ապա որն էր նրանց միավորող գաղափարը: Ակնհայտ է, որ այստեղ առկա են Հիմ և Նոր կտակարանային թեմաներ. Դանիելը և քրիստոնեական խորհրդապաշտական համակարգի կարևոր տարրերը՝ աղավճիներն ու խաղողը: Դատելով այս ամենից՝ մարգարեի կանխագուշակությունը իրականություն է դարձել, բայց ճշմարիտ քրիստոնյա լինելու համար պետք է լինել բարերար թշնամիների և հալածյալների նկատմամբ, (ինչը որ արտահայտված է աղավճու կերպարով): Այսինքն՝ արծարծվում է քրիստոնեական բարոյակաճության կարևորագույն սկզբունքներից մեկը, սկզբունք, որի կրողներն են եկեղեցու արևմտյան պատի վրա քանդակված Պողոս, Պետրոս առաքյալները: Մասնավորապես որ այս քանդակները կերտված են եկեղեցու հարավային պատին, որն իր հերթին ակնարկում է հարավի՝ Աստծո շնորհի տակ գտնվելու հանգամանքը: Խմբի հմաստաբանական կիզակետը, իհարկե, Դանիելն է:

Դանիելը այն մարգարեն էր, որ կանխագուշակեց երկնային, հավիտենական թագավորության գալուստը և իր Աստծուն հավատալու և երկրպագելու համար ենթարկվեց չարչարանքների, այսինքն՝ «հալածվեց վասն արդարութեան»: Այս պատկերագրական տիպը, արդեն հնագանդեցրած առյուծներով, նշանավորում է «հանուն հա-

վատի և հոգու փրկության հաղթանակը»: Հայտնի է նաև, որ քրիստոնեական մտայնությամբ Դանիելը նույնացվում է մեռնող ու հարություն առնող աստվածության և որպես այդպիսին՝ Քրիստոսի հետ: Պատկերաքանդակից վար պատկերված աղավճիները՝ ըստ քրիստոնեական խորհրդապաշտական համակարգի, մարմնավորում են Աստուծո հոգին, որի մասին դեռ Բաղդասար արքան ասել էր, թե «Գիտեմք զի հոգի Աստուծոյ գոյ ի քեզ» (*Դանիել, Ե 14*): Ըստ *Վարդապետության*՝ աղավճին այլաբանորեն մարմնավորում է ճշմարիտ քրիստոնյայի կերպարը:

Խաղողը առանձին վերցրած եկեղեցու (քրիստոնեական համայնքի) խորհրդանիշն է⁷⁸, որի վրա իջել է Սուրբ հոգին՝ ի դեմս աղավճիների, ցույց տալով, որ Աժ այդ համայնքի անդամներին ընդունում է որպես ճշմարիտ քրիստոնյաների: Այսպիսով, հարթաքանդակների այս խումբը՝ իր հերթին զուգորդվելով Դանիելի պատկերաքանդակի հետ, ակնարկում է Հիմ ու Նոր կտակարանների ավանդական, գաղափարական կապը քրիստոնեության հաղթանակի պատմության մասին:

Բայց ինչո՞ւ Դանիելի հետ կապված այս վաղեմի պատմությունը երեքդարյա ընդմիջումից հետո նորից կյանքի կոչվեց Աղջոց վանքում: Հայտնի է, որ XIII դարում մշակույթի բոլոր բնագավառներում նկատվում է վաղեմի ավանդույթներին վերադառնալու միտում: Սա համընդհանուր երևույթ էր: Բայց, ինչպես արդեն ասվել է, առկա էր և ուժեղ անհատականության ազդեցության և ժամանակի գործոնը: Այս առիթով նորից դառնանք *Վարդապետությանը*: Այն լրացուցիչ մեկնաբանությունների հնարավորություն է ընձեռում: Ուստի և ասվածին կարելի է ավելացնել հետևյալը. Իվանեն որպես ճշմարիտ հավատացյալ (թող որ օրթոդոքս դավանանքին հետևող) մեծ բարերարությամբ հաստատում է իր նվիրվածությունը եկեղեցուն, հուսալով Փրկություն իր հոգու համար: Արդյոք նա ի խորոց սրտի՞ չէր հայցում Աստծու ներողամտությունը իր դավանափոխության համար, քանզի ասված է. եթե «լիջիք դուք որդիք բարերարք հօրն ձերոյ բարերարի, որք յայսմ միամտութեան արդարութեան պատուիրանին կացեալ իցեն», կարող էք դառնալ նրանցից, որոնք «առցեն զկերպա-

77 ԱԳԱԹԱՆԳԵՂԱՅ Պատմություն..., պարբերություն 604:

78 P. DONABÉDIAN, « Thèmes bibliques et sculpture pré-arabe », p. 277.

րանս արագաթևն աղանույն և թոհցեն ի թևս Հոգւոյն Սրբոյ հասանել յերկնից արքայութիւնն, որում ցանկացեալ մնան սուրբք յերկրի»⁷⁹: Վերջ ի վերջո, *Վարդապետությունը* ուղղված էր բոլոր եկեղեցիներին, բոլոր դավանանքներին: Այսպիսով, արձանագրությունը, ինչպես տեսանք, չի հակասում պատկերաքանդակներից և ոչ մեկի խորքային նշանակությանը, այլ լրացնում է այն՝ ընդգծելով հավատի դերը մարդու կյանքում, հավատ Աստուծո Շնորհի և նրա փրկագործության նկատմամբ: Արձանագրության և պատկերի մնացն զուգադրումը, կապված քրիստոնեական նախնական շրջանի գաղափարախոսության հետ, մի հետաքրքիր վերապրուկ է 13-րդ դարի հայկական հուշարձանում: Միայն մի միջավայրում, ուր կար վաղ քրիստոնեական արվեստի հուշարձանների ու նրանց՝ քրիստոնեության ակունքներից հաղորդակից լինելու զգացումը, կարող էր ոգեկոչվել իր տարրերի զուգակցությամբ ամբողջական մի պատկերագրական բանաձև, համակված դեռևս վաղնջական ժամանակներին հատուկ պատկերացումներով: Թերևս այս հանգամանքը Հայաստանում պայմանավորված էր դավանաբանական առանձնահատկություններով, որոնք այս կամ այն չափով եկեղեցու, (ուրեմն և մշակույթի) մեկուսացման առիթ էին հանդիսանում:

Մի ենթադրություն ևս. Դանիելի մարգարեության մեջ կանխագուշակվում է Բաբելոնի հզոր թագավորության անկումը, նրա տրոհումը մասերի և Աստուծո թագավորության գալուստը: Արդյոք Դանիելի պատկերաքանդակի երևալը հայ ժողովրդի համար այդ ծանր, ճգնաժամային օրերին մի համաժողովրդական աղոթքի արտահայտությունն չէ՞ր հանուն հայոց հոգու փրկության և սելջուկյան դաժան տիրապետության կործանման: Հիշենք, որ վանքը գտնվում էր մի այնպիսի ավատատիրական ընտանիքի տիրույթներում, որը ոչ միայն սելջուկների դեմ պայքարի ոգեշնչողն ու իրականացնողն էր, այլև հանուն հավատի նահատակվածների շարքը լրացնում էր այդ իսկ տոհմի անդամներից մեկի՝ Գրիգոր Խաղբակյանի անունով, որն անմիջական կապ ուներ վանքի հետ⁸⁰:

79 Ա.ԳԱԹԱՆԳԵՂԱՅ Պատմություն..., հատված 604, 605:

80 Այս Գրիգորի մասին Գարեգին կաթողիկոսն ասում է, որ հոնաց և վրաց գործերի միջև 1222 թ. տեղի ունեցած ճակատամարտի ժամանակ գերի է ընկնում, ա-

Եվ այսպես, Փրկության շնորհը ենթադրում է խոր հավատ, նվիրաբերում և նախնական մեղքի պատճառով կորստի մատնվածների նկատմամբ սեր: «Չի սեր ծածկե զբազմութիւն մեղաց», ասում է Պետրոս առաքյալը (*Թուղթ Պետրոսի*, Ա, գլ. Դ, 8), Պողոսը կարծես լրացնում է այդ միտքը. «Շնորհք Տեսունն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ: Եւ սերն իմ ընդ ասնեսսին ձեզ ի Քրիստոս Յիսուս. Ամեն» (*Պողոսի առաքելոյ Թուղթ առ Կորնթացիս* Ա, 16, 23, 24): Քրիստոսի աշակերտների, երկու հոռմեացի, հանուն հավատի նահատակված առաքյալների ներկայությունը «փրկագործական» ծրագրի հետ կապված՝ վաղ քրիստոնեական հուշարձանների պատկերացանկում խոսում է նրանց հատկացվող հատուկ դերի մասին կաթոլիկ աշխարհում: Ըստ Գրաբարի «Պետրոսի և Պողոսի չարչարանքները պատմականորեն և վարդապետությամբ կրկնում են իրենց ուսուցչի՝ Քրիստոսի չարչարանքները: Այս տեսակետից նրանց պատկերները համապատասխանում են մի պաշտամունքի, որը առաքյալներին մեծարում է, որպես հանուն հավատի զոհված տեղական (հոռմեական) նահատակների»⁸¹: Դասական շրջանի (IV-VII-դդ.) հայկական հուշարձաններում. Էջմիածնի տաճարի հյուսիսային պատին, Օձունի մահարձանի արևմտահայաց կողմին նրանց հայտնվելը վկայում է այն մասին, որ Հայաստանում նույնպես, չնայած V դարից սկսված և ողջ միջնադարում ընթացող դավանաբանական թեժ վեճերին, առաքյալների կերպարները յուրաքրչվելով այնպես են թափանցել տեղական հոգեբանության մեջ, որ դարձել են պատկերացանկի անբաժանելի մասերից: Դեռ ավելին, ասում է Թոմաս Մերթուսը, Պետրոսի նկատմամբ հայերի առանձնահատուկ վերաբերմունքը արտահայտվում է X դարի սկզբին, *Վեհափառի Ավետարանում*, ուր կա Պետրոս առաքյալի պատկերը, մի հանգամանք, որ նախորդում է

պա նահատակվում հանուն հավատի: Գ. ՅՈՒՍԷՓԵԱՆ, *Աշխ.*, էջ 14, ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, *Պատմություն հայոց*, Թիֆլիս, 1909, էջ 194:

81 A. GRABAR, *Christian Iconography*. Washington, 1968, p 71. Հիմնականում, որպես սրբեր պատկանելով կաթոլիկ աշխարհին, Պողոս, Պետրոս առաքյալները խորը պաշտամունքի առարկա են եղել բոլոր քրիստոնյաների համար: Ուխտավորների բազմություն է միշտ ձգվել դեպի նրանց գերեզմանները, որոնց թվում, իհարկե, եղել են և հայեր: Տե՛ս Ժ. ԴԵԴԵՅԱՆ, «Հայ վանականները և ուխտավորները Արևմտյան Եվրոպայում X դ. վերջին XI դ. սկզբին», ՊԲՀ, 1984, N 3:

հոսմեականին և թելադրում է նոր մոտեցում Պետրոսի կարևոր դերի կապակցությամբ հայ եկեղեցու շրջանակներում⁸²:

Պողոս, Պետրոսի պաշտամունքը, որպես համաքրիստոնեական սրբերի, Հայաստանում վաղուց ի վեր տարածված է եղել, նրանց անուններով կոչվել են եկեղեցիներ, մասունքները պահպանվել են սրբավայրերում, հատուկ օրեր են հատկացվել հիշատակը հարգելու համար: Հայ միջադարյան արվեստում նրանց ունեցած տեղը թվում է, թե հավասարազոր է առաքելական եկեղեցու կյանքում խաղացած դերին: Մանրանկարչության սեղմ պատկերագրական համակարգում նրանք կարևոր են, սակայն ավելի նվազ, քան քանդակային գործերում, որտեղ հաստատուն տեղ են զբաղեցնում, հավանաբար, վերջինիս՝ քրիստոնեական արվեստի ակունքներին ժամանակագրական առումով ավելի մոտ կանգնած լինելու պատճառով:

Ուրեմն և Աղջոցի փոքր եկեղեցու մուտքի երկու կողմերին XIII դարի 70-ական թվականներին նրանց հայտնվելը այնքան էլ անսպասելի չէ: Այս ասելով՝ մենք նկատի ունենք առաքյալների՝ որպես սրբերի ներկայությունը հայ մշակույթի տարբեր մարզերում՝ թե՛ մատենագրության, թե՛ արվեստի և թե՛ պաշտամունքի համակարգում: Այլ բան է առաքյալների պատկերների գուտ ձևաբանական լուծումների հետ կապված խնդիրը: Մի հանգամանք, որ անհարիր է ոչ միայն հայկական եկեղեցական մշակույթի ավանդական սկզբունքներին, այլև հատկապես շինության մուտքի կազմակերպման գեղագիտական, ընդունված կանոններին: Մյուս կողմից, տարակույս չկա, որ նրանց ընտրությունը Աղջոցում թելադրված է ավելի վաղ կերտված Դանիելի պատկերաքանդակով՝ ի հաստատում հին և նոր ուխտերի շարունակական կապի:

Քննարկելով հին և նոր ուխտերի շարունակականության հարցը՝ պրոֆ. Մեթյուսը նշում է, որ իշխանության հանձնումը Քրիստոսից Պետրոսին՝ որպես ավանդական հիմք ունի Հիմ կտակարանից եկող, եկեղեցուն փոխանցվող քահանայապետության շարունակականության իդեան: Հղելով Մյուրրեին՝ նա նշում է, որ Մյուրրելը այդ հան-

գամանքը կապում է սիրիական և հայկական մեկնությունների հետ. օրինակ՝ համաձայն Եփրեմ Ասորու՝ «քահանայապետության և մարգարեության բանալիները» եղել են Հիմ կտակարանի վերջին քահանաների՝ Սիմոնի և Հովհաննես Մկրտչի ձեռքերում: Փոխանցումը Քրիստոսին, և հետո նրանից Պետրոսին նշանակվում է ըստ էության քահանայապետության փոխանցումը հրեաներից այլազգիներին: Այնուհետև նա ասում է, որ այս շարունակականությունը իր հիմքում ունի երկու պատկեր՝ բանալի և ժաշակտոր: Այսպիսով, Պետրոսը Հիմ և Նոր կտակարանները իրար հետ կապող հիմնական օղակն է: «Իմացականության նույն նախատիպն առկա է Գր. Լուսավորչի վարդապետության, Մատթեոսի 16:13.19 հատվածներին նվիրված մեկնության մեջ», ասում է Մեթյուսը⁸³: Կուզենայինք ավելացնել, որ այս նույն միտքը արծարծվում է Վարդան Արևելցու *Դանիելի* մեկնության մեջ: (Մեկնություն, էջ 250):

Արդ, դառնանք առաքյալների պատկերագրությանը: Մուտքի ձախ կողմում Պետրոսն է, երկարամազ ու մորուքով, աչ ձեռքին ունի բանալի, որն իր ձևով հիշեցնում է դեռևս ուշ անտիկ ժամանակաշրջանի հուշարձաններում պատկերված բանալիները⁸⁴:

Պողոս առաքյալի պատկերը հայ արվեստում առաջին անգամ հայտնվում է Էջմիածնի տաճարի հյուսիսային կողմի պատի վրա, ուր վերին մասում տեղադրված են երկու սալիկ հարթաքանդակներով: Սրանք իրենց չափերով և շարվածքով ակնհայտորեն տարբերվում են պատի համընդհանուր շարվածքից և թվում են շատ ավելի հին, քան ինքը պատը⁸⁵: Ամենայն հավանականությամբ այդ սալիկները պատկանել են հին շինությանը, և երբ Վահան Մամիկոնյանը V դարում վերակառուցեց եկեղեցին, դրանք նորից գրավեցին իրենց տեղը կառույցի շարվածքի մեջ: Հարթաքանդակներից մեկի (լայն. 0,65 մ, բարձր. 0,47 մ) վրա պատկերված է երկարամազ և մորուքով Պողոս առաքյալը՝ ծալովի աթոռակի վրա նստած: Նրա առջև կանգնած է Թեկեճ՝ կարճ կտրած մազերով: Սա նշանակում է, որ նա արդեն

83 Th. MATHEWS, op. cit p. 94

84 M. et N. THIERRY. « La cathédrale de Mren et sa décoration », *Cahiers archéologiques*. XXI. Paris, p. 41-77.

85 Բ. ԱՌԱՔԵԼՅԱՆ, *Վաղ հայկական պատկերաքանդակը*, էջ 42, նկ. 11:

82 Th. F. MATHEWS and A. SANJIAN, *Armenian Gospel Iconography*. Washington 1991, p. 94.

հրաժարվել է աշխարհիկ կյանքից և անցել Առաքյալի հետևորդների շարքը: Քանդակաքարի վրա ներկայացված է Պողոսի և Թեկղեի երկխոսության պահը: Ահա այդ հատվածը. «Եկն ի մնա Թեկղ ի տուն պատանույն եւ եկաց առ Պաւղոսի և եգիտ անդ ի ծունկս զի կայր յաղօթս, աղաչէր եւ ասէր. Հայր մեր, որ յերկինսդ ես... Եւ ասէ Թեկղ զՊաւղոս, փոքրեցից զհերս իմ եւ եկից զկնի քո յո և դու երթիցես. ասէ Պաւղոս. պատերազմ սաստիկ է, եւ դու գեղեցիկ ես, գուցէ և այլ փորձութիւն գայցէ ի վերայ քո այլ եւս մեծ քան զառաջինն եւ ոչ կարես համբերել: Ասէ Թեկղ զՊաւղոս. միայն դրոշմն Քրիստոսի տուր ինձ եւ փորձութիւն առ իս ոչ մերձենայ: Ասէ Պաւղոս զԹեկղ. երկայնամիտ լէր և աոցես զոր ինչ խնդրես...»⁸⁶:

Պողոս առաքյալի և Թեկղեի պատմությունը հայտնի է նաև XIII դ. տեր Իսրայելի կողմից խմբագրված *Հայսմավուրքից*: Սակայն, այնտեղ այդ պատմությունը բավականին տարբերվում է Ռ. Մկրտիչ Ավգերյանի հրատարակած *Վկայաբանությունից*: Հայսմավուրքի տարբերակը, ինչպես սովորաբար, կարճառոտ է, Պողոսի հետ կապված դրվագները սակավ, պատումը ինքնին ընդհանրացված է. մի խոսքով, կարծես թե հետևում է բոլորովին այլ մի ավանդույթի⁸⁷:

Մյուս հարթաքանդակի վրա շրջանակի մեջ ներգծված հավասարակողմ խաչ է. խաչի երկու կողմերում, նրա վերին մասում, երևում են բոլորակը կտցահարող երկու աղավաղ. բոլորակը ամբողջապես, ինչպես նաև նրանից դեպի վար գտնվող տարածքը ծածկված է հունարեն արձանագրություններով: Հավանաբար, այդտեղ հիշվում են նաև անջեցյալների անունները, որոնց հոգիները աղոթքներով հանձնում էին Աստծու տնօրինությանը:

86 Մատենագրութիւնք նախնեաց, *Վենետիկ 1832, զլ. Ժ, էջ 101*:

87 *Գիրք որ կոչի Այսմաւորք, ի թըլին հայոց ՌՃՀԹ. մարտի Բ. Վկայաբանութիւն սրբուհոյն Թեկղայ, հոռի ԺԵ և սեպտեմբերի իր, ձս*: Այլ հայալեզու գրական աղբյուրներից տե՛ս ԱԲՐԱՀԱՄՈՒ ԽՈՍՏՈՎԱՆՈՂԻ *Վկայք արևելից*. Թարգմանութիւնք յատրականէն. աշխատասիրութեամբ Գ. Տէր Մկրտչեանի, Էջմիածին, 1921, էջ 78, 189-196: Հայ պատմիչներից Թեկղեյն որպէս «տուրք տիկին» կամ «տուրք Թեկղ» հիշատակվում է Փ. ԲՈՒՋԱՆԴԻ և Թ. ԱՐԾՐՈՒՆՈՒ մոտ: Տե՛ս, Փ. Բուզանդացի, *Մատենագրութիւնք նախնեաց, Վենետիկ, 1832, զլ. ԺԷ, էջ 101*: Թ. ԱՐԾՐՈՒՆԻ և ԱՆԱՆՈՒՆ, *Պատմութիւն Արծրունեաց տան*, Երևան, 1978, զլ. Ժ, էջ 279:

Իոզեֆ Ստրժիգովսկին վկայակոչում է Էմիլ Բորեին, գրելով, որ ըստ վերջինիս՝ արձանագրությունների «գրութեան կերպը քրիստոնեական առաջին դարերը մատնանիշ կրնէ»⁸⁸:

Այնուհետև, նույն ուսումնասիրության մեջ, Էջմիածնի Ավետարանի (X դար) *Քրիստոս և առաքյալները* մանրանկարին ու փղոսկրյա կազմին նվիրված հատվածում, Պողոս առաքյալի պատկերագրական տիպի կապակցությամբ Ստրժիգովսկին նշում է, որ երկարամազ և մորուքով Պողոսը «5-րդ դ. վերջից և 6-րդ դ. սկիզբներէն սկսեալ առհասարակ Կունդ կը նկարուի»⁸⁹: Սակայն հետո նույն մանրանկարի կապակցությամբ ավելացնում է. «X դարի մանրանկարի մէջ Պողոսը ունի գրեթէ նոյն նկարագիրը, ինչ փղոսկրեայ կազմի վրա», այսինքն՝ երկարամազ է: Եվ քանի որ նա ճաղատ չէ, համաձայն ընդունված պատկերագրական տիպի, ուրեմն և մանրանկարները կատարված են մի ժամանակաշրջանում, երբ այդ տիպը Հայաստանում դեռևս հաստատված չէր և մանավանդ, ըստ նրա, «չկային այնպիսի նկարիչներ, որ ստեղծեին նման գեղեցիկ մանրանկարներ»⁹⁰:

Ս. Տեր-Ներսեսյանը չհամաձայնվելով պրոֆ. Ստրժիգովսկու հետ, վկայակոչում է *Մլքեի Ավետարանը* (862 թ.), ուր *Համբարձման* տեսարանում Պողոսը, ինչպես *Էջմիածնի Ավետարանում*, պատկերված է երկար մազերով⁹¹: Եվ սակայն տիպերի բազմազանությունը բացատրել միայն դրանց հաստատված կամ չհաստատված լինելու հանգամանքով թվում է, թե այնքան էլ պատճառաբանված չէ: Ինչ վերաբերում է մասնավորապես *Էջմիածնի Ավետարանի* գեղագիտական արժեքին, որի մասին խոսում է Ստրժիգովսկին, ապա պետք է ասել, որ նրա ստեղծումից մոտավորապես վաթսուն տարի առաջ, Բյւենո Նորավանքից (ուր գրվել էր հիշյալ Ավետարանը) ոչ հեռու, Տաթևում, 930 թվականին որմնանկարներով զարդարվեց Պողոս-

88 *Էջմիածնի ավետարանը*. ուսումնասիրութիւն ՏէՐ ԹՈՎԱԷՓ ՍՏՐՉԻԳՈՎՍԿԻ, Վիեննա, 1892, էջ 5:

89 *Նույնը*, էջ 29:

90 *Նույնը*, էջ 53:

91 S. DER NERSESSIAN, « Initial Miniatures of the Etchmiadzin Gospel »; *Etudes byzantines et arméniennes*. Louvain, 1973.

Պետրոս եկեղեցու ներքնամասը: Դժբախտաբար, այսօր արդեն այդ որմնանկարներից գրեթե ոչինչ չի մնացել, այնպես որ պատկերագրական համեմատություններն անկարելի են⁹²: Բայց և այնպես, հիմնվելով հայոց պատմության արժանահավատ ներկայացուցիչներից մեկի՝ Ստ. Օրբելյանի վկայության վրա, կարելի է նշել մշակութային աշխույժ մթնոլորտի գոյությունը X դարում՝ Տաթևում, որը «լի էր ծովամատուց փիլիսոփայիք, երաժշտական երգոց, ճիս էր և վարժարանն վարդապետական կրթութեամբն, նաև արհեստատրք նկարչացն և գրողաց անհամեմատք»: Եկեղեցին կառուցվել էր դեռևս 896 թվականին Հովհաննես եպիսկոպոսի աթոռակալության օրոք: Ստեփաննոս Օրբելյանը գրում է. «Եւ այս ի խորհուրդ երկուց գլխաւոր առաքելոցն Պօղոսի և Պետրոսի, յորոց նշխարացս եղան ի ներքոյ սեան»⁹³: Այնուհետև, 930 թվին Հակոբ եպիսկոպոսը հրավիրում է նկարիչներ «ի հետաւոր աշխարհէ ֆռանգ ազգաւ» և «Ետ նկարել զբովանդակն ի վերուստ մինչեւ ի վայր»⁹⁴: Այս նկարիչների հետ աշխատել են և հայ վարպետներ, որոնց ներկայությունը հաստատվում է արսիդի որմնանկարների թե՛ մնացյալից բոլորովին տարբեր զուտ արևելյան ոճով, թե՛ պատկերված մարգարեների ու առաքյալների բռնած գրքերի վրա զետեղված հայերեն մակագրություններով⁹⁵:

92 Անցյալ դարի 50-ական թվականներին արվեստաբան նկարիչ Լիդիա Ալեքսանդրովնա Դուրնովոյի և նրա աշակերտների կողմից պատճենահանվեցին հայ միջնադարյան որմնանկարչության որոշ հուշարձաններ, որոնք այժմ պահպանվում են Հայաստանի Ազգային պատկերասրահում: Այդ նշանակալի ներդրման շնորհիվ մենք այսօր հնարավորություն ունենք ոչ միայն ծանոթանալ հայ արվեստի այդ կարևորագույն ճյուղին, այլև որոշ դատողություններ անել դրա մասին: Տաթևի գլխավոր եկեղեցու արսիդը հավանաբար ծածկված է եղել Քրիստոսի և առաքյալների պատկերներով, դրանցից այսօր մենք ունենք մի փոքր հատված ներկայացնող պատճեն. որը հնարավորություն չի տալիս որոշել Պողոս առաքյալի ինքնությունը: Այնուամենայնիվ, տեսանելի են առաքյալների ձեռքերի գալարները հայերեն մակագրություններով, մի հանգամանք, որը հաստատում է Ստ. Օրբելյանի այն միտքը, որ ֆրանկների հետ աշխատել են և հայեր: Ուրեմն և ժ. Ստրժիգովսկու կարծիքը, որ այդ ժամանակաշրջանում Հայաստանում չկային այնպիսի նկարիչներ, որ զարդարեին Էջմիածնի ավետարանը, պարզապես տեղի չէ:

93 Պատմությունն անհանգիստ Սիսական արարեալ ՍՏԵՓԱՆ և ՈՍԻ ՕՐԲԵԼԵԱՆ արքեպիսկոպոսի Սիւնեաց, Փարիս 1859 էջ 270-271:

94 Նույնը... էջ 302:

95 P. DONABÉDIAN, J.-M. THIERRY, *Les arts arméniens*, p. 583.

Ուրեմն թե խոսել այն մասին, որ այդ ժամանակաշրջանում Հայաստանում չկային բավականին վարժ նկարիչներ, որ զարդարեին Էջմիածնի Ավետարանը, տեղին չէ: Թե ինչն⁹⁶ Հակոբ եպիսկոպոսը դրսից հրավիրեց նկարիչների, այնքան էլ հասկանալի չէ: Գուցե թե դա կապված էր նրա անձնական ճաշակի հետ, կամ էլ մի փորձ էր արվեստը դիտարկել եկեղեցական վեճերից դուրս:

Անդրադառնալով Պողոս առաքյալի պատկերագրական տիպին՝ կուզենայինք նշել, որ մեր դիտարկումները, կապված Պողոսի պատկերագրական տիպի հետ, ցույց են տալիս, որ վաղ քրիստոնեական հոմեական հուշարձաններում նույնպես առաքյալը պատկերվում է թե՛ ճաղատ, թե՛ երկարամազ: III դարի հին հոմեական բրոնզե մեդալիոնների վրա Պողոսը ճաղատ է, մինչդեռ հենց դարասկզբի նուկեզօծ ապակիների վրա երկարամազ⁹⁷: Իսկ սարկոֆագների և երբեմն նույնիսկ նույն սարկոֆագի վրա *Քս. դատավոր* տեսարանում երկարամազ է և մորուքավոր, բայց կալանավորման տեսարանում ճաղատ⁹⁸:

Հայկական հուշարձաններում IV դարից մինչև XV դար ականատես ենք Պողոսի արտաքին կերպարանքի նույն երկվությանը: Ուրեմն և խնդիր ոչ միայն տիպերի կանոնակարգման մեջ է, այլ նաև որպես ներշնչման աղբյուր ծառայած նախորդակների: Եվ հետո, Պողոսը, ի տարբերություն Պետրոսի կանոնիկ բնագրերում գրեթե նկարագրված չէ: Միայն *Գործք Առաքելոցում* խոսվում է այն մասին, որ նա «...լեղբարց հրաժարեալ նաւեր յԱսորիս, եւ ընդ նմա Պրիսկիղա և Ակիղաս, փոքրել զգլուխ ի Կենքրա, քանզի ուխտադիր էր» (Գլ. ԺԸ. 18): Պողոսի արտաքինի ամբողջական նկարագրությանը հանդիպում ենք պարականոն տեքստերում «էր սուրբ առաքեալն Պօղոս անձամբն կարճ և հաստ, մեծաքիթ և խաժակն, թաւայօն և զուարթեքեւ, ճաղատ և երկայնամորուս, ալէխառն, աստուածային շնորհօքն լի և բժիշկ ամենայն ցաւոց ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ»⁹⁸:

96 A. GRABAR, *Christian Iconography*, p. 68, 69 pl. 163, 166, 167.

97 A. GRABAR, *Նշվ. աշխ.* pl. 29, 111, 149.

98 Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց, անկանոն գիրք առաքելականք, Վեներիկ, 1904, էջ 43:

Այսպիսի մի նկարագրություն կա և Թեկղեի վկայաբանության մեջ⁹⁹։
 Հայ միջնադարյան արվեստում Պողոս առաքյալի և Թեկղեի հետ կապված պատմության պատկերումը բացառիկ երևույթ է։ Այդուհանդերձ, այն օգնում է պատկերացում կազմելու Պողոսի՝ Հայաստանի վաղ քրիստոնեական արվեստի մեջ ընդունված պատկերազրական տիպի և դրա զարգացման մասին։

III-IV դարերով թվագրվող Թեկղեի և Պողոսի համատեղ պատկերին հանդիպում ենք Վատիկանի Pio Cristiano թանգարանում պահվող սարկոֆագի կափարիչից մնացած մի բեկորի վրա։ Այդ այլաբանական պատկերը իրենից ներկայացնում է մի նավակ, որի թիավարն է առաքյալը։ Նրա առջև կանգնած է կարճ մազերով Թեկղեն։ Նավակի առաջամասին գրված է T H E C L A¹⁰⁰։

Արդեն ասվեց, որ Էջմիածնի տաճարի հյուսիսային պատի հարթաքանդակի վրա Թեկղեի և Պողոսի անունները գրված են հունարեն, տառատեսակը բնորոշ է քրիստոնեության առաջին դարերին։ Սա մտածել է տալիս, որ այս հարթաքանդակը ստեղծված է III-IV դարերից ոչ ուշ, այսինքն՝ ժամանակակից է Պիո Քրիստիանո թանգարանի նմուշին։ Բացառված չէ, որ հայկական հարթաքանդակի վրա ներկայացված պատմությունը լինի մ. թ. առաջին դարերում քրիստոնեական աշխարհում տարածված և Հայաստան թափանցած մի պարականոն տեքստի արտացոլում¹⁰¹։ Ամեն դեպքում այդ դրվա-

գը ի շարս մյուսների գալիս է հարստացնելու հայկական վաղ միջնադարյան արվեստի պատկերացանկը՝ վկայելով այն մասին, որ թերևս որոշ հորինվածքներ, որ ժամանակին զարդարել են պաշտամունքային շինությունների պատերը, նրանց ավերման հետ անհետացել են, կամ էլ մատնվել անուշադրության։

Ավելի ուշ, VII դարում երկու առաքյալների պատկերաքանդակներ առկա են Մրենի կաթողիկեի արևմտյան մուտքի բարավորի *Քս դատավոր* տեսարանում, ուր կողք կողքի պատկերված են վեց ֆիգուր։ Կենտրոնում *Քս Ամենակալն է, կողքերին Պողոս և Պետրոս առաքյալները*։ Պողոսը ճաղատ է, ձեռքին պահած ունի գիրք. ձախ կողմում Պետրոսն է բանալիով։ Այնուհետև այս խումբը ընդարձակվում է, երկու կողմից ներառնելով տեղական իշխանական տների ներկայացուցիչներին՝ Թեոփիլոս եպիսկոպոսին, իշխան Սահառունուն և Ներսես Կամսարականին¹⁰²։

Ինչպես արդեն ասվեց, այստեղ Պետրոս առաքյալը բանալիով է, որն իր ձևով հիշեցնում է անտիկ արվեստի հուշարձանների վրա պատկերվող բանալիները։ Բյուզանդական արվեստում Պետրոսը երբեմն խաչով է, բայց նաև գրքով կամ բանալիով¹⁰³։ Ս. Պետրոսի առաջնային դերը չէր ընդունվում հույների կողմից. այդ պատճառով Ն. և Մ. Թիերիները կարծում են, որ բանալու պատկերումը հայկական հուշարձաններում հայերի կողմից հակաբյուզանդական տրա-

99 «Իբրև ետես զՊաղոս զի գայր, այր չափ հասակաւ հերագանգոր, գուգք թերագոյնք կարթ գէլ, ծախ, մեծակն, յոնակից, ունչք երկնագոյնք և լի էր շնորհօք Տեան»։ *Տե՛ս մատենագրութիւնք նախնեաց*, հ. Ա, էջ 514։

100 P. PRIGENT, *Աշխ. աշխ. fig 62 p. 125*. Նմանատիպ մի պատկեր, նավակ, մեջը մարդ, մի ձեռքը վեր բարձրացրած, մյուսով՝ կարծես թե մի բան բռնած (ուրկան?) կա Իջևանի շրջանի Մակարավանքի գլխավոր եկեղեցու (1205 թ.) արքայի ճակատակալ սալիկներից մեկի վրայի ութանկյուն աստղի մեջ։ Ենթադրում ենք, որ դա Պողոս առաքյալն է։ Նրա հետևը պատկերված է գիրք։ Տե՛ս P. DONABÉDIAN, J.-M. THIERRY P. *Les arts...*, fig. 3. Նկարի տակի մակարգրությունն է «*հանելուկային անձնավորություն*»։

101 Դա մի ժամանակաշրջան էր, երբ նեստորականները աշխատում էին իրենց աղանդը տարածել հայերի և ասորիների մեջ։ Հնարավոր է, որ նրանց գրվածքների հետ Հայաստան թափանցած լինեին և պարականոն որոշ տեքստեր։ Ահա թե ինչ է գրում Կորյուն վարդապետն այդ մասին. «Յայն ժամանակի բերեալ երևեցան Հայաստան աշխարհին գիրք սուտապատումք, ընդունայնախօս աւանդու-

թիւնք առն ուրումն Հոռոմի, որում Թեոդիոս անուն։ Վասն որոյ սինհողասական հայրապետաց եկեղեցեացն արքոց Աշանկեալ ազդ առնէին ճշմարտահաստ փառաւորչացն Սահակալ և Մաշթօցի։ Եւ նոցա ճշմարտասէր փութով զայն ի միջոյ բարձեալ՝ աշխարհահալած արտաքոյ իրեանց մերժեցին»։ (Տե՛ս *Մատենագրութիւնք նախնեաց*, ԿՈՐԻԻՆ, ՄԱՄԲԲԷ, ԴԱԻԻԹ, էջ 25)։ Նույնն է կրկնում և ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՅԻՆ որոշ հավելումներով։ *Տե՛ս Հասարմունք ի գրոց պատմագրաց*, Վաղարշապատ, 1893, էջ 76, 77։

102 *La Cathedrale de Mren*, fig. 13, P. 60.

103 *Ibid p. 60*. *Ի դեպ, նույն այդ հողվածում* Նիկոլ և Միշել Թիերիները գրում են, որ «Արևելյան Փոքր Ասիայում մենք չգիտենք կողպեքով բանալիի ավելի ուշ շրջանի օրինակ, քան Խախուլիինը (Վրաստան, XI դար)»։ Տե՛ս *La cathedrale de Mren...*, էջ 60։ Այստեղ մեզ համար տարօրինակ է թվում Խախուլին որպես բանալիով Պետրոսի վերջին օրինակ ներկայացնելը։ Միհչղեռ այդ տիպը հայտնի է Հայաստանում Աղջոց վանքում 70-ական թվականներին, ինչպես նաև Կիլիկյան մանրանկարչության մեջ՝ *Համբարձման* տեսարանում (*Մատենադարան, ձեռ. N 197*)։

մադրությունների արտահայտություն է: Եթե նույնիսկ հաշվի չառնենք VII դարում Հայաստանում տիրող քաղաքական վիճակը, որն այդ շրջանում հակաբյուզանդական չէր, ապա նույն ինքը՝ կառույցը այլ բան է հուշում. եկեղեցու հյուսիսային կողմի մուտքի ճակատակալ քարին պատկերված է *Ս. Խաչի վերահաստատումն ու փառաբանումը* բյուզանդական կայսր Հերակլի կողմից: Արդյոք միևնույն հուշարձանի վրա, նույն ժամանակամիջոցում ստեղծված քանդակներից մեկը կարո՞ղ էր արտահայտել հակաբյուզանդական, մյուսը՝ բյուզանդամետ տրամադրություններ: Այս ժամանակաշրջանի հայ-բյուզանդական կապերի մասին հետաքրքիր տեղեկություններ է հայտնում Սեբեոս պատմիչը¹⁰⁴:

Կա վաղ միջնադարյան մի հուշարձան ևս, ուր հավաստի եղել են Պողոսի և Պետրոսի հարթաքանդակները: Դա Բագարանն է: Այստեղ, հյուսիսային արևելքի վրա, ըստ Ստրժիգովսկու, հստակ կարդացվում է «Պողոս Պետրոս» մակագրությունը. սրան հարակից երկու քառակուսի սրբատաշ քարերը, որոնց վրա, հավանաբար, եղել են առաքյալների պատկերաքանդակները, անհետացել են¹⁰⁵:

VII դ. երկրորդ կեսից սկսած, արաբական տիրապետության մոտավորապես երկու հարյուրամյա շրջանում, սակավաթիվ հուշարձաններ են ստեղծվում, այն էլ զուսպ հարդաքանդակով: Սակայն, արդեն IX-X դարերում Հայաստանում մշակույթի գրեթե բոլոր բնագավառներում, արձանագորվեց հոգևոր կյանքի զարթոնք, որը և նշա-

104 Դավիթ Սահարունի իշխանը, որը ի շարս մյուսների, պատկերված է «Քս Դատավոր» տեսարանում, 637-638 թվերին Հերակլ կայսեր կողմից նշանակվեց Բյուզանդական Հայաստանի կյուրոպաղատ. այդ մասին կարևոր տեղեկություն է պահպանվել Սեբեոսի մոտ. նա գրում է. «Իսկ թագաւորն առնէ ըստ Խնդրոյ ի իշխանացն զճա (Սահարունն) ի իշխան ամենայն աշխարհացն և տայ մնա պատիւ կյուրոպաղատութեանն և հաստատէ զնա ի ծառայութիւն իւր և կալեալ զիշխանութիւնն ամս Գ ամենայն ճոխութեամբ մեծապէս»: Տե՛ս, *Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրությանը* Գ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 133: Բացի դրանից Մրենի արձանագրություններում առկա են բյուզանդական տիտղոսներ-պատրիկ կյուրոպաղատ. սպարապետ: Վերջինս, ըստ Հ. Օրբելու, օգտագործվում էր միայն բյուզանդական զինվորականների կողմից: Տե՛ս Ս. Ա. ՕՐԲԵԼԻ, *Избранные труды*, Ереван, 1963. Надпись 639-640 годов о построении Мренского собора, стр. 399.

105 J. STRZYGOWSKI, *Die Baukunst der Armenier und Europa*. Wien, 1918 p. 95-99.

նավորվեց բացառիկ արժեք ներկայացնող գործերով: Ընդօրինակվեցին ու նկարագորակվեցին հայ մանրանկարչության նոր շրջանը ազդարարող Մլքե թագուհու և Էջմիածնի Ավետարանները: Վերջինիս մասին արդեն խոսվել է Պողոս, Պետրոս առաքյալների կապակցությամբ: 862 թվին գրված Մլքեի Ավետարանի նկարաշարի որոշ մանրանկարներ բացահայտ աղերսներ են դրսևորում հյուսիսային, «հունականացված» Սիրիայում ստեղծված Ռաբուլայի¹⁰⁶ ավետարանի պատկերների հետ, մի ձեռագիր, որը մինչև IX դարը պահպանել է նորալատոնական գեղագիտության հետքերը: Այստեղ, «Համբարձման» տեսարանի մեջ, հետարաբական շրջանում առաջին անգամ տեսնում ենք երկարամազ ու մորուքով Պողոս առաքյալին: Պատկերագրական այս տիպը հիշեցնում է Էջմիածնի տաճարի IV դարով թվագրվող նույն պերսոնաժին, տարբերակ, որն իր գոյությունը հայ արվեստում պահպանում է մինչև XV դարը, XIII դարում նորից հայտնվելով Աղջոց ս. Ստեփանոս վանքում: Նույն դարավերջին դրվագված Սկևռայի մասնատուփի¹⁰⁷ և Էաչի Պողոսյանի պատվերով կատարված արծաթե պահարանի վրա Պողոսը ճաղատ է և մորուքով¹⁰⁸: Մի քիչ ավելի ուշ նույն այդ տիպին հանդիպում ենք Ամաղուի Նորավանքի Աստվածամոր եկեղեցու երկրորդ հարկի դռան ճակատակալ քարի վրա (Քս դատավոր, երկու կողքերին Պողոս, Պետրոս առա-

106 J. LEROY, *Les Manuscrits syriaques à peintures, conservés dans les bibliothèques d'Europe et Orient*. Paris, 1964. p. 129

107 P. DONABÉDIAN J. M. THIERRY, *Les arts...* fig 177, Սկևռայի մասնատուփի վրա Պողոս և Պետրոս առաքյալները պատկերված են մեղալյոնների մեջ, կիսանդրի: Պետրոսը կարճ մազերով է և կլոր մորուքով, ձեռքին գիրք է. Պողոսը աչ ձեռքին ունի սուր, ձախին՝ գիրք: Նա ճաղատ է և մորուքով: Պողոսի պատկերագրական տիպը սրով բացառիկ է հայ արվեստում և բավականին ընդունված արևմուտքում, այն հիշեցնում է եվրոպական քանդակագործության նմուշները, ինչպես օրինակ, Ռեյմսի տաճարի Վերջին դատաստանի ընդարձակ տարբերակի մեջ տեղ գտած առաքյալների պատկերները: Տե՛ս Ernst Kitzinger, *The Art of Byzantium and the Medieval West*. London, 1976, fig. 32 p.

108 Գ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, *Խաղթակեանք կամ Պողոսյանք*, առաքյալների նույն տիպերը ինչ Սկևռայի մասնատուփի վրա պատկերված են և Էաչի Պողոսյանի պատվերով դրվագծված պահարանի վրա. Պետրոսը կարճ, կլոր մորուքով է, Պողոսը՝ ճաղատ, երկար մորուքով: Արևմտյան ազդեցությունը այստեղ բացահայտ է:

քյալները)¹⁰⁹, և ապա նույն տեղում մի խաչքարի վրա¹¹⁰, ուր նա, այս անգամ արդեն, երկարամազ է:

Առաքյալների արտաքին նկարագրի հետ կապված այս մանրամասների քննարկումը ամենևին էլ երկրորդական չէ: Այն հետապնդում է որոշակի նպատակ, որն է պարզել նրանց պատկերագրության ակունքները, հետևել տիպի զարգացման ընթացքին:

Ըստ այդմ, մեր պրպտումները հայ արվեստի շրջանակներում ցույց տվեցին, որ ճշգրտել, թե Պողոս առաքյալի պատկերագրական տիպերից որն է, որ գերակշռում է միջնադարյան հայ արվեստում, առայժմ դժվար է ասել: Սակայն մի բան հստակ է. վաղ քրիստոնեական տիպերը հայկական արվեստում հարատևել են, երբեմն նույնիսկ, ընդգրկելով հասուն միջնադարը: Արվեստագետները հիմնականում երբեք չեն խուսափել պատկերագրական ծրագիրը հարըստացնող նորամուծություններից: Պողոս առաքյալի կերպարի բազմազանությունը պայմանավորված է թե՛ դրանով և թե՛ գրական աղբյուրների մեջ խորանալու ձգտումով: Պատկերագրական տիպերի փոխակերպումների մասին ուշագրավ դիտողություն ունի Անդրե Գրաբարը: Նա գրում է. «Քրիստոնյա արվեստագետները իրենց պերսոնաժներին օժտում էին կայսերական շրջանի հեթանոսական արվեստի իմաստունների դեմքերով, որոնք նրանց ներշնչանք էին պատճառում: Սա չէր խանգարում որոշ կեղծ դիմանկարների դարերի ընթացքում պահպանել ինչ-ինչ անհատական հատկանիշներ և

109 S. DER NERSESSIAN, "Deux tympanes sculptés arméniens datant de 1321" *Gahiers Archeologiques*, 25. Paris, 1976.

110 1982-1983 թվերին Նորավանքի տարածքի հետազոտության ժամանակ հայտնաբերվեց մի նոր խաչքար, որը վերագրվում է ճարտարապետ, քանդակագործ Մոմիկին: Խաչքարի վերին մասում Քրիստոսն է գրքով: Ավելի վար՝ կենտրոնում պատկերված է մի նրբահյուս խաչ, երկու կողմերում տեղադրված 6-ական շեղանկյուն, որոնցից յուրաքանչյուրի մեջ՝ մեկական առաքյալ: Բոլոր առաքյալները ձեռքներին պահած ունեն գիրք: Ծարքերը սկսվում են Պետրոս և Պողոս առաքյալների պատկերներով. Պետրոսի ձեռքի գրքի վրա գրված է «Պետրոս», ի տարբերություն մյուսների, որոնց գրքերը չեն կրում որևէ մակագրություն: Պողոսը ակնհայտորեն ճաղատ է, ներկայացնելով մեզ հայտնի «Կուճղ Պողոսի» վերջին պատկերներից մեկը հայկական հասուն միջնադարում: Տե՛ս Մ. ՀԱՍՐԱԹՅԱՆ, «Հայ ճարտարապետության, քանդակագործության նորահայտ հուշարձաններ Նորավանքում», *Հրաբեր հասարակական գիտությունների*, 1984 թ., N 8:

խուսափել այլոցից: Այդպես էր Սուրբ Անդրեասի, Պետրոսի ու նաև Պողոսի դեպքում, որոնց տարբերակները հասնում են մինչև III դարը»¹¹¹: Մենք կարծում ենք, որ նման պատկերագրական փոխակերպումները հայ արվեստին, հասկանալի պատճառով, բնորոշ չեն: Մեզանում տիպերի բազմազանությունը, ինչպես արդեն ասվել է, առավելապես պայմանավորված է բնագրերով, թե՛ կանոնիկ, թե՛ պարականոն, ինչպես նաև այլևայլ գրական տեքստերով և հատկապես մեկնողական գրականությամբ: Պակաս դեր չէին խաղում և դավանաբանական խնդիրների հետ կապված հավանական սահմանափակումները, մի հարց, որ դեռևս կարոտ է ուսումնասիրման: Օրինակ, մեր ուսումնասիրության առարկա Աղջոց վանքի փոքր եկեղեցու մուտքի կողմերում դժվար թե գետեղվեին առաքյալների մարդահասակ քանդակները, եթե XIII դարի երկրորդ կեսից սկսած հայ-հոռմեական հարաբերությունների մեջ չնկատվեր որոշ մեղմացում. և, իհարկե, այս պարագային խիստ կարևոր էր վարդան Արևելցու ներկայությունը վանքում, նրա ներգործությունը մշակութային կյանքի ու նաև ընդհանրապես վանականների ընդդիմահար դավանաբանական ուղղվածության վրա: XIII դարի 50-ական թվականներին Հռոմի հետ Պետրոս առաքյալի առաջնության շուրջ թեժացած վեճերը այնուհետև փոքր-ինչ խաղաղվեցին: Հավանաբար, հենց այդ ժամանակային հատվածի հետ էլ համընկնում է երկու առաքյալների քանդակապատկերների կերտումը Հայաստանում:

Պետրոս առաքյալի առաջնության գաղափարը ընդհանրապես ընդգծվում է լատինական աշխարհում, նշում է Ս. Տեր-Ներսեսյանը, բայց, տարօրինակաբար, պատկերային մեկնաբանում տրվում է բացառիկ դեպքերում: Արևմտյան արվեստում սովորաբար ներկայացվում է «բանալու հանձնումը Պետրոսին»: Այնուհետև Ս. Տեր-Ներսեսյանը շարունակում է. «XII դարի վերջերից Պապը հետապնդում էր հոռմեական և հայկական եկեղեցիների միասնության գաղափարը: Քաղաքական հանգամանքների բերումով հայերը գնացին փոքր զիջումների, հիմնականում կրթական առարկաների և որոշ սովորույթների բնագավառում: XIII դարում արդեն Կոստանդին կաթողիկոսը

111 A. GRABAR, *Les voies de la création en iconographie chrétienne*. Paris, 1979, p. 35.

հատակ դիրքորոշում որդեգրեց Հոռնի Ակատմամբ: 1248 թ. նա նամակ ուղարկեց Հեթում թագավորին՝ շարադրելով իր տեսակետը առաքյալների առաջնության վերաբերյալ, նամակ, որն այնուհետև պետք է ուղարկվեր Պապին՝ կցվելով կաթողիկոսի ներկայացուցիչ Մխիթար քահանայի տեղեկագրին: Վերջինս վերնագրված՝ էր *Տասներկու առաքյալների հավասարության մասին պատվո աստիճանակարգի մեջ և նրանց դեմ, ովքեր հաստատում են, որ տասնմեկը իրենց հեղինակությանը ավելի ցածր են, քան Պետրոսը*: Սա հույժ կարևոր խնդիր էր, քանի որ առաքյալների հավասարության հանգամանքը, որպես հետևանք, պետք է շոշափեր առաքելական ծագում ունեցող եկեղեցիների և, ուրեմն, նրանց պետերի հավասարության հարցը: Հետաքրքիր է, որ այս գաղափարը, ինչպես նշում է Ս. Տեր-Ներսեսյանը, ընդգծվում է Կոստանդին կաթողիկոսի կողմից պատվիրված բոլոր ձեռագրերի ընծայական չափածոներում հետևյալ բառերով. «Թող թույլ տրվի ինձ նստել գահին Պետրոսի հետ»¹¹²:

Ինչ վերաբերում է Պողոս առաքյալին, ապա նա՝ ինչպես վաղ քրիստոնեական և բյուզանդական արվեստներում, այնպես էլ հայկականում երբեմն պատկերվում է գրքով կամ գալարով, երբեմն էլ թափուր ձեռքերով: Օժտելով նրան տարբեր նշանակներով (գիրք, գալար, սուր) հայ վարպետներն արդյոք չէի՞նք արձագանքում պարա-

112 S. DER NERSESSIAN, *Armenian Manuscripts in the Freer Gallery of Art*. Washington, 1963, p. 50-51. Ընդհանրապես, բանալիով Պետրոսի առնչությամբ նշենք, որ դեռևս հայերեն պարականոն տեքստերում բանալին հիշատակվում է որպես Պետրոսի առիթուտ. «գրանալին արքայութեան էստ ի հովուէլ զոչխարն Քրիստոսի», տե՛ս *Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց. Գիրք առաքելականը*, էջ 466:

Պրոֆ. Մեթյուսը, Կալիֆորնիայի համալսարանի գրադարանում պահվող Գլաձորի ձեռագրերից մեկին նվիրված իր աշխատությունում գրում է, թե Պետրոսի պատկերումը հայկական ձեռագրերում որոշ մասնագետներ կապում են Հայաստանում լատին միսիոներների հայտնվելու և Հոռնի պապի առաջնության վարկածը պնդելու հետ: Մինչդեռ, շարունակում է Մեթյուսը, հայ մանրանկարչության մեջ Պետրոսը մեծակ՝ գիրքը ձեռքին եկեղեցու ներսում նստած, պատկերված է դեռևս Վեհափառի Ավետարանում (XI դարի սկիզբ, Մատենադարան, 10780) այսինքն՝ միսիոներների հայտնվելուց շատ առաջ: Տե՛ս Thomas F. Mathews and Avedis Sanjian, *Armenian Gospel Iconography*, p. 93, 94, fig. 103a, 104b. Այնուհետև, Պետրոսը բանալիով պատկերված է Թորոս Ռուպինի կողմից նկարագրողված Ջեյթունի Ավետարանում (Մատենադարան, N 10675):

կանոն տեքստերի մեջ առաքյալի անհատականությունը ներկայացնող բնորոշումներին, ինչպես օրինակ. «Պաղոս պարիսպ անյաղթելի որ ամենայն օր հաւաքեցեր զգանձս հոգեւորս եւ թաղեցեր ի գիրս սուրբս: Եթէ զգացուցեալ էիր մեզ թէ այդպէս փութանակի երթաս առ Քրիստոս թերևս ի մտի եղեալ էաս եւ մեկնեալ էաս զթուղթսն քո, բայց այժմ զինչ արասցուք զի զրկեցաս յընթերցմանէ սուրբ գրոց»¹¹³: Այնուհետև, Պողոսի անհատականության բազմակողմանիությունը ընդգծվում է XV դ. փիլիսոփա, վարդապետ Գր. Տաթևացու *Գիրք քարոզութեան որ կոչի Ամառան հատոր* գրվածքում: Պողոս, Պետրոս առաքյալների մասին այստեղ ասված է. «Արեգակն և լուսին նշանակեն երկու առաքեալսն զՊետրոս և զՊողոս ի մեջ եկեղեցու: Զի նոքա ի մեջ լուսաւորացն մեծք և զօրաւորք են և առաւել խնամեն զերկիր քան զայլ լուսաւորս: Իսկ առաքեալն Պաղոս կոչի լուսինն զի ունի յատկութիւն լուսնի բազում կերպիւ. ունի բնական լոյս և յարեգակնէն լոյս ընդունի և Պողոս ունէր զլոյս գիտութեան օրինացն և ընկալաւ Քրիստոսէ զնորս շնորհաց»¹¹⁴: Եվ հետո Տաթևացին շարունակում է. «Երկու լուսաւորք մեծամեծք իշխանք տըվնջեան և գիշերոյ և սոքա երկու կտակօքն լուսաւորիչք հրէից և հեթանոսաց: Եւ այսպէս ի նորին խնամոցն առ միմեանս առաքեցան Պետրոսն և Պողոսն ի հեռաւոր աշխարհէ և միասին կատարեցան ի Հրոսմ քաղաքի յաւուրս Ներոնի արքայի, վասն որոյ և միասին տօնեն այսօր եկեղեցիք Հայաստանեայց զյիշատակ երկուց լուսաւորչացն հաւատի»¹¹⁵ Տաթևացու այս խոսքերը, կարծում ենք, իրենց մեջ կրում են հայերեն պարականոններից մեկի հեռավոր արձագանքը: Ահա այն. «Բայց մեք հաւատացաք թէ ոչ բաժանէ Աստուած ի միմեանց զերկու մեծամեծ լուսաւորս զոր արար, այսինքն ոչ Պետրոս ի Պողոսէ և ոչ զՊողոս ի Պետրոսէ, իրապէս հաւատամք ի տէր մեր Յիսուս Քրիստոս»¹¹⁶:

Հայոց եկեղեցին մինչ այսօր, Ավագ տոների շարքում երրորդ

113 *Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց, Գիրք առաքելականը*, էջ 121:

114 *Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր. Արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթևացույն եօթնալոյս վարդապետի ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին բազմ/հ/ւաք եկեղեցույն ի Կ. Պօլիս. ՌԺՂ (1741 թ.) էջ 68:*

115 *Նույնը*, էջ 685:

116 *Թանգարան հայկական... Գիրք առաքելականը*, էջ 30, 116:

տոնը նվիրում է սրբոց առաքելոցն Պետրոսի և Պողոսի: Տոնը կոչվում է «Ցնծայ այսօր եկեղեցի Աստուծոյ իւր սարօքն»: Այնուհետև, Ջատկից հետո երրորդ կիրակին, որ կոչվում է Աշխարհամատրան տոն, նորից նվիրված է եկեղեցու հիմնադրմանը, ընթերցվում է Մատթեոսի Ավետարանի ԺԶ, 18 գլուխը: Երրորդ տոնը նվիրված ս. Էջմիածնի հիմնադրմանը՝ համաձայն Գրիգոր Լուսավորչի տեսիլքի, տոնվում է Բարեկեղանի վերջին շաբաթ օրը և կոչվում է «տօն Օողակաթին Սրբոյ Էջմիածնի... բնաբանն է «Ած զհիմունս էարկ մնա յաիտեան ընկալաք ԱԾ զողորմութիւն քո ի մէջ ժողովրդեան քո»¹¹⁷: Հայսմավորքներում նույնպես հատուկ օրեր են նվիրված Պողոս, Պետրոս առաքյալներին. դրանք են՝ Քաղոցի ԺԹ և դեկտեմբերի ԻԷ՝ «Տօն է սրբոց առաքելոցն Քս-ի գլխաւորացն Պետրոսի և Պողոսի»¹¹⁸:

Անդրադառնալով Աղջոց վանքի փոքր եկեղեցու պատկերաքանդակներին, այդուհանդերձ, պետք է նշել, որ մուտքի երկու կողմերում տեղադրված բնական չափերի առաքյալների քանդակները համալիրի հարդարանքի մյուս պատկերային տարրերի բաղադրամասեր մի քիչ օտարոտի ու արտասովոր տպավորություն են թողնում: Ավելի քան երկու հարյուրամյակ անց Աղթամարի ս. Խաչ եկեղեցու կառուցումից, Արևելյան Հայաստանի Այրարատ գավառում, մարդաշատ վայրերից հեռու, լեռների մեջ պատասպարված մի վանքում նորից հայտնվում են մարդահասակ քանդակներ, և այն էլ ստեղծագործական մի միտումով, որը տարբերվում է թե՛ նույն վանքում կերտված, թե՛ մեր տեսադաշտում գտնվող այդ ժամանակաշրջանի այլ հուշարձանների պատկերաքանդակներից:

Աղթամարին գրեթե ժամանակակից, XI դարով թվագրվող, մարդահասակ քանդակներով մի կառույց գտնվում է Սյունիքում, Տաթևից ոչ հեռու՝ Բղենո Նորավանքում¹¹⁹: Ամբողջական կառույցից մեզ հասած շինությունների ավերակների մոտակայքում այս ու այնտեղ ընկած են քարեր, որոնցից երկուսի վրա կան պատկերաքան-

117 Ծառոց գիրք Հայաստանեաց եկեղեցոյ, Վաղարշապատ, 1872, էջ 754, 318, 590:

118 Յայսմատրք, Կ. Պոլիս 1706, էջ 358, 360:

119 P. DONABÉDIAN, J.-M. THIERRY, *Les arts arméniens*, p. 506, fig 659. С. МХАЦКАНЯН, *Архитектура армянских притворов*. Ереван, 1952.

դակներ: Դրանք, սակայն, լուրջ համեմատությունների առիթ չեն տալիս: Միայն մեկը՝ յուղաքեր կանանց պատկերով, դեմքերի դրվագավորման իր ռեալիստական միտումով հիշեցնում է Աղջոց վանքի առաքյալների պատկերաքանդակները:

Հայտնի է, որ XIII դարի 60-ական թվականների վերջին Աղջոցում էր գտնվում Վարդան Արևելցի պատմիչը: Ըստ երևույթին հենց այդ ժամանակ էլ սկսվել են փոքր եկեղեցու շինարարական աշխատանքները: Մեզ ավելի քան հավանական է թվում, որ մուտքի երկու կողմերում արևմտյան տիպի քանդակների գետեղման գաղափարը գալիս էր Վարդան վարդապետից: Մանավանդ որ, նախքան Աղջոց գալը, նա մի քանի տարի անց էր կացրել Կիլիկիայում՝ վայելելով Կոստանդին Ա կաթողիկոսի հյուրընկալությունը¹²⁰: Ընդհանուր առմամբ, պատմիչը հավանաբար այնտեղ եղել է 9-10 տարի¹²¹: Անկասկած, Կիլիկիայում անցկացրած տարիները իրենց կնիքն են թողել Արևելցու ճաշակի ու մտածելակերպի վրա: Հնարավոր է նաև, որ նա Կիլիկիայից իր հետ բերած լիներ XIII-XIV դարերում Արևմուտքում շատ տարածված «մողեղների» մի տեսորակ¹²²:

Նրա աշակերտներից Գևորգ Սկևոացին հայտնում է, որ 1267 թ. գարնան սկզբին Արևելցին տեղափոխվում է Սաղմոսավանք, ապա անցնում Աղջոց և այստեղ ավարտում *Դանիելի մեկնությունը*¹²³: Հիշատակարանում Արևելցին նշում է ավարտման տարեթիվը. 2ԺԷ (1268):

Դանիելի մեկնության խորագիրը ձեռագրում այսպիսին է. «Ար-

120 Գ. ՅՈՎԱԷՓԵԱՆ, *Կոստանդին Ա կաթողիկոս, Նիսիոս և ուսումնասիրություններ հայ արուեստի եւ մշակույթի պատմության*, Նիս Եոթք, 1943:

121 Փ. ԱՆԹԱԲԾԱՆ, *Վարդան Արևելցի, կյանքն ու գործունեությունը*, Երևան, 1987, էջ 38, 57:

122 S. DER NERSESSIAN, « Copies de peintures byzantines dans un carnet arménien de modèles », *Etudes byzantines et arméniennes*, t. I. Louvain, 1973, p. 673 ; HENRI FOCILLON, *L'art des sculpteurs romans*, Paris 1931, pl. XXXIX, XL, XLI, XLII.

123 *Մեկնություն սրբոց երկոտասան մարգարեից*: Արարեալ Ներսիսի Լամբրոնացւոյ Արքեպիսկոպոսի. յաւելեալ նաև ի վերջոյ՝ Մեկնութիւն Դանիելի մարգարեի, արարեալ վարդանայ վանական վարդապետէ համառօտ և լուսաւոր մտօք, Կ. Պոլիս, 1825: Մատենադարանում (Երևան) պահվում են Վարդան Արևելցու «Դանիելի մեկնության» բավական թվով ձեռագրեր. դրանցից են NN 5452, 6089, 6938, 7581, 7854, 9031, 9170 և այլն:

դիմաոր և սուրբ վարդապետին Վարդանայ սակաւ ինչ վաստակ ի սուրբն Դանիէլ և ի նորին մեկնիչսն»: Իսկ սկզբնատողը հետևյալն է. «Որդեակք յոժարեցուցին զհեռաորութիւնս մեր մերձ տանել մերձաւորաց հոգոյն Աստուծոյ...»:

Բուն մեկնությունը սկսվում է Պողոս առաքյալի հետևյալ խոսքերով. «Դանիէլ ի նոցանէ էր, զորս ոչ արժէ աշխարհ, ըստ Պողոսի ապիցն որ Քրիստոսին խօսէր» Վարդան Արևելցի մեկնում է այս խոսքերը հիմնվելով երբայեցիներին ուղղված Պողոսի թղթերից մեկի վրա. ահա այն. «Եւ արդ զինչ եւս ասացից, զի չէ բավական ժամանակս պատմելոյ վասն Գեղէոնի, Բարակայ, Սամիսոնի, Յեփթայեայ, Դաւթի եւ Սամուելի եւ այլոց մարգարեիցն, որք հաւատովք պարտեցին զթագաւորութիւնս, գործեցին զարդարութիւն, հասին անտեսաց, խցին զբերանս առիւծոց, եւ կէսք զտանջանաց եւ զգանից զփորձ առին զկապանաց և զբանտից, կարօտեալք, նեղեալք, չարչարեալք: Զօրս ոչ արժէ աշխարհ: Եւ սոքա ամենեքին վկայեալք ի հաւատոցն, չեւ եւս ընկալան զաւետիսն» (Եբրայ. ԺԱ, 32-38): Վերոհիշյալ հատվածից մեկնիչը ծանրանում է Դանիէլի կերպարի վրա, ընդգծելով ավետարանական այն հայտնի միտքը, որ հավատով կարելի է հրաշքներ գործել: Այնուհետև Արևելցի մեկնում է՝ ասելով, որ իրավամբ անհամեմատելի են աշխարհի սրբերը, որոնք Արարիչի կողմից ընտրվեցին նախքան աշխարհի ստեղծումը: Աշխարհը նրանց շնորհիվ կայացավ, քանզի «հիմունք են աշխարհի» (Մեկն. էջ 242): Ի հաստատումն այս խոսքերի՝ Վարդանը կրկին հղում է Պողոս առաքյալի թղթերը եկեղեցու դասերի վերաբերյալ. «Եւ զորս եղն Աստուծոյն եկեղեցուջ այս են. նախ զառաքեալս, երկրորդ զմարգարէս...» (Ա կորնթ. ԺԲ, 28) և հետո «շինեալք ի վերայ հիման առաքելոց և մարգարէից, որոյ է գլուխս անկեանն Քրիստոս Յիսուս»: (Եփես. զլ. Բ 20):

Դանիէլի կերպարի շեշտադրումը հիշյալ հատվածում միջնադարյան մտածողության տեսակետից թվում է հիմնավորված: Միաստվածության գաղափարը՝ հեթանոսական հավատալիքներով դեռևս լի միջավայրում, այստեղ սահմանվում է ամենայն ուժգնությամբ: Բաղաբանական իշխանությունները ստիպված էին ընդունել մեկ Աստուծո գոյության և նրա հզորության գաղափարը, քանի որ նրանք այդ Աստուծո շնորհիվ է, որ պահում էին իրենց իշխանություն-

նը (Դանիէլ, 4, 31-32, 5, 22-23)¹²⁴: Դանիէլի մարգարեությունը պատկանում է այն գրվածքների շարքին, որոնք մ. թ. առաջին դարերից սկսած որոշ՝ ամենատարածված խորհրդանշանների ներշնչման աղբյուր են հանդիսացել: Միաժամանակ մարգարեությունը Մարդու Որդու հայտնվելու, (Է 13) հրեշտակների՝ որպես անդրանցական Աստուծո և մարդու միջև միջնորդների (Ժ 12, 13) ու մանավանդ հանգուցյալների հարության նկարագրությամբ (ԺԲ 1-3) խթան է հանդիսացել քրիստոնեական հոգևոր մտքի զարգացման համար: Վարդան Արևելցու *Մեկնությունը* հայկական միջավայրում դրա ակնհայտ ապացույցներից է: Մեկնության մեջ Դանիէլը համեմատվում է Քրիստոսի հետ որպես մեկը, որ երկու անգամ գրից անվասս ելավ (Դանիէլ, զլ. Զ 16, 17, ԺԳ 30, 31). «յօրինակ տիրոջն. զի տերն կրկին ի գուր եմուտ, հոգուվն էջ՝ ի դժոխս և ոչ մարմին նորա ետես զապականութիւն»: (Մեկն. էջ 279): Հավանաբար այս և նման, ավելի վաղ մեկնություններն են, որ առիթ են հանդիսացել զուգահեռներ անցկացնելու նաև Դանիէլի և Փրկչի միջև որպես մեծնող ու վերածնվող աստվածության:

Մեկնության ուշադիր ընթերցումը հուշում է, որ Պողոս առաքյալը Արևելցու կողմից արժևորվել է ոչ միայն որպես հանուն հավատի պայքարած նվիրյալ, այլև խորաթափանց հոգևոր մտքով օժտված մի անհատականություն: Նորից հիմնվելով Դանիէլի մարգարեության վրա՝ Վարդանը հիշատակում է հանգուցյալների հարության հետ կապված հետևյալ տողերը. «Եւ իմաստունք ծագեացեն իբրև զլուսաւորութիւն ի հաստատութեան, եւ բազումք յարդարոց իբրև զաստեղս յաիտեանս եւ եւս»: (Դանիէլ, զլ. ԺԲ, 3): Վկայակոչելով Մատթեոսի Ավետարանի ԺԳ գլուխը, ուր խոսվում է Քրիստոսի կողմից ազարակի և որոմների առակի՝ մեկնության մասին, Վարդանը ստեղծում է երկխոսության պատրանք Քրիստոսի և Պողոս առաքյալի միջև: Այստեղ է, որ մասնավորապես ընդգծվում է առաքյալի հզոր անհատականությունն ու նրբիմաց միտքը: Եվ Քրիստոս ասաց. «Յայնժամ արդարքն ծագեացին իբրև զարեգակն յարքայութեան երկնից» (Մատթ.

124 La Sainte Bible, *Traduction œcuménique de la Bible*. Alliance Biblique Universelle, Nouvelle Edition revue, 1988, Introduction, նաև, էջ 1076:

ԺԳ 43, 44) և Պօղոս թե «այլ փառք արեգական, եւ այլ փառք լուսնի, եւ այլ փառք աստեղաց. աստղ քան աստղ առավել է փառօք, զի ըստ լուսաւոր գործոցն լուսափայլին պասկեալ լուսով» (Մեկն. էջ 277, Կորնթ. 1. ԺԵ 41, 42): Այս սեղմ պատկերով Արևելցիներն հատկորոշում է Պողոս առաքյալին որպէս «խօրք մեծութեան» մեկը, որն ի վիճակի է Փրկչի հետ մտնել երկբանության մեջ, ու նույնիսկ լրացնել նրա խոսքը: Եվ այսպէս, Վարդան Արևելցիին Պողոս առաքյալին, հավատի մեջ խաղացած նրա դերով, դասում է բիբլիական պատմության փառահեղ անհատականությունների շարքը. հերոսներ, որոնք փրկութեան արժանացան Աստվածային ներշնչման շնորհիվ: Ինչպէս օրինակ «Դանիէլը, որ անապական մնաց յառիժոցն, որպէս անանիանքն ի հրոյն, և Պօղոս յիժի խածանելոյն»: (Մեկն. էջ 279): Պողոսի՝ իժի հետ կապված պատմությունը ընդհանրության եզրեր ունի Դանիէլի կյանքի մի դրվագի հետ, որը նույնպէս կապված է իժի հետ, որտեղ նկարագրվում է վիշապ օձի թունավորումը մարգարէի կողմից (Դանիել, ԺԴ 22-27): Եվ քանի որ մեկնիչը հիշատակում է Պողոսին Դանիէլի և Անանյանների շարքում, առաքյալի՝ իժի հետ կապված դէպքը առանձնահատուկ հետաքրքրություն է ձեռք բերում մեզ համար: Ահա այն...: «...իժ մի ջերմութենէն էլեալ, կալաւ զձեռանէ նորա: Եւ իբրեւ տեսին բարբարոսքն կախեալ զգազանըն զձեռանէ նորա, ասէին ցմիմեանս, ուրեմն սպանող է այրս այս, որ թեպէտ եւ ապրեցաւ ի ծովէն իրաւունքն չետուն կեալ: Եւ նորա թոթափեալ զգազանն ի հուրն, եղել նմա չար և ոչինչ»¹²⁵: *Գործք Առաքելոց, գլ. ԻԸ 3-6*:

125 Պողոս առաքյալի հետ կապված այս դրվագը թվում է, թե իր պատկերային արձագանքն ունի Կարսի առաքելոց եկեղեցու 12 առաքյալների պատկերաքանդակներից մեկում, որը, իմ կարծիքով, ներկայացնում է Պողոս առաքյալին, դիմահայաց կանգնած, ձեռքերը կրծքի վրա: Նրա ուսերից դեպի թևերը սահում են երկու օձ: Ժ. Մ. Թիերին այս հուշարձանին նվիրված իր մեանագրության մեջ գրում է, որ վարպետը այստեղ պատկերել է Աստվածամորը, բայց, քանի որ նրա մաֆորիոնի ծալքերը ընկալել է օձերի տեսքով, ուրեմն և պատկերել է օձ, հավանաբար շփոթելով Գր. Լուսավորչի հետ: (Տե՛ս J.-M. Thierry, *La Cathédrale des Saints-Apôtres de Kars*. Louvain- Paris, 1978 p. 9, fig 26): Մեանագրության մեջ պատկերի տակի մակագրությունն է «Կույսը»: Եկեղեցին նվիրված է 12 առաքյալների, որոնք պատկերված են թմբուկի շուրջբոլորը և նրանց շարքում Պողոս առաքյալն է, որ ներկայացնում է օձի հետ կապված դրվագը: Բացի դրանից հայտնի է «Այն կարևոր դերը, որ խաղում էին վիշապները (որոնք ըստ էության նույնն էին, ինչ

Պիեր Պրիժանը հիշատակում է պատկերագրական մի տիպ, ուր Դանիէլը կանգնած է օձի դեմ դիմաց և նրա երախի մեջ է շարտում գնդակներ: «Եւ իբրեւ կերաւ պայթեաց վիշապն» (Դանիել, 14, 26, 27): Պրիժանը գրում է. «Սա (Դանիէլն ու վիշապ օձը) երբեմն պատկերվող մի տեսարան է, որը ճշգրիտ տեղադրվում է հրաշքով կենսագործված խնդրանքների ցանկի մեջ, որոնք, Աստծու կողմից որպէս մողելներ պարգևվում էին բիբլիական պատմության որոշ մեծ հերոսների, սնուցանելով նրանց հուսո՝ աղոթքներն ու հավատացյալներին նվիրաբերվող Օճորհի գործողությունները»¹²⁶:

Վարդան Արևելցիին, մեկնելով Դանիէլի, Երեք մայկանց և Պողոսի փրկությունը գազաններից և հրե վառարանից, ասում է՝ Աստված ինչպէս Ադամից ետ առավ շնորհը, այնպէս էլ մյուս մեղավորներից. սակայն մնացյալ անմեղ որդիներին, ինչպէս Մովսիսին, Եղիային, Հեսուին, Եզեկիելին չարգելեց իշխել բոլոր «ստեղծվածների» և դրանց մի մասի (գազանների՞) վրա: Վեց հարյուր տարի անց նրանց հոգիները փրկվեցին, իսկ յոթ հարյուրի ավարտին «գայ՝ գմարմինն փրկէ և ազատէ զհրավիրեալս ի գուրս հողոյ» (Մեկն. էջ 279) և նորից ու նորից նա չի զլանում հղելու Պողոսին. «Այն ունիմք փրկութեան մարմնոյ, զի դեռ յուսով եմք ապրել, այլ յոյս տեսանելի չէ յոյս. զի զոր տեսանէ ոք զի եւն յուսայ: Ապա, եթէ զոր ոչն տեսանեմք յուսամք, համբերութեամբ ակն ունիմք» (Հոովմ. Ը 23, 24):

Հիշատակելով Պողոսին, Դանիէլի ու Անանյանների հետ միասին նույն շարքում, գանց առնելով ժամանակի բնական հոսքը մեկնիչը նրանց բոլորին գետեղում է հավերժական մեծ ժամանակի մեջ, որ-

օձերը) հեթանոս Հայաստանի ամպրոպի և այլ ավանդույթների մեջ: Կարելի է մտածել, որ այդ ծայրահեղորեն կենդանի ավանդույթները շարունակել են հուզել ժողովրդական երևակայությունն ու գիտակցությունը, նաև քրիստոնեության պաշտոնական ընդունումից հետո»: Տե՛ս J.-P. Mahé, *Origène et la baleine: un fragment pseudo-origénien sur Job et le dragon en traduction arménienne*, REArm NS tome XIV, 1980: Նույն հեղինակը այս հարցի վերաբերյալ առաջարկում է ընդարձակ գրականություն: Ուրեմն, ի՞նչ իմաստ ունի այստեղ տեսնել Աստվածամոր պատկերը, գանց առնելով այն, ինչ իրականում պատկերված է: Ավելի ուշ նույն հեղինակը գրում է. «Այս անձը Համբարձման տեսարանից է վերցված. այստեղ Աստվածամոր մաֆորիոնի այլքավոր ծալքերը շփոթված են օձի հետ. սա չհասկացված մի պատճեն է»: Տե՛ս Les arts arméniens fig 62, էջ 154: 126 P. PRIGENT, *Աշխ. էջ 210*.

պես հավատի պատմության էջերում անջնջելի հետք թողած նշանակալի անհատների: Այսպիսով, հին ու նոր ուխտերը, կարծես, միաձուլվում են մշտնջենական մի ասքի մեջ, հաստատելով հոգևոր մտքի անընդմեջ զարգացման ընթացքը: Քանզի, ինչպես ասվում է Սաղմոսում, «հազար ամ յաչս Տեառն որպէս օր երեկի, զի անց, որպէս պահ մի զիշերոյ» (*Սաղմոս ԶԹ 4. Մեկն. էջ 279*):

Պետրոս առաքյալին Արևելքին անդրադառնում է Նաբուգոդոնոսոր արքայի երազի մեկնաբանման առիթով, երբ Մարգարեն ասում է. «Դու արքա տեսանէիր պատկեր մի, և մինչ հայէիր հարաւ ի լեառն են առանց ձեռին վէմ մի և անկաւ ի վերա պատկերին և փշրեաց և մանրեաց զամ. և հողմն ամարայնոյ տարաւ և տեղի ոչ գտաւ, և վէմն եղև լեառն մեծ որ ելից գերկիր» (*Մեկնություն, էջ 248, 249*): Այսպիսով, ժայռից պոկվող անձեռակերտ վեմը, որն իր գահավիժման ճանապարհին խորտակում է բոլոր կուռքերի արձաններն ու մեծանալով լցնում ողջ տիեզերքը, ըստ Արևելքու երկնային թագավորության գալստյան ազդարարումն է Դանիելի կողմից: Թագավորություն, «որ յաիտեանս ոչ եղծամիցի և ինքն կացցե յաիտեան» (Դանիել, գլ. Բ, 34, 35, 44, 45): Արևելքին այստեղ օգտագործում է այլաբանական ուշագրավ մի հնարանը՝ բացատրելով այդ պատկերը նոր հավատից բխող պատկերացումներով. «Իսկ վէմն հատեալ առանց ձեռին՝ չվայել է մարմնաւոր որ հանել, բայց միայն գտրն ի կուսական յարգանդէ առանց ձեռին՝ որ է առանց սերման, որ ձեռն տայ յարգանդի ի կնոջ յղութեան. և ոչ մարդկան ինչ արժանատրութիւն նպաստ եղև մեծի պարգեւին որդոցս Ադամայ. և նա փշրեաց զպաշտելի պատկերս հեթանոսաց և խորտակէ և փշրելոց է մինչև մեծանայ վէմն եւ լնու գերկիր քարոզութեամբ Աւետարանին ընդ գտիեզերս: Այն զի՝ որ հաւատայ ի նա՝ մի ամաչեացէ» (Հոսմ. Թ 33. Ժ 11, Մեկնություն, էջ 250):

Եվ ապա, մեկնիչը շարունակում է իր միտքը՝ մատնացույց անելով Քրիստոսին, որն իր գալուստով վեմ դարձավ յուրայինների համար և պատվիրեց Պետրոսին. «Վէմ լինել եւ այլոց տայր եւ նա ետ հաւատացելոցըն. դուք, ասէ, իբրև զվէմս կենդանիս շինիք տաճար հոգեւոր»¹²⁷ (*Մեկնություն, էջ 250*):

¹²⁷ Այս խոսքերի պատկերային արտացոլումն է V դ. փղոսկրե ուղղանկյուն մի սալիկ, որի վրա պատկերված է Պետրոս առաքյալը՝ ձեռքին մի մեծ խաչ, որը նա

Բայց քանի որ տերը, ըստ Արևելքու, նախ մարգարեներին տվեց գորություն, ապա և Դանիելն էր, որ կանխագուշակեց նաև Փրկչի երկրորդ գալուստը. «Անձամբ գալոց էր գուշակէ... Յերկնից յարուցանէ Աստված թագաւորութիւն, որ բառնայ յատելեացն իւրոյ եւ տայ սիրելեացն, խոնարհացն հոգւով եւ հալածելոցն վասն իւր, և որք զփոքունց պէտքն լնուն: Եւ լնու բանս սկսեալ յառաջին գալստեանէն մինչև յերկրորդն» (*Մեկն. էջ 250*): Բայց մինչև երկրորդ գալուստը՝ Աստված իշխանությունը որոշ ժամանակով կտա նեղին, սակայն նրանից եկող չարիքը «առաւել էր քան զայլսն», քանզի նեղը փառաբանում էր Չարիքը: Իսկ Աստծո Դատաստանը կոչված էր «ապականել ու կորուսանել այն», որպեսզի մեղքն ու մեղավորները պակասեն երկրի վրայից, երկինքն ու երկիրը նորոգվեն, և սրբերը հայտնվեն նոր, ոչ անցավոր, այլ հավիտենական արքայության մեջ (*Մեկն., էջ 253*):

Երկրորդ գալուստը մանրամասնորեն նկարագրված է Դանիելի հինգերորդ տեսիլքում: Ահա այն Արևելքու մեջբերումով. «...Տեսանէի մինչև աթոռք անկանէին և հինաւորցն նստէր... ատեան նստաւ ահագին յորում արդարք հազիւ կեան, եւ դպրութիւնք բացան եւ իւրաքանչիւր որ զգիր պարտուց իւրոց զարժանն ընթեռնու որովք յայտնի լինին արդարութիւն դատաւորին, որ գայ ընդ ամպս նովին մարմնովն... եւ անպատմելի փառօքն Հօր» (*Մեկն. էջ 261, 262*): Եվ ապա, Արևելքին ավելացնում է. «Մինչև ցայս վայր է վախճան բանիս ամ տեսլեանն և մեկնութիւն հրեշտակին, այլև վախճանի աշխարհիս, որ լինի երկրորդ գալստեանն Քրիստոս արդարոց և մեղաւորաց հատուցմանն»:

Մեկնության մեջ Հին և Նոր ուխտերի իմաստաբանական կապը վկայված է Դանիելի Պողոս, Պետրոս առաքյալների և վերջին Դատաստանի միջոցով: Դանիել մարգարեի կողմից կանխագուշակված Փրկչի գալուստը, որ իրականացավ Պողոսի ու Պետրոսի կյանքի ըն-

տեղադրում է մի ժայռակտորի վրա: Համաձայն որոշ ուսումնասիրողների՝ սա այն ժայռն է, որտեղից սկիզբ են առնում դրախտային չորս գետերը, կամ էլ, ինչպես կարծում են այլոք, Գողգոթայի խորհրդանիշն է: Ամեն դեպքում, սա ավետարանական խոսքի այլաբանական արտացոլումն է. «Պատասխանի ետ Յիսուս և ասէ զնա (Պետրոսին) «... Եւ ես քեզ ասեմ, զի Դու ես վէմ և ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ... » (*Մատթեոս, ԺԶ, 18*) Տե՛ս *Medieval Art from Private Collections. A Special Exhibition at the Cloisters*, October 30, 1968 through January 5, 1969. *The Metropolitan Museum of Art*. Pl. 70.

թացքում, հանուն քրիստոնեական հավատի մարտնչած ու նահատակված առաքյալների կարգում է մարգարեի հոգևոր ժառանգորդների դասին: Սակայն, ի տարբերություն հին կտակարանային մարգարեի, որը փրկվեց Աստվածային շնորհով, նրանք զոհաբերեցին իրենց մարմինները հանուն հոգու փրկության: Սա հոգևոր սխրանք էր, որը նախանշեց Նոր ժամանակները: Պողոս առաքյալի հետևյալ խոսքերը վկայում են այդ ժամանակաշրջանում Մտքի ասպարեզում սկիզբ առնող փոփոխությունների ու նաև այն մասին, թե ինչ ուղղությամբ պետք է ընթանար քրիստոնեական մտայնության զարգացումը. «Ջի արդարությամբ օրհնացն կատարեսցի ի մեզ, որք ո՛չ ըստ մարմնոյ գնայցեմք՝ այլ ըստ հոգւոյն: Ջի որք ըստ մարմնոյ են, զմարմնոյն խորհին, և որք ըստ հոգւոյն՝ զհոգւոյն: Ջի խորհուրդ մարմնոյ մահ է, և խորհուրդ հոգւոյն՝ կեանք և խաղաղութիւն» (Հռոմ., Ը 4-7):

Պետրոսը, որպես դասական քրիստոնեության ներկայացուցիչ, ազդարարեց, որ «Յիսուսը Քրիստոսն է, Որդի Աստուծոյ» և արժանացավ Տիրոջ կողմից «Վէմ» կոչմանը, ու ստացավ երկնային արքայության բանալին: Այդ հիպոստասում էլ նա պատկերված է փոքր եկեղեցու շքադրան ձախ կողմին:

Պողոս առաքյալը երեք կարևորագույն մշակույթների՝ հրեականի, հունականի և հռոմեականի կրողը¹²⁸, իր ժամանակի մեջ համամարդկային, այս կերպարով կատարելապես համապատասխանում էր քարոզչի տիպարին և այդ ասպարեզում նա վարեց անդուլ գործունեություն՝ իր հզոր անհատականության հետքը թողնելով քրիստոնեության հաղթական պատմության մեջ: Որպես քարոզիչ էլ նա պատկերված է Աղջոց վանքում:

Վարդան Արևելցիին իր Մեկնությամբ տեսականորեն հիմնավորեց քանդակների ներքին իմաստաբանական կապը՝ ստեղծելով տրամաբանորեն հստակ մի հարադասություն, որի շնորհիվ էլ քանդակաչարը ստացավ պատկերագրական կուռ ծրագրի արժեք: Այնպես որ Վարդան Արևելցու Մեկնության ազդեցությամբ տարբեր ժամանակահատվածներում Աղջոց վանքում կերտված քանդակները հայ արվեստի շրջանակում կարևորվում են նաև որպես անհատական մտքի

¹²⁸ Աստուածաշնչային սուրբեր, ՇՆՈՐՀՔ պատրիարք ԳԱԼՈՒՍՏԵԱՆ, Երևան, 1997, էջ 187:

արգասիք՝ իրենց իմաստային տրամաբանական հստակությամբ այնքան արժեքավոր, որ դյուրությամբ արտահայտվում են պատկերային մտածողության չափանիշներով: Երբ Վարդան վարդապետը մեկնում է Դանիելի և Պողոս, Պետրոս առաքյալների հետ կապված դրվագները՝ կանխագուշակությունից մինչև քրիստոնեության հաղթանակ, նա քաջ գիտակցում է, որ իր խոսքը ճշմարիտ ավարտին դեռ չի հասել: Այն, ընդամենը, ընդհատվում է մի որոշակի հանգրվանի վրա. «...եւ մեք օրհնելով եւ փառաւորելով զԱՅճ յաիտենից... հասաք ի տեղիս՝ որ ասէ. կատարեսցաւ մարգարեութիւն Դանիելի եւ միշտ կատարի ի վերա ամ ժամանակայ մինչեւ ի գալ նեոինն, եւ ի Տեառն Աստուծոյ մերոյ յերկրորդ անգամ գալուստն յերկնից. յորում եւ սուրբք զարքայութիւն Աստուծոյ ժառանգեն, եւ երգեն զբան մարգարեի»: (Մեկնություն, էջ 280):

Եվ ահա գլխավոր եկեղեցու արևմտյան ճակատի մուտքի բարավորի պատկերը, քրիստոնեական համընդհանուր դրամայի վերջին գործողությունը՝ *Քրիստոսի երկրորդ գալուստը*: Եվ այսպես, աշխարհի վերջը ազդարարված է. բայց թե ե՞րբ կգա այդ օրը, ոչ ոք չգիտե: Այդուհանդերձ, մարդիկ իրենց շուրջը փնտրում և տեսնում էին վախճանաբանական նշաններ, իսկ Հայաստանում հատկապես, քաղաքական անհանգիստ իրադրության պայմաններում, դժվար չէր դրանք զգալ: XIII դարի 30-ական թվականներից սկսվել էին թաթարական արշավանքները, երկրում տիրում էր սարսափի ու անհուսության մթնոլորտ: Վախի սահմոկեցուցիչ զգացումով լեցուն օրերը ոգեկոչում էին Հովհանի հայտնության տողերը. «...ասեր ձայն մեծ, յերկերուք զԱստուծոյ եւ տուք փառս նմա զի եկն ժամ դատաստանի նորա» (ԺԴ 7):

Հասավ, վերջապես, վերջին դատաստանը. ինչպե՞ս էր այդ ահարկու օրը պատկերվում արվեստի մեջ, ո՞րն էր դրա ներշնչանքի աղբյուրը: Եվրոպական միջնադարյան արվեստի տեսաբանները գտնում են, որ այն նախ և առաջ Հովհանու հայտնությունն է, և ապա Մատթեոսի Ավետարանը¹²⁹: Եվ իրոք, ոտմանական և գոթական արվեստները լի են հայտնության բնագրի անդրադարձներով: Այստեղ,

¹²⁹ E. MÂLE, *L'art religieux du XIIIe siècle en France*, t. II. Paris, 1958, p. 385-438.

քանդակագործության մեջ, այն պատկերվում է որպես մի ընդարձակ, լայնաշունչ պատմություն, բաղկացած մի քանի դրվագներից: Հավանաբար, որովհետև Հովհանի Հայտնությունը դեռևս IV դարի վերջին քառորդում դասվել է Աստվածաշնչի կանոնի գրքերի շարքում¹³⁰: Նշենք, սակայն, որ հայկական միջնադարյան արվեստում վերջին դատաստանը, ըստ Հովհանի Հայտնության, բացառիկ դեպքերում է պատկերվել, այն էլ միայն մանրանկարչության մեջ: Հայ բարձրագույն կղերը վերապահությամբ է վերաբերվել այդ գրքին, ըստ երևույթին դրա խիստ միասնական, գերիրական պատումի գայթակղիչ բնույթի պատճառով¹³¹:

Աղջոց վանքում, գլխավոր եկեղեցու արևմտյան մուտքի բարավորի վրա ներկայացված է պատումի իմաստաբանական էությունը՝ Քրիստոսը ձվածրի մեջ՝ շուրջը վախճանաբանական 24 երեցները: Կարծում ենք, որ այն Մատթեոսի Ավետարանի (գլ. 25, 34, 35) և Հայտնության (գլ. 4. 1, 2, 3, 4) պատումների կարճատոտ համադրությունն է: Մատթեոսի մոտ խոսք չկա 24 երեցների կամ արդարների մասին. այստեղ ասվում է. «Երբ որ մարդու Որդին գայ իր փառքով», պիտի դիմի նրանց, որոնք իր աջ կողմին են. «Եկայք օրհնելուք Հօր իմոյ, ժառանգեցեք զպատրաստելալ ձեզ զարքայութիւն ի սկզբանէ աշխարհի», իսկ Հովհանու Հայտնության մեջ հետևյալն է. «...եւ ահա աթոռ անդ յերկինս: Եւ ի վերայ աթոռոյն նստէր նման տեսլեան ա-

130 *Dictionnaire d'archéologie chrétienne et de liturgie*. Publié par F. Cabrol et H. Le Clerc. Paris 1930, p. 1791-1835.

131 Հ. ԱՆԱՍՅԱՆԻ, գրում է, որ V դարում Հովհանի Հայտնությունը ճանաչված չէր ո՛չ ասորական, ո՛չ էլ բյուզանդական պաշտոնական կանոններում: Ըստ այդմ էլ բնական է, որ թեև այն թարգմանվեց, սակայն չմտավ Աստվածաշնչի առաջին օրինակի մեջ: Ավելացվել է հետագայում, բայց թե ե՞րբ, պարզ չէ: (Տե՛ս Յ. ԱՆԱՍՅԱՆ, *Մանր երկեր*, Լոս Անջելես, 1987 թ. էջ 1-7): Նույն կարծիքին է և Մանուկ Աբեղյանը: (Տե՛ս Մ. ԱԲԵՂՅԱՆ, *Հայոց հին գրականության պատմություն*. գիրք I, Երևան, 1944, էջ 87: ԿՈՐՅՈՒՆ, *Վարք Մենարայ Մաշտոցի* գրքում կա մի հատված, որ հաստատում է Հայտնության թարգմանության գոյությունը: Այն հետևյալն է. «...Քանզի երկիր, որ համբաւուցն անգամ օտար էր կողմանցն այնոցիկ, յորում ամենայն աստուածագործ սքանչելագործութիւնքն գործեցան. առժամայն վաղվաղակի ամենայն իրացն եղելոց խելամուտ լինէր: Ոչ միայն ժամանակա պաշինցելոցն, այլև յառաջագոյն յախտեմիցն, և ապա եկելոցն սկզբանն և կատարածի...» Մատենագրութիւնք Նախնեաց. Կորիւն, Մամբրէ, Դաւիթ. Վեճեսիկ 1833. էջ 13:

կանց յԱսայոյ եւ Սարդիոնի: Եւ շուրջ զաթոռովն աթոռք քսան եւ չորք, եւ ի վերայ աթոռոյն նստէին քսան եւ չորք երիցունք...»: Աղջոց վանքի Քրիստոսի երկորդ գալուստը վերջին դատաստանի ընդարձակ տիպի նախնական օղակն է և վերոբերյալ հատվածների կարճատոտ համադրումը: Որպես մոտավոր նախատիպ հայ արվեստի շրջանակներում՝ այն ունի Աղթամարի որմնանկարը, որը դժբախտաբար շատ վատ է պահպանվել: Եվ այնուամենայնիվ, ս. Խաչ եկեղեցու հարավային կողմի դռան վերին մասում, ըստ Ս. Տեր-Ներսեսյանի, կարելի է տեսնել Քրիստոս-կիսանդրի՝ ձեռքը օրհնող շարժումով բարձրացրած, իսկ նրանից վար, երկու շարքով կանգնած եմ ֆիգուրներ (արդարները?), որոնց դիմում է Տերը¹³²: Նույն հորինվածքին է հետևում XI դ. Հոռոմոսի վանքի ժամատան գմբեթի նիստերից մեկի քանդակը, միայն թե այստեղ երեցները ութն են, ըստ երևույթին տեղի սղության պատճառով¹³³:

Տեր-Ներսեսյանը նշում է, որ Աղթամարի որմնանկարի հիշյալ հորինվածքը հուշում է IX դարի բյուզանդական երկու ձեռագրերի վերջին դատաստանի մանրանկարների հետ ունեցած կապի մասին: Ձեռագրերից մեկը, որ պահվում է Վատիկանի գրադարանում (Cod. Vatic. gr. 699) 6-րդ դարի հեղինակ Կոզմաս Հնդկաչուի Քրիստոնեական տեղագրություն գրվածքի կրկնօրինակն է: Այստեղ IX դարի նկարիչը պատկերագրող է Տեղագրության այն հատվածը, որտեղ Կոզմասը նկարագրում է տիեզերքի կառուցվածքը: Այդ մանրանկարը ներկայացնում է մի երկայնակի, կիսաշրջանով ավարտվող ուղղանկյուն: Վերին մասում, «գմբեթի» տակ Քրիստոսն է՝ գահի վրա, ձախ ձեռքին գիրք: Մնացած մասը բաժանված է երեք հատվածի. հրեշտակներ, մարդիկ, որ երկրի վրա են և վերջապես դեպի կյանք դարձող մեռյալներ: Նույն այս սխեման կրկնվում է IX դարի մեկ ուրիշ՝ Հովհաննես Դամասկացու Սրբազան զուգահեռներ ձեռագրում, որ գտնվում է Փարիզի Ազգային գրադարանում (cod. gr. 923):

Անդրե Գրաբարը փորձում է թափանցել այս պատկերագրության խորքերը, ցույց տալով պատկերագրական տիպի զարգացման ա-

132 S. DER NERSESSIAN, *Agh'amar*, p. 47, pl. 50. 79.

133 J.-M. THIERRY, *Le couvent arménien d'Horomos*. Louvain-Paris, 1980.

կուճքները: Նա գտնում է, որ այդ տիպի նախօրինակը՝ V դարով թվագրվող, Հոռոմի Բարբերիհի թանգարանում պահվող թրծած կավե դիսկն է: Սրա վրա պատկերված է Վերջին դատաստանի արխայիկ տարբերակը՝ ներշնչված, ըստ Գրաբարի, հոռոմեական կայսերական արվեստից¹³⁴: Քրիստոնեական արվեստի ակունքները, հոռոմեականի միջոցով բացահայտելու միտումը, անշուշտ, անհիմն չէ, բայց միշտ չէ, որ այն համոզեցուցիչ է: Դրա փոխարեն միանգամայն տրամաբանական և հիմնավորված է թվում Ս. Տեր-Ներսեսյանի տեսակետը, համաձայն որի երկու մանրանկարներն էլ, հավանաբար, ծագում են Քրիստոսի երկրորդ գալստյան կոթողային այն հուշարձաններում տեղ գտած հորինվածքներից, որոնք նախորդել են Վերջին Դատաստանի զարգացած տիպին, ինչը որ տեսնում ենք XI դարից սկսած բյուզանդական արվեստում: «Աղթամարը այժմ, չնայած թեթևակի տարբերություններին, ապացուցում է, որ այդտեղ մենք ունենք նույն հիմնական սխեման, ինչ և IX դարի երկու մանրանկարներում», – ասում է Սիրարփի Տեր-Ներսեսյանը¹³⁵: Մեկ ուրիշ առիթով նա գրում է, որ արաբների տիրապետության ժամանակ արվեստը Հայաստանում անկում ապրեց, սակայն «Երբ երկիրը ազատագրվեց, արվեստագետները, բնական է, որ որպես մոդելներ անդրադարձան այն գործերին, որոնք ստեղծվել էին արաբական նվաճումից, այսինքն՝ VII դարից առաջ»¹³⁶:

Արդյոք Աղթամարի որմնանկարները գեղակերտող նկարչի համար ներշնչման աղբյուր չի՞ ծառայել Հայաստանի Տաշիր-Չորագետ գավառում VII դարի երկրորդ կեսով թվագրվող Օձունի հուշակոթող մահարձանը: Դրա մոտավորապես չորս մետրանոց երկու հուշայունները, դեպի վեր ձգվելով, հետզհետե սեղմվում են և ավարտվում կորագծով: Դրանցից մեկի՝ հարավայինի արևմտահայաց մակերեսը բաժանված է ընդերկայնական ուղղանկյունների: Ամենավերին

134 A. GRABAR, *L'empereur dans l'art byzantin*. Paris, 1936 p. 208, 250-251, fig. 10.

135 S. DER NERSESSIAN, *Aght'amar*, p. 47. տե՛ս նաև N. THIERRY, "Le cycle de la Passion et de la Résurrection de L'église d'Aghtamar comme expression de la religion au Vaspurakan", *REArm.* t. 26. Paris 1996-97; N. Thierry, "Le cycle de la création et de la faute d'Adam a Aghtamar", *REArm.* 27. Paris, 1983. TH. F. MATHEWS, "THE Genesis Frescoes of Aghtamar", *REArm.* XVI, 1982.

136 *Նույնը*, էջ 23:

հատվածում՝ կորագծի («գմբեթի») տակ, ինչպես Կոզմասի Վատիկանի կրկնօրինակում, հստակ գծագրվում է գահույքին նստած Քրիստոսը՝ ձախ ձեռքին գիրք: Այնուհետև մնացած չորս ուղղանկյուններից յուրաքանչյուրի մեջ պատկերված են երկուական սրբեր լուսապակներով: Վերջին ուղղանկյունուց հետո քարը խիստ մաշված է և այլևս ոչինչ չի երևում¹³⁷: Թվում է, թե Օձունի այս հարթաքանդակը իր դրվագային կառուցվածքով, իմաստային հենքով ու մանավանդ Քրիստոսի պատկերագրական տիպով շատ ավելի մոտ է Կոզմասի ձեռագրից պատճենած մանրանկարին, քան Բարբերիհի դիսկը:

Աղթամարից և Հոռոմոսի վանքի ժամատան գմբեթի պատկերաքանդակից հետո Վերջին դատաստանի ամանատիպ պատկեր մեզ հայտնի հուշարձաններում չենք գտնում:

XIII դարի հայկական հուշարձաններում, ուր առկա է այդ սյունեն դիտարկվում են փոփոխություններ: Դա հատկապես նկատելի է Կիլիկյան մանրանկարչության մեջ: Քրիստոսի երկրորդ գալուստը պատկերը որոշ ձեռագրերում մեկնաբանվում է որպես մի քանի դրվագներից բաղկացած մի մեծ դրամա¹³⁸, հավանաբար, Արևմտյան արվեստի ազդեցության ներքո:

Խիստ հետաքրքիր, դժբախտաբար եզակի մի պատկերաքանդակ կա Հովհաննավանքի (XIII դ. կես) եկեղեցու բարավորի վրա: Քրիստոսի երկրորդ գալուստը պատկերող, հայ արվեստում հազվագյուտ հանդիպող ընդարձակ տիպից՝ այստեղ ներկայացված է ընդամենը մեկ այլաբանական դրվագ. *հինգ հիմար և հինգ իմաստուն կույսերի* առակը: Բոլոր կույսերը Հովհաննավանքում մորուքավոր են, արական կերպավորումով և հանդերձանքով: Պետք է ենթադրել, որ այս հարթաքանդակը հետապնդում էր ուսուցողական նպատակ, ուղղված վանքի վանականներին¹³⁹: Նույն այս պատկերագրական տիպը հանդիպում է XIV դարում Վասպուրականի մանրանկարչու-

137 Բ. ԱՌԱՔԵԼՅԱՆ, Հայկական միջնադարյան պատկերաքանդակները, էջ 44-47, նկ. 16, 17: P. DONABÉDIAN, J.-M. THIERRY, *Les arts arméniens*, fig 807, 808. ՋԱՐՈՒԷԻ ՀԱԿՈՒԹՅԱՆ, «Օձունի կոթողի պատկերների մեկնաբանման հարցի շուրջ»: *Լջմիածին* ամսագիր, 2005, Ա., էջ 75-83

138 S. DER NERSESSIAN, *L'art arménien*. Paris, 1977, fig. 92

139 Ա. ЗАКАРЯН, «Об одном рельефе из Ованнаванка», Вестник АН Арм. ССР, 1973, N 1.

թյան մեջ¹⁴⁰: Նշենք, որ կույսերի առակը XII-XIII դարերի արևմտյան հուշարձաններում վերջին դատաստանի ընդարձակ տիպի մի մասն է կազմում¹⁴¹:

Այսպիսով, մենք ունենք XIII դարի առաջին կեսին ստեղծված երկու հարթաքանդակ, որոնք արդեն վկայում են մտայնության որոշակի փոփոխությունների մասին հայ մշակույթի շրջանակներում: Այս պահին մեզ հատկապես հետաքրքրում է Աղջոց ս. Ստեփանոսը, որ վերջին դատաստանի պատկերաքանդակը իր մեջ կրում է Հովհանի Հայտնության արձագանքները: Ուրեմն, պետք է ենթադրել, որ Հայտնությունը Լամբրոնացու թարգմանությունից հետո արդեն ներմուծված էր եկեղեցական կանոնի մեջ և հնարավոր է նույնիսկ շատ ավելի վաղ, քան XIII դարը:

Դեռևս V դարում (ինչպես արդեն հիշատակել ենք), երբ Կորյուն վարդապետը գրում է Սուրբ գրքի թարգմանությունների մասին, պարզ է դառնում, որ դրանց շարքում պետք է որ եղած լինի և Հայտնությունը: Այնուհետև, X դարից սկսյալ, մատենագրության մեջ երևում են հիշատակումներ Հովհանի Հայտնությունից¹⁴²: Եվ այնուամենայնիվ, դրանք արվեստի մեջ լուրջ ձևափոխությունների երաշխիք չէին: Վերջին դատաստանի պատկերագրության մեջ իրական փոփոխությունների համար խթանիչ ուժ հանդիսացավ Հայտնության մեկնության թարգմանությունը 1179 թվին Ներսես Լամբրոնացու կողմից՝ Անդրեսա և Արեւտաս կեսարացիների հունարեն մեկնությունից¹⁴³: Լամբրոնացու հայեցակետը այս գործի կարևորության մասին և նրա հուժկու գրիչը փոխեցին մտքերի ուղղությունը Կիլիկիայում: Մեկնության հիշատակարանում Տարսոնի եպիսկոպոսը գրում է. «Աստվածաբան ավետարանիչ Հովհաննի Հայտնությունը,

որը որպես վկայություն մեծարված է մեր սուրբ հայրերի վարդապետությունում, ազատեց ոմանց այդ գործի մեջ այլանդակություն տեսնելու գայթակղությունից»: Այնուհետև նա թվարկում է բոլոր այն աստվածաբաններին, որոնց շնորհիվ Հայտնությունը դասվել է «ի կարգս աստուածաշունչ նորոյ կտակարանացն» և որոնց համախոհն է ինքը¹⁴⁴:

Այսպիսով, համալիրի էքստերյերի (արտաքին կողմի) պատկերաքանդակների շարքը XIII դ. 70-ական թվականներին ավարտվեց Պողոս, Պետրոս առաքյալների պատկերաքանդակներով: Եվս երկու ոչ մեծ դիմաքանդակ կա գլխավոր եկեղեցու ներսում՝ բեմի ճատակային պատի սալիկներից մեկի վրա. ութանկյուն աստղի մեջ դեմ հանդիման՝ մեկը կիսադեմ, մյուսը՝ երեք քառորդ, պատկերված են երկու դեմք: Երկուսն էլ կրում են սելջուկյան տիպի, ոչ շատ բարձր գլխարկներ: XIII-XIV դարերում Հայաստանում կոտորակա քանդակները լայն տարածում ունեին և հիմնականում գետեղվում էին եկեղեցիների արտաքին պատերին¹⁴⁵:

Աղջոցի պարագան առանձնահատուկ է. պատկերաքանդակները այստեղ գետեղված են եկեղեցու ներքնամասում և այն էլ ամենակարևոր տեղում: Ի սկզբանե ասենք, որ մեզ ավելի քան հավանական է թվում, որ այս վանքում ներկայացված են Իվանե և Ջաքարե Ջաքարյանները, որոնց տիրույթներում էր գտնվում վանքը, և որոնք մեծ դեր խաղացին նրա հոգևոր կենտրոն դառնալու գործում: Ջաքարյանների առաջին. նույնպես զուգապատկեր քանդակը ներկա է 1201 թվին հիմնադրված Հառիճի վանքի արևելյան պատին: Այստեղ նրանց միջև պատկերված է մի սրբապատկեր (իկոնա)¹⁴⁶: Ջաքարյան եղբայրներին անդրադարձած պատմիչները և հետագայում էլ պատ-

140 А. ЗАКАРЯН, *Из истории васпураканской миниатюры*, Ереван, 1980, рис. 24.

141 E. MÂLE, *L'art religieux du XIIIe siècle en France*, p. 386.

142 ԹՈՎՄԱՅԻ ԱՐԾՐՈՒՆԻՈՅ, *Պատմութիւն տանն Արծրունեաց, ի Պետերբուրգ*, 1887 թ. էջ 24: ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ, «*Մատենան ողբերգութեան*»: Աշխատասիրությանը Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, Երևան, 1985, էջ 303:

143 *Մեկնութիւն Յայտնութեանն Յովհաննու* արարեալ Անդրէի և Արեւտասայ եպիսկոպոսացն Կեսարու թարգմանեալ ի յոյն բնագրէ և սրբագրեալ Տ. ՆԵՐՍԵՍԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՏԱՐՍՈՆԻ ԿԻԼԻԿԵՑԻՈՅ, Երուսաղեմ, 1855:

144 *Մեկնութիւն Յայտնութեան...*, էջ 319:

145 Նշենք 13-14-րդ դարերում հայտնի մի քանի կոտորակա քանդակներ. խորանաշատում՝ Սմբատ և Գուրգեն Բագրատունիները եկեղեցու մանրակերտով. Գանձասարում, Հաղարծինում Ջալալյան իշխանները, Դաղիվանքում Արզու խաթունը իր երկու զավակներով և այլն: Տե՛ս P. DONABÉDIAN, J.-M. THIERRY, *Les arts arm.*... fig. 87, 52, 347, 350, 736, 737.

146 Н. СТЕПАНИАН, А. ЧАКМАКЧЯН, *Декоративное искусство средневековой Армении*, А-г, 1971, илл. 45. E. UTUDJIAN, *Les monuments arméniens du IV^e au XVII^e siècle*. Paris 1967, fig. 188.

մաքանները նշում են Իվանեի հունադավան լինելը, բայց ոչ երբեք Չաքարեի: Այսպես, Վարդան Արևելյին գրում է. «Բայց Իւանէ խաբեալ ի թագուհոյն Թամարայ՝ տկարացաւ ի հաւատոյն, և անյաջողեալ նմա ըմբռնեցաւ գերի ի Խլաթ... իսկ Չաքարէ եղբայրն Իւանէի մնաց ի սեպհական հաւատն»¹⁴⁷: Նույնն է վկայում և Կիրակոս Գանձակեցին Իվանեի մասին. «...զի Իւանէն խոտորեց յաղանդն Քաղկեդոնի, յոր կործանեալ էին Վիրք. զի սիրեաց նա զփառս մարդկան առաւել, քան զփառս Աստուծոյ. հրապուրեալ նա ի թագուհոյն որ Թամարն կոչէր...»¹⁴⁸, մինչդեռ Չաքարեին ներկայացնում է որպես հայոց հինավուրց ավանդույթների վերականգնողի, առաքելական եկեղեցու հավատարիմ զավակի, որի խոստովանահայրն ու խորհրդատուն էր «զմեծ վարդապետն» Մխիթար Գոշը: «Քանզի Չաքարէ խոստովանութեամբ նորա հոգևոր որդի էր», եկեղեցասեր ու բարերար¹⁴⁹: Չաքարեին որպես հավատարիմ հայադավան է ներկայացնում Ծնորհք արքեպիսկոպոս Գալուստեանը¹⁵⁰: Իսկ Մաղաքիա Օրմանեանի հետևյալ խորագետ բնորոշմամբ ամբողջանում է Չաքարե Սպասալարի կերպարը՝ իր պատշաճ տեղը գրավելով Հայոց պատմության ու մշակույթի մեջ: «Չաքարէի անունը իր պատույ տեղը պէտք է գրաւէ ազգային պատմութեան մէջ, իր եկեղեցւոյն հաւատարմութեան եւ անոր պայծառութեան համար ունեցած ջանքերուն, եւ օտար իշխանութեան ալ ծառայելով իր ազգը պաշտպանելուն համար»¹⁵¹: Այս բնորոշումը նաև պատասխան է այն օրինական հարցին, թե, այնուամենայնիվ, ինչու էր Չաքարեան պատկերված իկոնայով: Թվում է, թե քաղաքագետ իշխանի կողմից, որը հայ վրացական բանակի զորավարն էր, նման քայլը պարզապես հարգանքի տուրք էր իր հետ՝ հայերի կողքին մարտնչող ու հաղթող վրացի զինվորների նկատմամբ: Գարեգին Հովսեփյանը գտնում է, որ Չաքարեան սպասա-

147 ՎԱՐԳԱՆ ԱՐԵՎԵԼՅԻ, *Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի յուսարանեայ*, Վենետիկ, 1862, էջ 138:

148 ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, *Պատմագիրք հայոց*, Բ., Վենետիկ, 1865, էջ 81:

149 Նույնը, էջ 83, 111:

150 ԸՆՈՐՀՔ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ *Հայագի սուրբեր*, Երևան, 1997, էջ 351:

151 ՄԱՂԱՔԻԱ ՕՐՄԱՆԵԱՆ Արքեպիսկոպոս ՕՐՄԱՆԵԱՆ, *Ազգապատում, Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը*, յարակից ազգային պարագաներով, Կ. Պոլիս, 1914, հատված 1091:

լար է կարգվել 1193 թվից հետո¹⁵², այսինքն՝ Հատիհի հիշյալ պատկերաքանդակի ստեղծման ժամանակ նա արդեն սպասալար էր: Իսկ, XIII դարի առաջին տասնամյակում, երբ կառուցապատվում էր Աղջոց վանքը, Չաքարյանները իրենց փառքի գագաթնակետին էին: «Հայաստանն արդէն մաքրուած էր սելջուկներից... Յաղթական զորապետը նուաճում է Ատրպատականի մի մասը Մարանդ և Արդաբիլ քաղաքներով»¹⁵³:

Ըստ արձանագրությունների, այդ ժամանակաշրջանում Չաքարյանները Հայաստանի և Վրաստանի փաստական տերերն էին. այդ մասին աներկբայորեն խոսում են վիմագիր հիշատակարանները: Ահա դրանցից մեկը. «սբ և մեղսաքաւիչ-պատարագն որ ի սմա կատարի Սահակաղխտո է ծնաւղի Չաքարեա և Իւանէի թագաւորաց հայոց»¹⁵⁴: Այս արձանագրությունը զետեղված է Անհի Աղջկաբերդի եկեղեցու ավագ խորանի ձախ ավանդատան զլխին: Բայց, իհարկե, կարևոր էր նաև պատմության էջերի մեջ ամրագրել բարձրատոհմիկ ծագումը, և ուրեմն նրանց ձգտումը իրենց ծննդաբանությունը կապելու իշխանական ամենանշանավոր տոհմերից մեկի՝ Բագրատունյաց հետ, բնական է: Որպես խոհեմ քաղաքագետներ, նրանք լավ էին ըմբռնում թագավորական տոհմից սերված լինելու կարևորությունը, իրենց տոհմի շարունակականությունն ապահովելու հարցում, և հիմնականում իրենց համարում էին Բագրատունյաց հարստության ժառանգորդներ: Չաքարեի և Իվանեի անունով հաճախ են հանդիպում «թագավոր, շահնշահ և նույնիսկ կեսար տիտղոսները»: Հաղարծնի վանքի արձանագրության մեջ կա ևս մի հիշատակագրություն, որ հիշվում են Բագրատունիները: «Ես Նանա է, յազգէ Բագրատունեաց դուստր Մեծին Սարգսի, քոյր Չաքարէի եւ Իւանէի...»¹⁵⁵: Բագրատունի իշխանների կերպարները այնքան ոգևորիչ էին նրանց համար, որ

152 ԳԱՐԵԳԻՆ ՅՈՎՍԷՓԵԱՆ, *Խաղբակեանք կամ Պոռնեանք*, էջ 4:

153 Նույնը, էջ 5:

154 Չաքարեի և Իվանեի մայրը՝ Սահակաղուխտը Արծրունի տոհմից էր և քոյրն էր նշանավոր Ամիր Քուրդ իշխանի: Վերջինս անունով էլ, եղբայրները հիշվում են պատմիչների մոտ: Տե՛ս ԱՐԱՄ ՏԵՐ՝ ՂԵՎՈՆԴԵԱՆ, «Չաքարիայի և Իվանեի արաբատառ արձանագրությունը Անբերդում»: *Հողվածների ժողովածու*, Երևան, 2003, էջ 206-209:

155 *Վիմական տարեգիրք*, կազմեց Կ. ԿՈՍՏԱՆԾԱՆՑԸ, Պետերբուրգ, 1913, էջ 36:

թվում է, թե նրանք հակված էին վերակենդանացնելու Բագրատունիների ուզմամբ արական ծրագրերից որոշ հատվածներ¹⁵⁶:

Կարծես թե իշխանների պատվախնդրությունը բավարարելու բոլոր նախադրյալները կային: Եղբայրները բարոյական իրավունք էին ստանում՝ գետեղելու իրենց դիմաքանդակները եկեղեցու ամենախորհրդակիր տեղում: Ջույգ դիմաքանդակը, ամփոփված ութթևանի աստղի մեջ, հայտնվում է խորանի ճակատակալ սալիկներից մեկի վրա: Խորհրդապաշտական իմաստով օժտված զարդանախշի մեջ, ինչպիսին է ութթևանի աստղը, պատկերված դիմանկարները պետք է որ պատկանեին հասարակական պաշտոնակարգում ամենաբարձր դիրք գրավող անհատների:

Ջարդաքանդակի, հատկապես բուսական նախշազարդերի մեջ մարդկային դեմք պատկերելու հին արևելյան ավանդույթը հայտնի էր հայ արվեստում դեռևս VII դարում: Աղջոց վանքից ընդամենը մի քանի կմ հեռու, նույն Քեղվա կամ Գառնու ձորում, Ազատ գետի հովտում գտնվող Բայբուրթ գյուղում կա VII դարով թվագրվող մի եկեղեցի: Այդ եկեղեցու խոյակներից երկուսի վրա, արմավենիկներից կազմված նախշերի մեջ, քանդակված են երկու դիմահայաց գլուխ: X դարում այս ավանդույթը նույն սկզբունքով, բայց և ժամանակին և տեղին համապատասխան մեկնաբանված, դրսևորվել է Աղթամարի սբ. Խաչ եկեղեցին բոլորող խաղողի գոտում, ուր պատկերված են մարդկային ֆիգուրներ, այդ թվում նաև Գագիկ արքան՝ բուսական զարդանախշի մեջ:

Այնուհետև, 1217 թվին, Այրիվանքում (Գեղարդ) Սարգիս ծաղկողի կողմից նկարազարդված Ավետարանի խորաններից մեկում, բուսական խորքի վրա պատկերված են մարդկային դեմքեր (Մատենադարան, ձեռագիր N 4509): Վերջին օրինակը հատկապես հետաքրքիր է նույն աշխարհագրական տարածքում կատարված լինելու հանգամանքով: Նույնատիպ հորինվածք կա Գեղարդի վանքի գավթի մուտքի բարավորի վրա:

156 Այս ասելով՝ մենք նկատի ունենք Ն. ԱԴՈՆՑԻ Բագրատունիներին վերաբերող հետևյալ միտքը. «Ընդգրկել կովկասը, ինչպես մի մեծ ընտանիք մի քաղաքական կենսակցության շաղկապի մեջ»: Ջաքարյանները ձգտում էին իրականացնել, նրանց փորձի մի մասը, գոնե Հայաստանի և Վրաստանի միավորմամբ: Տե՛ս Ն. ԱԴՈՆՑ Պատմական ուսումնասիրություններ, 1948, Պարիս, էջ 156:

Ինչ վերաբերում է ս. Ստեփանոս վանքի հիշյալ պատկերաքանդակին, ապա նշենք, որ այն յուրահատուկ է թե իր կատարման ոճով, թե հորինվածքային կառուցվածքով՝ հիմնավորապես տարբերվելով այս վանքի համաժամանակյա մյուս անտրոպոմորֆ քանդակներից: Այդ պատկերաքանդակի ներկայությունն այստեղ վկայում է այլ ուղղության հարող մի քանդակագործ վարպետի մասին, որը, ըստ երևույթին, ավելի հակված էր դեպի արվեստի հին արևելյան դասական օրինակները: Դատելով այդ զույգ դիմաքանդակից՝ քանդակագործը գերազանց տիրապետում է իր հատիչին, հիանալի զգում է քարի ֆակտուրան, ի վիճակի է դեմքի համաչափությունները և ձևը իրապաշտորեն արտահայտել՝ միաժամանակ խուսափելով չոր, սխեմատիկ լուծումներից: Այս բոլորը, գլխարկների ընդգծված հնամենի ձևի հետ միասին, պատկերաքանդակին հաղորդում են մի այնպիսի որակ, որն իր մշակվածության մակարդակով հիշեցնում է հին արևելյան քանդակագործության նմուշները: Վարպետը ինքն էլ իր ստեղծագործությունը հավանաբար դիտել է որպես այդ արվեստի մի վերհուշ, հավատարմության ու կարոտի մի տուրք նրա դարավոր ավանդույթներին:

Մի ժամանակաշրջանում, երբ Հայաստանը պարբերաբար ասպատակությունների էր ենթարկվում մահմեդականների կողմից, երբ մտահոգության առարկա էր ազգային ինքնության ու հայոց իշխանության գոյատևումը երկրում, Ջաքարյան եղբայրների դիմաքանդակների հայտնվելը եկեղեցու ամենանշանակալի տեղում՝ արսիդի ճակատակալ քարերից մեկի վրա, թվում է՝ ինչ-որ չափով խորհրդապաշտական: Քաջ գիտակցելով մեղսաքավիչ պատարագի դերը հավատացյալների կյանքում, Աստուծո նախախնամությամբ Բագրատունյաց շառավիղներ, սեփական «ժառանգութիւն նախնեաց» ստացած Ջաքարյանները, ապավինում էին նրա խորհրդին՝ ժամանակի և սերունդների հիշողության մեջ հավերժանալու համար: Եվ իրոք, ի՞նչ կար մարդու հոգևոր աշխարհին ավելի մտերմիկ ու հուզիչ, քան բոլոր արվեստների էությունը իր մեջ խտացնող պատարագը:

Արդ, ո՞րն էր այն իմաստաբանական հենքը, որ համախմբում էր տարբեր ժամանակահատվածներում ստեղծված պատկերաքանդակները մի միասնական ծրագրի մեջ: Եվ ի՞նչ էր այն առաջարկում

հավատացյալների բազմությանը՝ որպես բարոյա-էթիկական խնդիր:

Վանքի պատերի վրա ծավալվում է աշխարհի ստեղծման պատկերազարդ պատմությունը՝ զուսպ, առանց երկարաբանության, հիմնական դեմքերի ու անցքերի շեշտադրումով: Այդ պատմությունը սկսվում է արևելյան պատից, որը հիշեցնում է մեզ, որ եկեղեցին, արարչագործության իր խորհրդապաշտական նշանակությամբ, երկրային դրախտն է: Ապա շարունակվում է Հիմնկտակարանային կարևորագույն դեմքերից մեկի՝ Դանիել մարգարեի պատմությամբ: Դանիելը մարմնավորում է բոլոր նրանց չարչարանքները, որոնք հին և նոր օրերում ամբաստանվեցին հանուն հավատի: Նոր Աշխարհում դաժան պատժի ենթարկվեցին Քրիստոսի մերձավորագույն աշակերտներ, ընտրյալ զոհեր Պողոսն ու Պետրոսը, որոնց պատկերաքանդակները կերտված են փոքր եկեղեցու արևմտյան պատին: Եվ ուրեմն, ովքեր այս «արդարութեան պատուիրանին հաւատարիմ» մնան¹⁵⁷ կփրկվեն և Վերջին դատաստանի ժամանակ կարժանանան Աստուծո արքայությանը:

Պատկերային շարքը ավարտվում է փոքր եկեղեցու արևմտյան պատի առաքյալների պատկերաքանդակներով: Այսպիսով, ուրվագծվում է քանդակաշարի պատկերագրական ծրագիրը. արարչագործություն, հավատի փառավորում հին ու նոր աշխարհների մարգարեների ու սրբերի միջոցով, և փրկություն, որը կգա Քրիստոսի երկրորդ գալուստով, երբ արդարներն ու մեղավորները կհատուցվեն ըստ արժանվույն: Այստեղից էլ բարոյական այն խորհուրդը, որ հավատացյալներին էին առաջարկում ժողովրդի հոգևոր ու աշխարհիկ առաջնորդները: Պետք է ամուր մնալ հավատի մեջ, ինչպես Դանիելը, Պողոս, Պետրոս առաքյալները, թող որ անհավատների կողմից դաժան լլկանքների ենթարկվելու գնով, մինչ կգա Ահեղ դատաստանի օրը, և արդարները կարժանանան Աստուծո Արքայությանը: Ուրեմն թե միանգամայն օրինաչափ է, որ Քրիստոսի մերձավորագույն աշակերտներ Պողոսն ու Պետրոսը իրենց գործունեության շնորհիվ, դեռևս քրիստոնեության առաջին դարերում ներգրավվել են փրկու-

թյան հարացույցի կարևոր դերակատարների շարքը. և որպես այդպիսիք նրանք զբաղեցնում են իրենց հաստատուն տեղը հայ մշակույթի կոռ համակարգում: Առաքյալների քանդակներով ամբողջանում է Աղջոց վանքի պատկերագրական ծրագիրը: Այն ընդգրկում էր պատկերային մեկնաբանությամբ իրարից խիստ տարբերվող գործեր: XIII դարի համեմատաբար ազատ ոգին չէր կաշկանդում ստեղծագործական տարբեր մղումների դրսևորմանը, ուրեմն և նրանց համադրությանը մեկ իդեայի շուրջ:

157 ԱԳԱԹԱՆԳԵՂԱՅ Պատմություն Հայոց... պարբերություն 605:

ՊԱՏԿԵՐԱՔԱՆԴԱԿՆԵՐԻ ՈՃԸ

Աղջոց վանքի քանդակային համակարգի զուտ նախազարդային տարրերը բազմազան են ու հարուստ իրենց տարբերակներով: Դրանցից ամենաչքնադակերպն ու խորհրդավորը արևելյան պատի վարդյակ սկավառակն է: Սկավառակի երկրաչափական տարրերը հիշեցնում են հայ ճարտարապետության դասական շրջանի պաշտամունքային կառույցների վրա հաճախ հանդիպող նախշերը: Սակայն դրանց ամփոփումը փակ շրջագծի մեջ, որպես ինքնուրույն, կոտ հորինվածք, ստանում է բոլորովին այլ իմաստային նշանակություն, որի մասին վերը խոսվել է: Նման սկավառակներ այլազան նախշազարդերով տարածված էին քրիստոնեական Հայաստանում (V-VI դդ. Փարբիի խորանարդաձև հենարանի, Երեբունի, Աթենիի¹⁵⁸ պաշտամունքային կառույցների վրա): Դրանք ներկա են նաև XII-XIII դարերի ողմանական, գոթական տաճարներում¹⁵⁹, ինչպես նաև մահմեդական մզկիթների հարդարանքում ու կավագործության մեջ¹⁶⁰: Այնուհետև հասուն միջնադարում, հավանաբար, իսլամական արվեստի ազդեցությամբ, սկավառակը իր նախազարդերով կրում է զանազան փոխակերպումներ, հարստանում նոր տարրերով, դառնում շատ ավելի խորձատես:

Համալիրի զարդանախշային համակարգի մնացած տարրերը՝ արմավենիկներ, քառաթերթ ոճավորված ծաղիկներ, բուսական այլևայլ նախշեր, իրենց պատկերագրությամբ համահունչ են հայկա-

կան զարդարվեստի հնուց ի վեր հայտնի տիպերին: Երբեմն գրաֆիկական հստակությամբ, երբեմն այնքան նրբագեղ, որ մակերեսի տատանումները հազիվ նշմարելի են, այդ բուսական, երկրաչափական կամ թոչնակերպ քանդակները միշտ էլ կատարված են բարձր մակարդակով ու մեծ հմտությամբ: Մինչդեռ գլխավոր եկեղեցու պատկերաքանդակները, մասնավորապես Դանիելը առյուծների գրում և Վերջին դատաստանը գեղակերտման մակարդակով մեծապես զիջում են զարդաքանդակներին: Դրանք հայ քանդակագործության ավանդական, դեռևս հուշակոթողներից հայտնի, ոճով պահպանողական ստեղծագործություններ են:

Բոլորովին այլ ոճական սկզբունքների մասին են խոսում հենց այս նույն վանքում 70-ական թթ. կերտված Պողոս, Պետրոս առաքյալների պատկերաքանդակները: Այդ քանդակների կատարողական առանձնահատկությունները վկայում են նախ և առաջ մի նոր ուղղության երևան գալու մասին, ուղղություն, որը հիմնականում բնորոշվում է դեպի իրապաշտական ոճը հակված գեղագիտական սկզբունքներով: Եվ քանի դեռ, ավելի վաղ թվագրումով, այլ կոթողային հուշարձան մեզ հայտնի չէ, պետք է ընդունել, որ Աղջոց վանքի պատկերաքանդակները ձևաբանական-ոճական նոր մտածելակերպի սկզբնավորողն են հայկական միջնադարյան քանդակագործության մեջ¹⁶¹:

Հայ մշակույթի վերանորոգումն ու զարգացումը, որի մեջ գրքարվեստի կողքին իր կարևոր դերը խաղաց քանդակագործությունը, և հատկապես հիշյալ պատկերաքանդակները, տևեց մինչև 14-րդ դարի վերջին քառորդը՝ արգասավորվելով մի շարք բարձրորակ քանդակներով հատկապես Վայոց ձորում¹⁶²:

161 Աղջոց վանքի Պողոս, Պետրոս առաքյալների պատկերաքանդակների ոճական առանձնահատկությունների մասին առաջին անգամ գրում է Պ. ԴՈՆԱԵԴԻԱՆ: Տե՛ս P. DONABEDIAN, « Les particularités stylistiques d'un monument sculpté de Noravank et sa datation », *REArm*, t. XVII. Paris, 1983. П. ДОНАБЕДЯН, "Барельефы архитектурных памятников Ваёц Дзора XIII-XIV в.в." Автореферат диссертации на соискание ученой степени кандидата искусствоведения, Ленинград, 1980. стр. 1-16.

162 Վայոց ձորի հուշարձաններից նկատի ունենք Արեճի Աստվածածնի եկեղեցու, Ամաղու Նորավանքի համալիրի եկեղեցիների Սպիտակավոր Աստվածածնի պատկերաքանդակները, որոնք արտացոլում են ոճական նոր մտեցումներ:

158 S. DER NERSESSIAN, *Aght'amar*, p. 23, Г. ЧУБИНАШВИЛИ, *Памятники Тупа Джвари*. Тифлис 1948, илл. 60.

159 F. AVRIL, X. BARRAL-ALTEL, D. GABORIT-CHOPIN, *Le temps des Croisades*. Paris, 1982.

160 HUMBERT, *Islamic Ornamental Design*. pl. 2. 79, 53.

Ավելի քան մեկ հիսնամյակում կառուցված Աղջոցի վանական համալիրում արտացոլված են ճարտարագիտական ուրույն մտածողության դրսևորումներ, քանդակի մշակման տարբեր գեղարվեստական ուղղություններ: Քանդակային ստեղծագործություններից յուրաքանչյուրը՝ Դանիելը առյուծների գրում ու վերջին դատաստանը, Ջաքարյանների և Պողոս, Պետրոս առաքյալների քանդակապատկերները ամփիչականորեն մեր տեսադաշտում են, դյուրին բաղդատելի: Աղջոց վանքի քանդակապատկերների դերը հայոց մշակույթի պատմության մեջ առավել նշանակալի է դառնում, երբ անդրադառնում ենք փոքր եկեղեցու մուտքի ձևավորման բացառիկ հորինվածքին:

Իր տեղական հին արևելյան ավանդույթների հարատևության, Բյուզանդական կայսրության հետ վաղեմի կապվածության ու նաև XIII դարի կեսերից դիտարկվող արևմտյան մտքի ու, թերևս նաև բնօրինակների ներթափանցման շնորհիվ, հասուն միջնադարի հայ արվեստը պոտենցիալ մեծ ուժ էր ներկայացնում: Ազգային ինքնաարտահայտման ուղիների փնտրտուքի ու նոր արվեստ ստեղծելու ճանապարհին անցյալի դասերը ունեին որոշիչ նշանակություն: Դրանք, իրավամբ, տեսաբանների կողմից միշտ էլ համարվել են ամենահուսալին ու փորձվածը վերանորոգման ու վերջինս պատշաճ մակարդակով ներկայացնելու գործում: Պակաս կարևոր չէր և այն հանգամանքը, որ տեղական մշակութային ժառանգությունը ընդհանրապես, որպես սեփական անցյալի, հասարակական կյանքի նշանակալի երևույթ, ներշնչման զորեղ աղբյուր էր, բարոյական լուրջ խթան այդ ասպարեզում գործունեությունը շարունակելու համար: Չի կարելի հաշվի չառնել նաև այն կոնկրետ բարենպաստ իրադրությունը, որ ստեղծվեց երկրում XII դարի վերջերից:

Ջաքարյան խոշոր ավատատիրական ընտանիքը, նրան ենթակա վասալական իշխանական տները վերստացան իրենց իրավասությունները՝ գրավելով համապատասխան դիրքեր կառավարման աստիճանակարգում: Այս բոլոր վերածնված կամ նորաստեղծ ազնվականական ընտանիքները հոգևոր, մշակութային կյանքում ստանձնեցին պատվիրատուի, նախաձեռնողի դեր՝ այդպիսով դառնալով ճաշակի իրավարարներ: Ավատատիրական վերնախավի համար կրթկօրինակումների պրոցեսը մշակույթի ասպարեզում առանձնահա-

տուկ իմաստ ուներ: Այն տոհմիկ դասի անցյալից եկող վաղեմի արմատների ապացույցն էր, նրա հետագա գոյության իրավունքի հաստատումը: Իգուր չէ, որ Ջաքարյաններն աշխատում էին ամեն կերպ ընդգծել (տիտղոսների հիշատակումով ու ընդօրինակումով, քաղաքական գործունեությամբ) իրենց ծագումը Բագրատունիներից, քանի որ միջնադարում «լինել առանց անցյալի, միևնույն է, թե լինել առանց սեփական սովերի»¹⁶³: Եվ այսպես, XIII դարի Հայաստանում, անցյալի ոգեկոչումը վերածվեց ազնվականական դասի մի տեսակ վերածննդի, որն, իր հերթին, խթանեց մտավոր ու հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտների աշխույժ գործունեությունը: Բնական է, որ արվեստը պետք է դառնար այդ պրոցեսի վերընթացի կարևորագույն ազդակներից մեկը:

Բոլոր ժամանակների արվեստագետներին հասկանալի մի ուրույն հմայք կար նախնիների փառքը վերապրելու այս «հետահայաց» ընթացքի մեջ: Երբ X դ. վասպուրականում ստեղծվեց թագավորություն, Գագիկ Արծրունին այն նշանավորեց Աղթամարի պալատի ու ս. Խաչ եկեղեցու կառուցումով: Մանուել ճարտարապետը «պատշաճ համարեց կրկնելու թագավորական ընտանիքի դամբարանի դասական մոդելը՝ ի ցույց Արծրունի հարստության և միևնույն ժամանակ հայ կառուցողների ճարտարապետական ավանդույթների կատարյալ շարունակականության»¹⁶⁴:

Հետագայում Աղթամարը հայ վարպետների համար դարձավ ընդօրինակման ու ներշնչման աղբյուր, իսկ տոհմիկ վերնախավի մտապատկերում՝ վերականգնված թագավորական իշխանության խորհրդանիշ: Այսպիսով, Աղթամարը այն նախնական հուշարձաններից էր, որը ազգային ավանդույթների վերածննդի պրոցեսում կարևորագույն դեր կատարեց նախանշելով արվեստի հետագա զարգացումը. պրոցես, որ դրսևորվում էր ընդհատումներով, մասնակի պոթյուկումներով, բայց որը XIII դարի առաջին տասնամյակներից սկսած, դատելով առկա հուշարձաններից, մտավ իր զարգացման բնականոն

163 O. DEMUS, "A Renaissance of Early Christian Art in the 13th century Venice", *Late Classical and Medieval Studies in Honor of A. M. Friendi* Princeton 1955.

164 T. BRECCIA FRATADOCCHI, *La Chiesa di S. Eymiacin a Soradir*. Roma 1971, p. 89.

հունի մեջ ընդգրկելով հայ մշակույթի գրեթե բոլոր ճյուղերը, մանրանկարչությունից մինչև մատենագրություն:

Աղթամարի շնորհիվ էր նաև, որ մարդաչափ քանդակի տեսակը ներմուծվեց հասուն միջնադարի հայ արվեստ, ու կրկնվեց Բղենո Նորավանքում (X-XI դարեր): Այսպիսով, XIII դարում Աղջոցի փոքր եկեղեցու մարդահասակ քանդակները ունեին իրենց նախադեպը արևելյան Հայաստանի տարածքում. թեև մուտքի համընդհանուր հորինվածքի տեսակետից Աղջոցում զգալի են ոչ հայկական արվեստի սկզբունքներից բխող ազդեցություններ:

Աղջոցի հարթաքանդակների պատկերագրությունը որոշակի արձագանքներ ունի Աղթամարի հարթաքանդակների հետ. մինչդեռ ունի ոլորտում առաջին հայացքից նկատելի է բոլորովին այլ, նույնիսկ հակադիր մի մոտեցում:

Եվ այնուամենայնիվ, կարևոր ու նույնիսկ անհրաժեշտ ենք համարում ոճական համեմատությունները (թերևս բացառման եղանակով) կատարել հենց Աղթամարի հետ: Նախ՝ որովհետև ժամանակային առումով մարդահասակ քանդակներով Աղջոցին ավելի մոտ կոթողային հուշարձան չունենք, և ապա Աղթամարը հնարավորություն կընձեռի բացահայտել կիրարկված գեղագիտական սկզբունքների տարբերությունները X և XIII դարերում, ընդհանրություններն ու զարգացման փուլերը, հոգևոր մտքի ազդեցության ոլորտները արվեստում: Ի սկզբանե մշտնապես, որ ճարտարապետական ամբողջական մտահղացման մի օղակը հանդիսացող, դրա հետ սերտորեն կապված քանդակագործությունը ընդհանրապես ավելի դժվար էր ենթարկվում կերպարափոխումների, քան մանրանկարչությունը: Քանդակի բնագավառում, համեմայն դեպս, ազգային ոգուն օտար արտահայտչաձևերի և այդ ոգու բուն արգասիքը հանդիսացող հոգևոր արժեքների գատորոշումը շատ ավելի ցայտուն էր. տեղական հին արևելյան ավանդույթները այնքան ուժեղ էին և այնքան ավելի օրգանական ազգային հոգեբանության համար, որ, օրինակ, բյուզանդական արվեստի կատարողական սկզբունքները Հայաստանում միշտ չէ, որ դուրսին կերպով էին յուրացվում: Ամեն դեպքում տեղական ավանդույթները ամրագրելու ու մանավանդ արվեստում դրանց անդրադարձը հիմնավորելու համար հայ իրականության մեջ պետք

է որ լինեն աշխարհի ու մարդու գոյաբանության վերաբերյալ մի հիմնադրույթ, որը հուշեր, տեսական նեցուկ հանդիսանար այս կամ այն ոճի կիրառման համար, իմաստավորեր դրա իրողությունը հայ արվեստում:

Այդպիսի մի տեսություն՝ միջնադարի համար առանցքային, խորությամբ շոշափող Մարդու և Աստուծո հարաբերությունները, աշխարհի միատիկ ճանաչողությունն էր: Հայ մատենագրության շրջանակներում այդ տեսության լուրջ բարոյագիտական տարրերը ակնհայտ են դեռևս V դարի փիլիսոփա Դավիթ Անհաղթի ստեղծագործության մեջ¹⁶⁵:

Միատիկ տեսությունը իր առավել խոր ու ամբողջական բնույթով հայտնի է V դարի աստվածաբան, արևելաքրիստոնեական միջավայրի ծնունդ Դիոնիսիոս Արիոպագացու երկերով¹⁶⁶: VII դարի վերջին VIII դարի սկզբին Արիոպագացու ողջ ստեղծագործությունը Ստեփանոս եպիսկոպոս Սյունեցու կողմից թարգմանվեց ու հայտնի դարձավ Հայաստանում¹⁶⁷: Նորալատոնական ակունքներից ու արևելաքրիստոնեական միատիկ տեսություններից սերող Դիոնիսիոսի Աստվածաբանության մեջ մի շարք անգամներ շոշափվում են մարդու աստվածացման ու աստվածանմանության, ինչպես նաև ներքին մարդու գաղափարները, որոնք խիստ կարևորվում էին միատիկների կողմից: Ըստ այդ տեսության՝ «Խորհրդապաշտի ողջ արտաքին կյանքը, հոգևոր կենցաղավարությունը, վարքն ու բարքը, հոգեմտավոր դրսևորումները ուղղված են դեպի խորքը, դեպի հոգին, դեպի ներքին մարդը, ամեն ինչ կատարվում է ըստ ներքին մարդու, հանուն ներքին մարդու»¹⁶⁸: Ներքին մարդու շուրջ ծավալվող հոգևոր, փիլիսոփայական մտահանգումները կարևորագույն դեր ունեին միատիցիզմի մեջ՝ որպես այդ տեսության բարոյա-հոգեբանական համակարգի կարևոր ելակետեր: Թվում է, թե միատիկ աշխարհաճանաչո-

165 Դ.Ա.Վիթ Ա.Ն.ՀԱ.ՂԹ, Երկեր. թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Սեն Արևշատյանի, Երևան, 1980, էջ 67:

166 ՀՐԱ.ԶՅԱ ԹԱՄՐԱ.ԶՅԱՆ, Գրիգոր Նարեկացին և նորալատոնականությունը. Երևան, 2004, էջ 21:

167 Վի.Գե.Ն ՂԱ.ԶԱՐՅԱՆ, Խորանների մեկնություններ, Երևան, 1995, էջ 42-43:

168 ՀՐԱ.ԶՅԱ ԹԱՄՐԱ.ԶՅԱՆ, Աշխատ. աշխ., էջ 19-30:

դության համար կարևորագույն՝ անբքին մարդու գաղափարի շուրջն է զարգացել հայկական միջնադարյան արվեստի գեղագիտությունը: Վերջինիս համար միշտ էլ շատ ավելի կարևոր է եղել արվեստի հնարքներով թափանցել պատկերվածի անբքնահայտ շերտերի մեջ, դիտողին փոխանցել նրա նշանային իմաստը, քան կատարյալ մշակվածության հասցնել արտաքին կերպարը: Էությունը հոգևոր, մարդակենտրոն այս գեղագիտությունը ուներ վառ արտահայտված միստիկ բնույթ¹⁶⁹: Ի տարբերություն անտիկ աշխարհում տարածված տեսությունների, ուր հիմնականում կարևորվում էր գեղեցիկի գաղափարը, նոր քրիստոնեական գեղագիտության շարժիչ ուժը աստվածային սերն էր, որը մարդուն տալիս է գործունեականություն և զգալի ու երևելի է դարձնում Ազնիվի ու Բարու ներգործությունը, որոնք բխում են «Բարուց և դառնում առ Բարին, որպես արարման պատճառներ լցնելով տիեզերքը գեղեցկության տարփանքով»¹⁷⁰:

Ներքին և արտաքին մարդու ամբողջականության մասին է խոսվում և Գրիգոր Լուսավորչի Հաճախապատում ճառերում: Այստեղ շեշտվում է այդ երկուսի ներդաշնակությունը, «Առողջացեալ զգաստացեալ, սրբեալ իմասցի զներքին մարդն և զարտաքին», որի շնորհիվ միայն մարդը կարող է մերձենալ կատարելատիպին¹⁷¹: Այս նույն՝ ներքին և արտաքին իմացքների հետ կապված խորհրդապաշտական համակարգը պետք է որ կիրառելի լիներ նաև եկեղեցու վերաբերյալ, որն է Աստծո գործիքը երկրի վրա: Ըստ միջնադարյան աստվածաբանների՝ եկեղեցին միկրոտիեզերք է, աշխարհի ճշմարիտ պատկերը, մարդկային գործունեության կարգավորողը¹⁷²:

VII դարի վերջի հեղինակ Ստեփանոս Սյունեցին եկեղեցի բառը մեկնաբանում է այսպես. եկեղեցին ստեղծված է «ըստ մարդու պատկերի, այն զգալի է և իմանալի. նրանից բխում են Սուրբ Հոգու շնորհները, իմանալի աշխարհի արեգակնային ճառագայթները, որ իրենց մշտնջենաբովս, հոգեսնունդ ստինքների կաթով, Հին և Նոր կտակա-

169 В. В. БЫЧКОВ, *Эстетика Аврелия Августина*, Москва. 1984, стр. 4.

170 Հ. ԹԱՄՐԱԶՅԱՆ, *Գր. Նարեկացին և նորալատոնականությունը*, էջ 169:

171 Հ. ԹԱՄՐԱԶՅԱՆ, *Անանիա Նարեկացի. Կյանքը և մատենագրությունը*. Երևան, 1985, էջ 234:

172 L. GRODECKI, «Moyen Age occidental», dans *Symbolisme cosmique et monuments religieux*, Texte, p. 79-8.

րաններով սնուցանում են մեզ»¹⁷³: Եթե այդ այդպես է, ուրեմն եկեղեցու դուրսը ու ներսը պետք է ներդաշնակ լինեն որպես մեկ մարմին, մեկ կառուցվածք իրենց ներքին ու արտաքին շերտերով: Արդյո՞ք այս նույն հայեցակետի արդյունքը չէ, որ Աղթամարի դրսի ու ներսի պատկերագրական ծրագրերը որպես մի միասնական գաղափարի, երկու միմյանց հետ սերտորեն շաղկապված արտացոլումներ դիտարկող միտքը, կանխորոշել է դրսում, հիմնականում պատկերել Հինկտակարանային ու նույնիսկ աշխարհիկ տեսարաններ, «քանի որ մարդու փրկությունը չի ապահովվում սոսկ պատվիրանների, օրենքների կիրառությամբ, ճգնակեցությամբ ու մարմնական սխրանքով», իսկ ներսում զուտ քրիստոնեական Նորկտակարանային պատկերներ, արդեն որպես ներքին մարդու մաքրագործության տևական ճանապարհ¹⁷⁴, որպես քրիստոնեության հավերժական իդեալների, պատկերից դեպի սկզբնատիպ շարժման անվերջ ընթացք:

Ինքնակենտրոնացման, բարձրագույն հոգևոր էքստազի, աղոթքի յուրօրինակ արտահայտություն են Աղթամարի քանդակները. անմիջական աստվածագագողության մի վիճակ, երբ մարդը վերափոխվում է բնությամբ, դառնում Աստուծո որդի՝ աստվածանում¹⁷⁵: Թվում է, թե նույն մտածողության արտացոլումն է Գագիկ Արծրունու և Քրիստոսի խմբապատկերի մեկնաբանությունը՝ գետեղված Սուրբ խաչ եկեղեցու արևմտյան պատի լուսամտի երկու կողմերում: Այստեղ տարբերություն չկա պատկերվածների արտաքին տեսքի մեջ և դեռ Գագիկն էլ օժտված է լուսապսակով, ինչպես Քրիստոսը: Զգացումների բարդ գամման, ներքին վիճակների լարվածությունը արտահայտված բացառապես այս երկու պերսոնաժների աչքերի միջոցով, ըստ միստիկների՝ արտասվելու ու աղոթքի շնորհով բացված հոգու աչքերն են, որոնցից ճառագող պայծառատեսության «մշտնջենավոր, վերերկրային բերկրանքի հոգևոր ուժն է, որ այդպես ձգում է դիտողին, լցնում նրա հոգին երկյուղածությամբ, բերում աղոթքի, պարզում զղջման ու արտասման շնորհը»¹⁷⁶:

173 Հ. ԹԱՄՐԱԶՅԱՆ, *Գրիգոր Նարեկացին...* էջ 234:

174 *Նույնը*՝ էջ 43, 45, 46:

175 Հ. ԹԱՄՐԱԶՅԱՆ, *Անանիա Նարեկացի. Կյանքն և մատենագրությունը*, էջ 243:

176 Հ. ԹԱՄՐԱԶՅԱՆ, *Գր. Նարեկացին...* էջ 163:

Գագիկ արքայի և Քրիստոսի խմբապատկերը Թովմա Արծրունու Արծրունիների տանը նվիրված պատմության մեջ մեկնաբանված է իր ժամանակին բնորոշ այնպիսի պատկերավոր, խորախորհուրդ զգացողությամբ, որը հատուկ էր միստիկ հայեցողությանը ու վկայում է դրա ճանաչողության մասին պատմիչի մոտ: Ահա այն. «...Նմանահան ճշգրտութեամբ յօրինեալ է ընդդէմ Փրկչին և փառազարդ պատկեր արքային Գագկայ, որ մեծապարծ հաւատով բարձեալ ունի զեկեղեցին ի վերայ բազկացն իբրև զսափորն ոսկի լի մանանային և իբրև զտուփ մի ոսկի անուշահոտութեամբ լցեալ, կայ առաջի Տեանն, կերպագրեալ այնպէս, որպէս թէ զթողութիւն խնդրեսցէ մեղաց: Որ թեպէտ և մերս պատմութեանց իցեն բանք՝ սակայն թագաւորն ոչ վրիպի ի խնդրեալ պարգևացն յուսացեալ առ հանդերձեալ հատուցմանն»¹⁷⁷: Աղոթքի պահն է պատկերված Գագիկ Արծրունու քանդակում, աղոթք, որի միջոցով «միայն կարող է Աերանձնացյալը, հայեցողն առավել մերձեցնալ գերագույն բարուն՝ Աստծուն և նրա բարեպաշտությանը»: Խոսքով Անձնացին աղոթքը համեմատում է երկնային սանդուղքի հետ. «Աղոթք պարիսպ ամրութեան, սին հաստատութեան, հիմն հաւատոյ, խարիսք յուսոյ, սանդուղք առ Աստուած էլից»¹⁷⁸:

Այնուհետև մեկ ուրիշ հատվածում Թովման ասում է. «Կրօնաւորն (Մանուէլը-իմա) ձեռն տայ նկարագրել զքարինսն ճշգրտագործ նմանահանութեամբ սկսեալ յԱբրահամայ և ի Դաւթէ և մինչև զտէր մեր Յիսուս Քրիստոս, զդասս մարգարէից և առաքելոց յօրինեալ ըստ իւրաքանչիւր հանդիսի զարմանագործ տեսեամբ»¹⁷⁹: Այս հատվածի մեջ մեր ուշադրությունը գրավեց *ճշգրտագործ նմանահանությամբ և զարմանագործ տեսեամբ արտահայտությունները*: Գերզգայուն, էքստատիկ վիճակներում է, որ խոհրդագրած անհատներին տեսիլքներ են հայտնվում, որոնք հավատացյալին Աստծու հետ հաղորդակցվելու հնարավորություն են ընձեռնում: Ամենայն հավանա-

177 ԹՈՒՄԱՅԻ ԱՐԾՐՈՒՆԻՈՅ, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 486:

178 Հ. ԹԱՄՐԱԶՅԱՆ, Նարեկացի և նորավատնականությունը, էջ 163:

179 Թումայ վարդապետի Արծրունոյ, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, էջ 485:

կանությամբ նման վիճակի մասին է ակնարկում Թովմա Արծրունին, երբ գրում է «զարմանագործ տեսեամբ»: Մի քիչ ավելի ուշ, X դարի վերջերին Գրիգոր Նարեկացին իր մատյանի մեջ կասի. «Առ այն զոր տեսի աչօք իսկ իմովք, առ որ մեծ է պատասխանատրութիւնս...»: Հեղինակը իր տեսիլքը բարձր է դասում ողջ Ավետարանից, կենդանի հաղորդակցությունը՝ սուրբ գրային ավանդությունից: Մատյանի մեկնիչները շեշտում են այս տողերը, ասելով, որ Նարեկացին, սուրբ լինելով, «կենդանի հաղորդակցության մեջ է մտել Աստծու հետ»¹⁸⁰:

Եվ այսպես, հին արևելյան սասանյան արվեստի¹⁸¹ ավանդույթները լավագույնս պահպանած, իր ժամանակի գերակա մտքի՝ աշխարհի միստիկ ճանաչողության ազդեցությամբ ստեղծված, Աղթամարի գաղտնախորհուրդ քանդակները կարևոր դեր խաղացին հայ արվեստի, հատկապես քանդակագործության հոլովույթի մեջ՝ որոշիչ նշանակություն ունենալով XIII դարի մշակութային մթնոլորտի վերանորոգման գործում: Հետագայում, ժամանակի մտածողությանը համապատասխան փոփոխություններ ապրելով, դրանք դառնում են հայ արվեստի ամենակատարյալ ու օրգանական շերտերից:

IX դարից սկսած, հետ արաբական շրջանում Բագրատունիների հարստության հաստատմամբ, հայոց մշակույթում նկատվում է հոգևոր արժեքների վերահաստատում ու մաքրագործում: Արվեստի դաշտում միտքը օժտվում է ուրույն, ինքնագոր ուժով, ընդարձակվում են ընկալումակության սահմանները: Թեև միտքը գերակա է, բայց այն փոխազդեցության մեջ է արվեստի ստեղծագործությանը բնորոշ մյուս հատկանիշների հետ: Սրա լավագույն օրինակներն են Աղթամարի Սուրբ խաչ եկեղեցու քանդակներն ու որմնանկարները:

Բյուզանդական արվեստի կատարողական նորմերի թափանցումը հայ արվեստ, նույն այս դարաշրջանում, անշուշտ խթան էր ար-

180 Հ. ԹԱՄՐԱԶՅԱՆ, Նարեկյան դպրոցը, Երևան, 1999, էջ 60, 63:

181 SCHUMBERGER, L' Orient hellénisé. Paris, 1970: Հեղինակը գրում է. որ սիրիական և հայկական VI-X դարերի մանրանկարչության մեջ բացահայտվում են անվիճելիորեն պարթևական արվեստից եկող ոճական այնպիսի հատկանիշներ, որոնք ենթադրել են տալիս, որ գոյություն են ունեցել միջանկյալ օղակներ, որոնք կրել են պարթևական կամ պարսկական Սասանյան դինաստիաների արվեստի ազդեցությունը. էջ 208: Տե՛ս նույնպես՝ R. Ghirshman, Iran, Parthes et Sassanides. Paris, 1962.

վեստի ձևաբանական համակարգը թարմացնելու, ժամանակի ոգուն համապատասխան որոշ ռեական կլիշեներ ստեղծելու համար: Սակայն, խորքում, զգայականից այն կողմ եղած պրպտումներում, հայ արվեստը՝ արդեն X դարում հետահայաց քայլ անելով դեպի խոր անցյալի ակունքները (սասանյան և պարթևական արվեստներ), հաստատեց իր կողմնորոշումը հանուն ոգեղենության, հանուն ներքին մարդու: Միստիկ ուղղության տեսական զարգացման մեջ մեծ էր նարեկյան դպրոցի և իհարկե պոետ-փիլիսոփա Գրիգոր Նարեկացու ավանդը: Նրա կողմից խորհրդագրաց հայացքի բացարձակեցումը չէր կարող իր խորը հետքը չթողնել Մտքի հետագա զարգացման ընթացքի վրա: Այն իր մշակումն ու ընդլայնումը գտավ XII-XIII դարերի սահմանագծում ապրող Տարսնի արքեպիսկոպոս Ներսես Լամբրոնացու աշխատություններում:

Այդ ժամանակաշրջանի առաջին կոթողային հուշարձանը, ուր միստիկ իմացության ու բյուզանդական արվեստի ձևաբանական նորմերի ազդեցությունը նկատելի է, Աղջոց վանքի Պողոս, Պետրոս առաքյալների պատկերաքանդակներն են: Հսկայական մի ժամանակահատված է ընկած այս ստեղծագործությունների և վաղ միջնադարյան հուշարձանների միջև: Վաղ շրջանի դասական արվեստը դրանց միայն հավել է, թողնելով իր կնիքը որոշ մանրամասների վրա: Դրա փոխարեն շատ ավելի զգալի են ավելի մոտ անցյալի, օրինակ՝ Աղթամարի քանդակների հետ ունեցած աղերսները: Առաքյալների պատկերագրությունը, ի տարբերություն կատարողական սկզբունքների, որոշակի արձագանքներ ունի Աղթամարի պատկերագրական որոշ սխեմաների հետ: Փորձենք խնդրո առարկա երկու հուշարձանների պատկերագրական տիպերի ընդհանրությունները ցույց տալ ավելի առարկայական զուգահեռներով: Առաջին իսկ հայացքից Աղջոց վանքի քանդակապատկերների տեղադրման մեջ նկատելի են սկզբունքներ, որ բնորոշ են հելլենականացված արևելյան արվեստի ոգով կատարված վաղ միջնադարյան որոշ հուշարձաններին: Դա դեռևս դասական արվեստից եկող, գործող պերսոնաժներով մի միասնական խումբ ստեղծելու միտումն է: Առաքյալների մարմինները թեքված են միմյանց ընդառաջ, կեցվածքները համեմատաբար անկաշկանդ են, կարծես թեթևակի շարժման մեջ. նրանք

ինչ-որ չափով հարաբերվում են իրար հետ և սրա հետևանքով առաջանում է գործողության պատրանք: Նույն այս սկզբունքով, ու նույնիսկ շատ ավելի հստակ, կատարված է Մրենի եկեղեցու հյուսիսային մուտքի բարավորի վրա տեղադրված *խաչի վերահաստատումն ու փառաբանումը* տեսարանը, ուր երեք անձինք (երկուսը մի կողմում, մեկը՝ մյուս) կենտրոնում՝ խաչ, իրար ընդառաջ են գալիս բավականին բուռն մի շարժումով: Աղթամարում՝ Քրիստոսի ու Գագիկ Արծրունու մեջտեղում պատկերված, մեղալիոն բռնած երկու հրեշտակները աղերսներ ունեն հելլենականացված արևելյան արվեստի ու հենց հիշյալ պատկերաքանդակի հետ Մրենից: Հրեշտակների մագերի դրվագավորումը Աղթամարում խիստ բնորոշ է այդ արվեստի համար, մինչդեռ կատարումը՝ շատ հեռու է դրանից: Այստեղ մշակման ծայրահեղ չորությունն ու մակերեսայնությունը այնպիսի տպավորություն են ստեղծում, կարծես քանդակագործը ոչ թե հատիչով է աշխատել, այլ պարզապես գծագրել է քարի վրա: Ի հակադրություն սրան՝ Աղջոցում, մագերի մեկնաբանումը իր ծավալայնությամբ, անհամեմատ ավելի մոտ է Մրենին: Մրենի և Աղջոց վանքի միջև ժամանակային առումով ընկած հուշարձաններում, ինչպես օրինակ Աղթամարում, խմբի գաղափարի աղոտ հետքերն են պահպանված: Այստեղ հավատի միստիկական ուժն է, երկրայինին անհաղորդ հոգևոր իդեալը, որ համախմբում է պատկերվածներին: Աղթամարի քանդակների արվեստը, ճեղքելով պայմանական աշխարհի սահմանները, սկիզբ առնելով կերպարներից՝ գնում է դեպի սկզբնատիպը, այն է՝ իրականությունից դեպի իրականը. մինչդեռ Աղջոցում մենք վրա ենք բնախոսական սկզբունքների վերահաստատմանը: Աղջոցում եթե Առաքյալների պատկերաքանդակները դիտարկենք որպես մեկը մյուսի հետ կապված մի միասնական հորինվածք, ապա կնշմարենք, որ երկու քանդակապատկերն էլ իրենց կերպաբանական առանձին հատկանիշներով հիշեցնում են Աղթամարի արևմտյան պատին զետեղված Գագիկ Արծրունու և Քրիստոսի պատկերները: Նման են Պետրոսի և Քրիստոսի կեցվածքները (մեկ ոտքը դիմացից պատկերված, մյուսը՝ կողահայաց): Նույնն է ձեռքերի շարժումների ուղիղական, միայն թե Փրկչի ձեռքին գիրք է, Պետրոսի ձեռքին՝ բանալի: Թվում է, թե նրա մարմնի ուրվանկարի համար կարող էր նախատիպ

ծառայած իննել Քրիստոսի մարմինը իր ուրվանկարով: Նույն կարգի ընդհանրություններ կան Պողոս առաքյալի և Գազիկ Արծրունու պատկերների միջև: Նման են ձեռքերի մատների մշակման սկզբունքները: Մատներից յուրաքանչյուրը դրվագված է առանձին-առանձին, ծալված մասերում դրանց չափն ու դիրքը բնական է, թեև առաքյալների ձեռքերն իրենց նրբագեղ, վարպետ դրվագավորմամբ շատ ավելի կատարյալ են. անցումը մարմնից դեպի գլուխը իրականացված է ճիշտ նույն ձևով, ինչ Աղթամարում. խոսքը պարանոցի առկայության մասին է, որ ընդհանրապես բացառիկ է հայ միջնադարյան արվեստում¹⁸²: Բայց, մյուս կողմից, երկու հուշարձաններում հիմնավորապես տարբեր է հագուստների ծալքավորումը: Աղթամարում այն լրիվ գրաֆիկական է և իրենից ներկայացնում է զարդանկարային մի ինքնամփոփ աշխարհ: Աղջոց վանքում մարմնի ուրվանկարը գրեթե նույնն է, ինչ Աղթամարում, բայց շատ ավելի հարստացված և ամփոփում է ավելի խոշոր ֆորմաներ՝ տեղ-տեղ նույնիսկ ծավալային լուծումներով. Պետրոս առաքյալի աջ բազկի շուրջը փաթաթված հանդերձանքի տակից, օրինակ, զգացվում է մարմինը՝ իր ողջ շոշափելիությամբ: Բայց և այնպես դիտողին չի լքում քանդակագործի՝ կատարողական նրբություններին ըստ ամենայնի չտիրապետելու տպավորությունը: Կամ էլ թե, ըստ երևույթին, նա մեծ կարևորություն չի տվել մարմնին, մինչդեռ նույնը չի կարելի ասել դեմքերի մասին. կարծես այդ գլուխները նույն մարմիններից չեն պատկանում: Առավել կարևոր հատվածները, որտեղ նոր ոճաբանական մոտեցումը նշմարելի է, ձեռքերն են ու դեմքը: Մշտորեն է այտերի, բերանի ու, մանավանդ, աչքերի ֆիզիկական ըմբռնումն ու վերարտադրումը, հստակ ու ցայտուն են այտուկները, վարպետությամբ բացահայտված է այն մեծ խորհրդողը, որ լուսավորում է առաքյալների դեմքերը: Հենց այս ներքին լույսն է, որ մի առանձնահատուկ է ներգետնիկ դաշտ է ստեղծում այդ քանդակների շուրջը, մի դաշտ, որն իր ներգործող ուժով հիմնավորապես տարբեր է նախորդ շրջանի (և հատկապես

182 Այս կարևոր մանրամասնը ընդգծում է Պ. ՏՈՆԱՊԵՏՅԱՆԸ իր, "Тимпан ехегисского надгробия" հոդվածում: Տե՛ս ՊԲՀ, 1979, համար 3, էջ 189-206, նույնի՝ վաճառան գյուղի եկեղեցու բարձրաքանդակի մասին. ՊԲՀ, 1979, համար 1, էջ 154-165:

Աղթամարի) հուշարձանների շուրջ տարածվող ջերմածին դաշտից: Թերևս այստեղ գործում է դեմքի, հատկապես աչքերի միջոցով մարդու ներաշխարհը արտացոլելու միաստիկ իդեան, որն էլ բերում է այլ գեղագիտական սկզբունքների կիրառման: Աղթամարում այդ ուժը բացարձակ ոգու հաստատման սկզբունքի, նյութական աշխարհի հետ նրա կապի ժխտման մեջ է: Այնտեղ ընդգծվում է մարդու զուտ հոգևոր կեցության անանցանելիությունը, նրա գոյության գերագույն հմաստը՝ անիմանալի, անշոշափելի հավերժության մեջ: Մինչդեռ Աղջոց վանքում այդ է ներգիսն անհամեմատ ավելի մեղմացված է, փոխարինված մարդու բնությանը մոտ հոգեբանական է ներգիսով: Քրիստոնեական սիրո սկզբունքը այստեղ մատչելի է բոլորին. Պողոսի, Պետրոսի առաքելության գերագույն նպատակն է մարդկանց ճշմարիտ հավատի ուղու վրա դնել սիրո ուժով, քանզի «եթե զլեզու մարդկան խօսիցիմ և զհրեշտակաց և սէր ոչ ունիցիմ, եղէմ իբրև զպղիճ որ հնչէ, կամ իբրև զձնծղայս, որ դառնանցեն: Եւ եթէ ունիցիմ զմարգարէութիւն, և գիտիցեմ զխորհուրդս ամենայն և զամենայն գիտութիւն, և եթէ ունիցիմ զամենայն հաւատս՝ մինչև զլերիմս փոփոխելոյ, և սէր ոչ ունիցիմ, ոչինչ եմ» (Առ Կորնթացիս առաջին թուղթ, ԺԳ, 1-2): Այս իմացքն է, որ փոխանցվում է մարդուն, հաղորդում ոգեղենություն, աննշմար ներքաշում նրան առաքյալների քանդակապատկերներից արտածվող ջերմածին դաշտ, ստեղծում նրանց հետ երկխոսության պատրանք: Ներքին ներդաշնակության հասած, երկնային առաքելության գիտակցությամբ լի, ի վերուստ տրված ճակատագրին ենթարկվող հավատքի այդ զինվորների կերպարները հիշեցնում են քրիստոնեության հավերժական իդեալների մասին, ամրապնդում հավատացյալի հույսը Աստվածային Ծնորդի նկատմամբ: Նորկտակարանային այս կերպարների կերտումով ազդարարվում էր գեղագիտական նոր չափանիշների մուտքը արվեստ, չափանիշներ, որոնք կրում էին ժամանակակից մտքի ազդեցությունը և ըստ այդմ հանգեցնում փոփոխությունների ոճի ոլորտում: Միաստիկական աշխարհագրագողությամբ հատուկ, խորը ոգեղենությամբ օժտված այս քանդակապատկերները, խորհրդագրած գեղագիտության նորմերը փոխանցեցին հաջորդ հարյուրամյակ, լավագույնս դրսևորվելով Արեւիկի եկեղեցու ներքնամասի տրոմպերից մեկի վրա, որպես

Մատթեոս ավետարանչի խորհրդանիշ քանդակապատկեր, Նորավանքի, Նարտեքսի ու Սպիտակավոր Աստվածածնի մուտքերի բարավորների՝ Աստվածամայրը մանկան հետ կերպարներում¹⁸³:

Նշված բոլոր քանդակային հուշարձանները, մախ և առաջ Պողոս, Պետրոս առաքյալների պատկերաքանդակները, ի հայտ են բերում մտայնության այլ մակարդակ՝ թեակոխելով միստիկ գիտակցության հաջորդ փուլը: Նորարարական այս մոտեցումը հայ իրականության մեջ հայտնվեց XII դարի վերջերից, Ներսես Լամբրոնացու ստեղծագործությամբ¹⁸⁴: Լամբրոնացին խորացնում ու մանրամասնում է Աղոթքի դերը հավատացյալի կյանքում, ընդգծելով դրա զուտ անհատական բնույթը: Ըստ Լամբրոնացու՝ անհնար է մարմնավորել աղոթքը խոսքի մեջ, անհնար է նաև այն ուսուցանել կամ մեկնել: Քանի որ նրա «համը» աղոթողի հոգու ցանկությունների տոչորման մեջ է: «Եւ միայն յայն հառաչմանէն միշտ զանձն իւր կերակրէ»: Հոգուց բխած հառաչանքն է, որ Աստվածային սիրո բոցն է արծարծում և արտասուքն է, որ վճիտ է դարձնում հոգու աչքերը: «Արդ, որպէ՞ս կարողանամք զարտասուալից հառաչումն ամենայն անձինն մեկնել կամ ուսուցանել», - գրում է «հոգևոր արվեստների խորագետ տեսաբանը»: Ներսես Լամբրոնացին պնդում է, որ աղոթքի արվեստը սահմանելիս պետք չէ ելնել արտաքին տվյալներից, գիտելիքներից, այլ բուն մարդու բնությունից, նրա էությունից, ներքին մարդուց: Մարդուն որպէս անկրկնելի, յուրահատուկ անհատ դիտարկելը հայ միջնադարում նոր երևույթ էր, նոր մտայնության արգասիք:

Բայց արդյո՞ք նորարարական կոչվող այս ոճը, որ ս. Ստեփանոսում ներկայացված է իր զարգացման ոչ պարզունակ աստիճանով, չի անցել նախնական էտապներ հայ արվեստում: Բարեբախտաբար պահպանվել են այս նույն ուղղությանը պատկանող ավելի վաղ թվագրումով, թող որ ոչ կոթողային գործեր: Նոր ոճական ուղղությունը, ըստ երևույթին, նախապես մարմնավորվել է խաչքարերի

183 P. DONABEDIAN, « Les particularités stylistiques d'un monument sculpté de Noravank et sa datation ». *REArm.* Paris 1983, t. XVII, p. 395-405.

184 խորհրդածուխին սրբազան պատարագի, բացատրութեամբ Տիրոջն Ներսիսի Լամբրոնացույ արքեպիսկոպոսի, Տարսնի կիլիկեցոց. ի սուրբ Երուսաղեմ, 1842, էջ 13:

վրա, որոնցից մեկը կանգնեցվել է 1234 թ. հենց Աղջոց վանքի շրջակայքում՝ ի հիշատակ նահատակված իշխան Գրիգոր Խաղբակյանի, իսկ մյուսները՝ XIII դարով թվագրվող, սփռված են Հայաստանի տարբեր վայրերում¹⁸⁵: Այս ոճի հայտնաբերումը հայ արվեստի համեմատաբար մասսայական հուշարձանների վրա վկայում է այն մասին, որ գեղագիտական նոր մոտեցման ստեղծագործական փորձեր կատարվել են դեռևս 70-ական թվականներից առաջ:

Եվ, այնուամենայնիվ, XII-XIV դարերի հայ արվեստի համար այնքան բացառիկ ու անակնկալ են առաքյալների պատկերաքանդակներն իրենց ամբողջության մեջ, որ ակամայից զուգահեռներ ես փնտրում արտաքին աշխարհում: Հիշողության ծալքերում նորոգվում են վաղ գոթական արվեստում այնքան տարածված առաքյալների ու մարգարեների, Աստծո նվիրյալների, քրիստոնեության հավերժական իդեալները մարմնավորող՝ հավատի մարտիկների կերպարները:

Համաձայն որոշ ուսումնասիրությունների, Արևմուտքի հետ Արևելյան Հայաստանի կապերը մշակույթի բնագավառում, հիմնականում պատկերագրության մեջ¹⁸⁶, ակատվում են արդեն XIII դ. 70-ական թվականներից. խոսքը հատկապես Աստվածամոր պատկերագրության մասին է: Սակայն, առկա նյութը վկայում է, որ մշակույթային կապեր Արևմուտքի հետ ներկա են ոչ միայն պատկերագրության բնագավառում, այլև, ընդհանուր, ձևաբանական խնդիրներում: Այդ է հուշում ամենից առաջ Պողոս-Պետրոս մատուռի մուտքի՝ ձևավորման սկզբունքը մարդահասակ քանդակներով, մի սկզբունք, որ հանրահայտ է դեռևս ուշ ողջամական հուշարձաններից: Մինչդեռ հայ արվեստի համար բնական մեծության քանդակապատկերների տեղադրումը շքամուտքի երկու կողմերին, նորույթ էր: Նման այլ օրինակ XIII-XIV դարերում Հայաստանում չկա: Այս բացառիկ,

185 ԼԵՎՈՆ ԱԶԱՐԹԱՆ, *Հայկական խաչքարեր*, Մայր աթոռ Էջմիածին, 1973 թ. ԱԿ. 46, 57, 68, 77:

186 П. ДОНАБЕДЯН, "Вайоцзорская школа армянской скульптуры", II Международный симпозиум по армянскому искусству. Ереван 1978. Նույնի՝ "La sculpture arménienne des XIIIe-XIVe siècles et l'Occident", Terzo Simposio Internazionale di Arte Armenia, 1981. Atti, p. 35; V. GOSS, "Armenian Art and the Medieval West", Terzo Simposio.... 1981, p. 50.

փոքր-ինչ նույնիսկ տարօրինակ միջնադարյան հայկական պատկերային մտածողության համար երևույթը, բնականաբար, առաջ է մղում տեղական միջավայրից դուրս գտնվող նախատիպի գոյության գաղափարը: Ուրեմն, XIII դարի երկրորդ կեսին ձևաբանական նման համարձակ ու անսպասելի լուծումը պետք է որ հիմնված լիներ կանոնացված, համընդհանուր տարածում ու ճանաչում գտած մի օրինակի վրա:

Բայց նախ անդրադառնանք քանդակների կապին ճարտարապետության հետ: Նրանց տեղադրումը մուտքի վարի նշագծից, մոտավորապես վաթսույն սմ բարձրության վրա, երկրային ձգողականությունից ձերբազատված դեպի երկինք ձգտող ֆիգուրների պատրանք է ստեղծում և տարակուսանքի առիթ տալիս: Բացատրել այս երևույթը ճարտարապետի թերացումով՝ նկատի ունենալով կառուցողական արվեստի բազմադարյան փորձը հայոց մեջ և տվյալ հուշարձանի բոլոր մանրամասների կատարյալ մշակվածությունը, դժվար է: Թերևս կարելի է առաջ քաշել մի վարկած, համաձայն որի վանքի այս սօրվա տեսքը վերանորոգման արդյունք է. գրական աղբյուրներից հայտնի է, որ 1679 թ. մեծ երկրաշարժի ժամանակ Այրարատյան գավառի շատ վանքերի հետ ավերվել ու հետո նորոգվել է Աղջոց վանքը. հնարավոր է, որ այդ նորոգման ժամանակ շքամուտքի հարակից պատերի շարվածքը փոքր-ինչ խախտվեր ու քանդակապատկերները իրենց նախնական դիրքից ավելի վեր տեղադրվեին ինչ-ինչ պատճառներով: (Ի դեպ, ըստ երևույթին, այդ վերանորոգման ժամանակ էլ կերպարի թյուրըմբռնման պատճառով Պետրոս առաքյալի լուսապսակի վրա ավելացվել է «Պաղոս» մակագրությունը): Սակայն առաքյալների քանդակները այնքան բնական են թվում իրենց այդ դիրքով ու այնքան տպավորիչ, որ իսկույն կեսը հրաժարվում են այդ վարկածից:

Փորձենք պատկերացնել պատկերաքանդակները տեղադրված մուտքի վարի նշագծին հավասար և կտեսնենք, որ խախտվում են բոլոր համամասնությունները. մեր մտապատկերում առաքյալների պատկերները փոքրանում են, դառնում գետնահար: Դժվար թե XIII դարի ճարտարապետն ու քանդակագործը հաշտվեին նման հակագեղագիտական լուծման հետ, որքան էլ որ խնդիրը՝ մարդահասակ

քանդակի տեղադրումը մուտքի երկու կողմերին լինել հայ վարպետների համար բարդ ու անսովոր: Ուրեմն, մնում է քանդակների նման տեղադրումը համարել նախնական, շինության կառուցմանը ժամանակակից, մանավանդ որ արևմտյան քանդակը առաջարկում է ավելի վաղ նմանատիպ լուծումներ:

Մինչև Պողոս, Պետրոս առաքյալների պատկերաքանդակները, քանդակը հայ արվեստում, ստորակա էր շինության կառուցողական ֆունկցիաներին: Այն հենց ինքը պատն էր, նրա բաղկացուցիչ մասը, միայն թե զարդարված: Պատի տարածականության հետ կապված տեխնիկական խնդիրները շատ ավելի կարևոր էին, քան այդ իսկ պատի վրա կերտված քանդակի ծավալային կամ գեղարվեստական հարցերը: Հենց Աղջոցում այդ սկզբունքը հստակորեն դրսևորվում է *Դանիելը առյուծների գրում* հարթաքանդակի միջոցով: Վերջինիս հարաբերությունը պատի չափումների հետ խախտված է. այն հազիվ է նշմարվում, պատի ընդարձակ տարածքի վրա, կարծես, նշանակ լինի: Այնպես որ, թվում է, թե քանդակագործին հիմնականում հետաքրքրել է քանդակի ներքին տարածքը, այսինքն՝ նրա իմաստային հագեցվածությունն ու խորհրդապաշտական նշանակությունը: Հարթ պատի ու նրան միահյուսված հարթաքանդակի դեպքում պատի ողջ տարածքը լուսավորվում է մեղմորեն, գրեթե առանց ստվերների: Չի խախտվում նրա բոլորաձույլ կերպարը, այլ ընդհանուր հորինվածքային տեսակետից ընդգծվում է պատի ամբողջական զանգվածը: Սա զուտ ճարտարապետական մտածողություն է: Մյուս կողմից՝ պարզ է, որ հայ ճարտարվեստը ձգտել է այնպիսի կոթողայնության, ձևատեղծման այնպիսի անադարտության, որ քանդակները երբեմն ուղղակի տեղին չէին: Այս է պատճառը, որ հայկական եկեղեցին, ինչպիսի չափերի էլ որ այն լինի, դիտվում է որպես կոթողային, իրեն շրջապատող աշխարհից մեկուսացված, էզոտերիկ մի կառույց: Նպատակն է՝ մարդուն ֆիզիկապես ներս բերել, մասնակից դարձնել Աստծո փառաբանման արարողությանը, արթնացնել նրա մեջ այլ, վերերկրային աշխարհների զգացողություն: Այս դեպքում քանդակային գործերը ներքնամասում ընդհանրապես տեղին չէին. այստեղ դրված էր ուղղահայաց ուժերի ձգողականության խնդիրը, որոնց լուծումները՝ երկնակերպ գմբեթով, անթերի արսիդով, զուսպ նախշա-

զարդերի հանելուկային նրբագեղությամբ, ինքնին շատ տպավորիչ էին: Այդուհանդերձ, հայոց պաշտամունքային կառույցների պատերը, ոչ շատ հաճախ ու առատորեն, բայց և այնպես զարդարվում էին քանդակներով: Ուրեմն և դիտարկենք Աղջոց վանքի քանդակները ժամանակի ու համաքրիստոնեական աշխարհի տարածքի մեջ: Պատմականորեն բյուզանդական արվեստը գտնվում էր հայ պատկերագիր վարպետների նախասիրությունների շրջանակում: Այն սկզբունքային ընդհանրությունները, որոնք փաստագրված են բյուզանդական ու հայ արվեստների կապակցությամբ, (հատկապես մանրանկարչության մեջ) մեր պրպտումները դարձնում են շատ ավելի արդյունավետ ու հիմնավորված: Ի վերջո, արտաքին աշխարհի մշակույթի հետ համեմատությունները տվյալ դեպքում կարևոր են այնքանով, որքանով դրանք օգնում են ըմբռնելու արվեստների զարգացման ընթացքը, ազդեցություններն ու փոխազդեցությունները, փոխառություններն ու յուրաշրջումները: Հայ քանդակագործությունը գեղագիտորեն նույնքան անկախ է, ինքնուրույն և միևնույն ժամանակ օրգանապես նույնքան կապված ողջ քրիստոնեական արվեստի հետ, որքան և ճարտարապետությունը, մանրանկարչությունը, կիրառական արվեստները և այլն: Ինչ վերաբերում է հայ և բյուզանդական քանդակագործությանը, ապա դրանք իրենց հիմնական կատարողական սկզբունքներով, իմաստաբանական նշանակությամբ շատ ընդհանրություններ ունեն: Երկուսին էլ հատուկ են ոճական կիչներն ու սյուժեների կայունությունը և, մանավանդ, սահմանափակությունը, ինչպես նաև կլոր քանդակի բացակայությունը: Մի տեսակ, որ այնքան բնորոշ է արևմտյան ռոմանական և գոթական արվեստներին¹⁸⁷ և կարծես թե տարածված չէ ո՛չ Բյուզանդիայում, ո՛չ էլ Հայաստանում: XIII դարի վերջերին, երբ Արևելյան Հայաստանը աշխույժ կապեր ուներ Կիլիկիայի հայկական թագավորության հետ, բնական է, որ այնտեղից արևմտյան որոշ գեղագիտական սկզբունքներ թափանցեին Հայաստան: XI դարից սկսած, XII-XIII դարերում խաչակիրների ներկայությունը Կիլիկիայում զգալի էր գրեթե անընդմեջ¹⁸⁸:

187 H. FOCILLON, *L'art des sculpteurs romans*. Paris, MCMXXXI, fig. XXX, XXXI, XXXII.

Եվ բոլորովին էլ բացառված չէ, որ նրանք իրենց հետ բերած լինեին արևմտյան Եվրոպայում տարածված մոդելների տետրակներ, որոնցից մեկն էլ այնուհետև հայտնվել է Հայաստանում: Մանավանդ որ ինչպես արդեն ասվել է, 60-ական թվականների վերջերին Աղջոց վանքում էր գտնվում Վարդան Արևելցին, որը դրանից առաջ երկար տարիներ ապրել էր Կիլիկիայում: Հնարավոր է, որ հենց նա էր Աղջոցի պատկերագրական ծրագրի ոգեշնչողն ու վերջնական մշակողը, կարող էր իր հետ բերած լինեք այդպիսի մի տետրակ, որից և օգտվել են վանքի քանդակագործ վարպետները: Ներշնչվելով բնօրինակից նրանք վերարտադրել են մուտքի՝ մարդահասակ քանդակներով ձևավորման արևմտյան սկզբունքը՝ յուրովի, սակայն, մեկնաբանելով ոճը:

Աղջոցի առաքյալների պատկերաքանդակների պարագայում մենք կարծում ենք, որ մուտքի ձևավորման սկզբունքը մարդահասակ քանդակներով, հիմնականում գալիս է XII-XIII դարերի արևմտյան տաճարներից, որտեղ նույնպես քանդակները գետնահար չեն և կերտված են պատի վարի նշագծից որոշակի բարձրության վրա: Առաքյալների պատկերաքանդակների դեպի մուտքի վերի նշագիծը կողմնորոշված տեղադրումը, այսպիսով, ուներ իր նախատիպը Հայաստանից դուրս և դրա կիրառումը թվում է նախորոք մտածված կառուցողական տարրերին հարմարեցված ու դրանք շեշտող մի խելամիտ սինթեզ, որին, հավանաբար, նախորդել է հոգևոր հիմք ունեցող, խորապես գիտակցված ստեղծագործական պրոցես: Այս ենթադրությունն իր հերթին խորհրդանշանային համակարգը շոշափող վարկածի առիթ է տալիս: Կամարը՝ իր ուրվագծով որպես հոգևոր շինության, Աստծո տաճարի՝ գմբեթի պատկերը ոգեկոչող մի մանրամասն, խորհրդանշում է երկինքը¹⁸⁹, աստվածային գորավոր ուժերի ուրորտը: Վարդան Արևելցին, քննարկելով այս հարցը, ավելի հեռուն է գնում: Երկինքը, ըստ նրա, հրի, ջրի և օդի, իրար վրա դասավորված

188 Կ. ՄՈՒԹԱՑՅԱՆ, *Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում*. Երևան, 2001, էջ 137-158, 361-375. Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ, *Խաչակիրները և հայերը*. հատոր Ա, ներածություն. էջ 9-141. Երևան, 2005:

189 R. W. THOMSON, *Architectural Symbolism in Classical Armenian Literature*. Oxford at the Clarindon Press, 1979.

երեք կամարների միասնությունն է¹⁹⁰։ մենք հակված ենք ենթադրելու, որ համաձայն այս պատկերացման էլ կերտված է Աղջոց վանքի փոքր եկեղեցու մուտքի դռան շրջանակը, կազմված երեք հաջորդական կամարներից։ Ամփիջականորեն կամարին մոտ, քրիստոնեության ավանդական ուղղության ներկայացուցիչ Պետրոսի և այդ գաղափարախոսության մեջ համարձակորեն նորարարություններ ներմուծող Պողոսի պատկերները պետք է որ խորհրդանշեին նրանց՝ երկնքի ընտրյալներ լինելու հանգամանքը և միաժամանակ երկնային ուժերի կողմից երկուսին էլ համահավասար շնորհվող հովանավորությունը։ Հայ մատենագրությունը այս երկու առաքյալների գործունեությունը դիտարկում է որպես մեկը մյուսի շարունակություն, մեկը մյուսին լրացնող առաքելություններ՝ Հավատի տարածման գործում։ Իսկ նրանց ներկայությունը որպես մեկ ընդհանուր աստվածային կամքի դրսևորում։ «Իսկ կամարքն որ ի սեւանց անտի ի միմեանս կապելին այս ինքն է հաւասարութիւն միաբանութեան Կաթողիկէ եկեղեցույ»¹⁹¹։

Ինչ վերաբերում է առաքյալների քանդակներին առնչվող ձևաբանական խնդիրներին, ապա առավել մոտ զուգահեռներ մեր պատկերաքանդակների հետ՝ գտնում ենք Վեներտիկի և Մարկոս տաճարի հյուսիսային կողմի մուտքի վերին մասում տեղադրված, շրջանակների մեջ առնված, XIII դարի ստեղծագործություն համարվող երկու առաքյալների պատկերաքանդակներում։ Քննարկվող երկու հուշարձաններում էլ սկզբունքորեն նույնն են պատկերվողների դիրքը, նրանց ուրվանկարները։ Պարանոցի վրա հենված գլուխների ազատ, երեք քառորդ շրջադարձը ակնհայտ է դարձնում քանդակի բազմաշերտ մշակման միտումը։ մասնավորապես նման են դեմքերի դրվագավորումը՝ փոստրակներով բաժանված փափուկ կորնթարդ մակերեսներով։ Այս հատկանիշները վկայում են, որ երկու հուշարձաններ

190 ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՅԻ, Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի, լուսաբանելի վեներտիկ, 1862, էջ 2:

191 ԱԳԱԹԱՆ ԳԵՂԱՅ, Պատմութիւն... պարբերություն 694, 695: Հայկական պարականոններից մեկում ասվում է. «... բայց մեք հաւատացաք և հաւատամք թէ ոչ բաժանէ Աստուած ի միմեանց գերկու մեծամեծ լուսաորս գոր արար, այսինքն ոչ զՊետրոս ի Պողոս և ոչ զՊողոս ի Պետրոսէ. Տիրապէս հաւատամք ի Տէր մեր Յիսուս Քրիստոս...» Թանգարան հայկական. Անկանոն գիրք ստաքելականք, էջ 30:

րի քանդակագործ վարպետները օգտվել են եթե ոչ նույն, ապա նմանատիպ բնօրինակներից, որոնք ամենայն հավանականությամբ ունեցել են բյուզանդական ծագում։ Օտտո Դեմուսը գտնում է, որ ս. Մարկոս տաճարի սրբերի քանդակները կերտված են տեխնիկական մեծ վարպետությամբ ու նրբագեղությամբ, իսկ ինքը՝ բարավորը, հստակորեն ընդգծված սլաքավոր կամարով նմանակում է բարավորների գոթական դասական տիպը։ Ըստ Դեմուսի, XIII դարի վերջին քառորդում հունական ազդեցության մի նոր այիք հասավ Վեներտիկ։ Այս նոր ոճը, նախապես հայտնի Կ. Պոլսի քանդակագործության մեջ, իր հետագա զարգացումը ապրեց բյուզանդական և գոթական արվեստների հանդիպման շնորհիվ։ Այս դեպքում կարևոր էր նաև սլավոնական և արևելյան տարրերի դերը։ Այսպիսով, ամենայն հավանականությամբ, կարելի է ասել, որ այն հատկանիշներն ու տարրերը, որ ներկա են թե՛ վեներտիկյան, թե՛ Պոլսի հարթաքանդակներում, ի վերջո, ըստ Դեմուսի, բյուզանդական են, և ներմուծվել են Վեներտիկ XIII դարի ընթացքում¹⁹²։ Պրոֆ. Դեմուսի այս՝ մեզ համար շատ արժեքավոր մտահանգումը խթան հանդիսացավ հետագա պրպտումների համար, որոնք հանգեցրին հետաքրքիր արդյունքների։ Հայտնի է, որ XIII դարում Բյուզանդիայում շատ տարածված էին ավետարանիչների, այլ սրբերի ու Աստվածամոր կերտվածքներով, մարդահասակ քարե իկոնաները¹⁹³։ Հայ արվեստի ոլորտում անսովոր Պողոս, Պետրոս առաքյալների պատկերաքանդակները՝ իրենց դիրքավորումով ու մանավանդ պատկերները երկու կողմից շրջանակող, ֆունկցիոնալ ոչ մի դեր չխաղացող, ուռուցիկ նեղ գոտիների առկայությամբ (թե ինչպես են նրանք ավարտվել վերի մասում, հայտնի չէ, քանի որ շարվածքի քարերը կորած են) հիշեցնում են պատի մեջ տեղադրված քարե իկոնաներ։ Նույնատիպ հարթաքանդակներ հանդիպում են բյուզանդական մշակութային շրջանակի մեջ մտնող երկրների հուշարձանների վրա։ Դրանք, սովորաբար, որմնաշարված են

192 O. DEMUS, *The Church of San Marco in Venice*, fig. 91, p. 146-147; A. Chastel, *L'Italie et Byzance*, Paris, 1999, A. CHASTEI, *L'Italie et Byzance*, Paris, 1999.

193 A. GRABAR, *Sculpture Byzantines du Moyen Age*, II (XIe-XIVe siècles). Paris 1976, pl. XCIII, a, b, c, pl. XCV, 124, 125 pl. CXLIII a, b ; J. MAKSIMOVIC, *Sculpture byzantine du XIIIe s.* Voir Symposium de Sopocani, 1965. Belgrade. 1967.

շինության այս կամ այն մասում, չորս կողմից ներփակված ուռուցիկ քարե գոտիներով, որի վերինը մենք տեսնում ենք ս. Ստեփանոսում:

Հիշատակման արժանի է նաև Ղուկաս ավետարանչի քարե իկոնան էրմիտաժից, որը նույն ոճական ընդհանրություններն ունի մեր հուշարձանի հետ, ինչ և ս. Մարկոսի պատկերաքանդակները: Հետաքրքիր է, որ այս իկոնան ևս ծագումով ամենայն հավանականությամբ Իտալիայից է¹⁹⁴:

Աղջոց վանքից ոչ հեռու, նույն Քեղվա ձորում, Չաքարյանների տիրույթների սահմաններում, նախկինում Իմիրզեկ կոչված գյուղի մոտ, տեղադրված է եղել XIII դարի սկզբներին կառուցված վանատան վանքը, այժմ արդեն հիմնավորապես ավերված: Եվ միայն անցյալ դարի 90-ական թվականներին Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Հնագիտության ինստիտուտի արշավախմբի կողմից կատարված պեղումների շնորհիվ այնտեղ հայտնաբերվել են մի քանի արձանագրություններ ու որոշ քանդակազարդ բեկորներ¹⁹⁵: Եկեղեցին, որ կրել է Աստվածածին անունը, հավանաբար զարդարված է եղել հարթաքանդակներով: Պահպանված սակավաթիվ քանդակները (որոնցից միայն մեկն է անտրոպոմորֆ), վկայում են Աղջոց վանքի քանդակների հետ ունեցած ոչ միայն ոճական, այլև պատկերացանկի սյուժեների ընտրության հավանական ընդհանրությունների մասին: Վանատանում ևս, ինչպես Աղջոցում, ամենայն հավանականությամբ եղել են Հին և Նոր կտակարանային պատկերներ: Այդ մասին է խոսում մեզ հասած մի քանդակ: Ուղղանկյուն քարի վրա, որը, ըստ երևույթին, տեղադրված էր պատերից մեկի մեջ, դրոշմված են երկու անձնավորություն. մեկը կանգնած է՝ ձախ ձեռքը բարձրացրած (աջը կոտրված է), մյուսը ծնկաչոք է նրա ոտքերի մոտ: Կանգնած ֆիգուրն օժտված է լուսապսակով: Այս հորինվածքը հիշեցնում է Աղթամարի եկեղեցու արևելյան պատի աջ կողմում կերտված Եղիա մարգարեին և Սարեփթայի այրուն պատկերող հարթաքանդակը, որը մինչ այժմ համարվում էր այդ սյուժեով միակը հայ արվեստում¹⁹⁶: Մեկ ուրիշ բե-

194 A. BANK, "Relief en marbre à l'image de saint Luc l'Évangéliste", Dans *Jahrbuch der Osterreichischen Byzantinistik*, 2Band. Wien, 1972, p. 7-11.

195 A. KALANTAR, *The Medieval Inscriptions of Vanstan*, fig. 12, pl. IV.

196 S. DER NERSESSIAN, *Aght'amar...* pl. 33.

կորի վրա կա բարձրաքանդակ մի վարդյակ, որի թերթիկների միջև Աղջոցի արևելյան պատի սկավառակը հիշեցնող մի նախշազարդ շրջանակ է պատկերված¹⁹⁷: Հար և նման են երկու հուշարձանների խորանների ճակատային պատը ծածկող ութանկյուն աստղերից կազմված զարդաքանդակները¹⁹⁸:

Հին վանքից մեզ հասած արվեստի այս բեկորները հնարավորություն են տալիս ենթադրելու, որ Քեղվա ձորում գոյություն է ունեցել քանդակագործական մի դպրոց, որտեղ ոչ միայն եղել են վարպետ քանդակագործներ, այլև մշակվել պատկերացանկեր և հավանաբար այնպիսիք, որոնք իրենց մանրամասներով չեն կրկնվել իրարից ոչ հեռու տեղադրված հուշարձաններում: Կատարողական տեխնիկայի առումով նույնպես Աղջոց վանքի փոքր եկեղեցու և վանատանի քանդակների միջև նկատվում են զուգահեռներ. երկուսում էլ առաջին անգամ է, որ կիրառվում է քարի բազմամակարդակ մշակման սկզբունքը: Պատի հարթությունից բավականին բարձր տեղադրված զլուխներն իրենց ծավալներով մոտենում են բարձրաքանդակի, մինչդեռ մարմինները որոշ չափով պահպանում են հարթաքանդակի ձևաբանական լուծումները: Մարտարապետության հետ ստորադաս կապը Աղջոցի փոքր եկեղեցում խախտվում է, քանդակները օժտվում են ինքնուրույն գեղարվեստական արժեքով, ի տարբերություն նույն վանքում ավելի վաղ իրագործված Դանիելը առյուծների գբում և Ահեղ դատաստան պատկերներից:

Բյուզանդական արվեստի ոճական առանձին ձևերի ու հատկապես պատկերագրական ուրվագծերի ներթափանցումը Կիլիկիայի հայկական թագավորության միջոցով Հայաստան, անշուշտ, որոշակի խթան էր արվեստի ձևաբանական համակարգը թարմացնելու, ժամանակի ոգուն համապատասխան կլիշեներ ստեղծելու գործում¹⁹⁹:

197 A. KALANTAR, նշվ. աշխ. pl. IV, fig 10, 15.

198 Նույնը... pl. III fig. 7, 8.

199 Հիշեցնենք, որ այդ ժամանակաշրջանում, XIII դ. 60-ական թվականներին, Կիլիկիայում էր ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՑԻՆ, որն այնուհետև վերադառնալով Հայաստան՝ Պողոս, Պետրոս քանդակների կերտման ժամանակ գտնվում էր Աղջոց վանքում: Անդրե Ծաստելը գտնում է, որ XIII դարում, ընդհանրապես, բյուզանդական արվեստը մեծ ազդեցություն ուներ քրիստոնեական մշակույթի վրա: Տե՛ս A. CHASTEI, *L'Italie et Byzance*. Paris, 1999.

Սակայն այս գործոնը տիրապետող չդարձավ: Քրիստոնեությունն այստեղ ապրում էր ինքնուրույն զարգացում, երբեմն նույնիսկ հետադարձ հայացք նետելով նախաքրիստոնեական ավանդույթների վրա:

Այբուբենի ստեղծումը ոչ միայն հոգևոր, այլ նաև քաղաքական լուրջ քայլ էր. այն արդյունքում ամրապնդեց ազգային ինքնագիտակցությունը, որն էլ իր հերթին խթան հանդիսացավ յուրահատուկ մտածողության կազմավորման համար մշակույթի բոլոր ասպարեզներում: Թովմաս Մեթյունի դիտողությամբ հայ արվեստի հուշարձանների վերաբերյալ մեկ անգամ ևս հաստատվում է ասվածը. Նա գրում է. «Հայկական քրիստոնեական արվեստի յուրահատկությունն ու արժեքը ոչ այնքան նրբերանգների մշակման մեջ է, որքան նրբաքող մտքի»²⁰⁰: Այս տեսանկյունից դիտված օտարամուտ, ձևատեղծման տարրերը այնքան էլ չէին կարևորվում հենց իրենց՝ արվեստագետների կողմից. դրանք ընկալվում էին որպես բնականոն գերդրումներ, օրինաչափ կապերի արտահայտություն տարբեր արվեստների միջև, որը տանում էր դեպի կատարելություն:

Բյուզանդական և հայկական մշակութային ֆեռմենտների ընդհանրությունը XIII դարում նախ և առաջ նրանց հետահայաց բնույթի մեջ էր: Երկուսի համար էլ (թող որ ոչ հավասարաչափ) վաղ քրիստոնեական արվեստի մոդելները զարգացման ազդակ էին. համամասնությունների, ձևերի մշակման ու ճշգրտության առումով բյուզանդական գործերն, անշուշտ, ավելի կատարյալ են, ավելի կանոնիկ, բայց և կարծես ավելի սառը, հուզական-անհատական տարրից զուրկ: Դասական նախատիպերն այստեղ ընթերցվում են միանգամայն հստակ, չմիջնորդավորված. բյուզանդական արվեստագետները երբեք չկորցրին իրենց քաղաքակրթության ակունքներում հիմնավորապես նստած անտիկ արվեստի զգացողությունը և դարերի ընթացքում անընդհատ փորձեր էին անում (հաջող կամ անհաջող) կրկնօրինակելու դասական նախատիպերը²⁰¹: Բյուզանդիայում պատկերամարտական վեճերի ժամանակ և հետո, մինչ պալեոլոգյան վերածնունդ, քանդակը դուրս մղվեց պատկերագրական ծրագրից՝ կորցնելով իր

200 Th. F. MATHEWS and A. K. SANJAN, *Armenian Gospel Iconography*. Washington 1991, p. 3.

201 A. GRABAR, *Byzantine Painting*. Geneva, 1953, p. 33.

կապը ճարտարապետական ֆունկցիոնալիզմի հետ²⁰²: Ու չնայած XIII-XIV դարերում այն վերականգնեց իր իրավունքը, բայց և այնպես ներկայացնում էր «անտիկ պլաստիկ արվեստի գեղարվեստա-իլյուզիոնիստական տարատեսակի լեզուն»²⁰³: Մինչդեռ XIII-XIV դարերի հայկական անտրոպոմորֆ քանդակը դասական արտահայտչական լեզվին, ըստ էության, հիմնականում մնաց օտար՝ ընկալելով նրա միայն որոշ կատարողական սկզբունքներ: Եվ որպես ճարտարապետական միասնական օրգանիզմի մի մաս, իր զարգացման ողջ ընթացքում շարունակեց մնալ այդպիսին՝ օժանդակելով ճարտարապետության բարձրագույն հոգևոր իդեալի և իր իսկ էության ներքնաթաթույց շերտերի բացահայտմանը՝ երբեք չվերածվելով պարզապես զարդարարական տարրի: Ու թերևս մտածողության հենց այդ յուրատեսակ բնույթն էր, որի շնորհիվ հայկական մշակույթը քրիստոնեական ընդարձակ աշխարհի խորքի վրա հաստատվեց որպես ինքնատիպ մի երևույթ՝ զարմանալի իր խորհրդավոր ու անակնկալ թոնչքներով:

202 O. DEMUS, *The Church of San Marco in Venice*, p 110, 111.

203 Г. БЕЛТИНГ, "Константинопольская капитель в Ленинграде". *Сборник статей в честь проф. Лазарева*. Москва 1973, стр. 136-153.

ՎԵՐՋԱԲԱՆ

Քանդակագործությունը միջնադարյան հայ մշակույթի առավել առեղծվածային ու նվազ մշակված բնագավառներից է: Մանրանկարչությունը, ինչպես նաև ճարտարապետությունը շատ ավելի ուսումնասիրված են և հրատարակված, ու թերևս այդ իսկ պատճառով հիմնավորված է թվում այդ բնագավառների հետագա զարգացումը մեզանում՝ իմաստավորելով մեր հոգևոր գոյությունը ժամանակի շարունակականության մեջ: Միանշեղ թանգալը հայ մարդու մտապատկերում նույն տեղը չի զբաղեցնում: Նրանից արտածվող էներգիան, որին մասնակից է դառնում նրբագագ ու նախանձախնդիր դիտողը, կարծես թե իր մեջ կրում է հեռավոր ժամանակների ու տարածքների անծանոթ ու դժվար ընկալելի լիցքեր, ժամանակներ, երբ արվեստը աղոթքի կամ նոր-նոր ձևավորվող գաղափարների անմիջական արտահայտություն էր:

Քանդակները՝ անտրոպոմորֆ թե բուսական, գաղտնագրություն հիշեցնող իրենց բարդ զուգորդումներով, հիմնականում մտահայեցական են, ուղղված մարդու ներքնահայտ շերտերին: Նրանք ասես, սպասում են իրենց վերծանողին, ի խորո բացահայտվելու համար:

Վաղ քրիստոնեական հուշակոթողների ու պաշտամունքային կառույցների պատերին բավականին մեծ թվով պահպանված հարթաքանդակները հնարավորություն են ընձեռում լուսաբանել վաղ հայկական մշակույթի ակունքները ու նաև տիպերի զարգացման ուղիները: Այս տեսակետից ակունքների ուսումնասիրությունը, դրանց կապերի բացահայտումը համաքրիստոնեական աշխարհի հուշարձանների հետ հատկապես կարևորվում է՝ ստանալով յուրահատուկ իմաստավորում: Մեր՝ դեռևս ոչ ամբողջական, շարունակու-

թյուն միտող հետազոտությունների խնդիրն է՝ ըստ կարելույն ցույց տալ հայկական քանդակների պատկերագրական տիպերի, գույն թե ոչ մեծ ներդրումներով, բայց և այնպես մասնակցությունը վաղ քրիստոնեական արվեստի իկոնոգրաֆիայի կազմավորման գործում:

Աղջոց վանքում առկա են տիպաբանական երկու տարբեր խնդիրներ արծարծող քանդակներ. այնպիսիք, որոնք իրենց թե՛ պատկերագրությամբ, թե՛ ոճով հիշեցնում են վաղ հայկական քրիստոնեական արվեստի հորինվածքները և նաև այլոք, որոնք նոր գեղագիտական հայեցակետի, և իրենց ժամանակի մտքի ու մշակութային կապերի արդյունք են, հետագա զարգացման նոր լիցքեր կրողներ: Այս հանգամանքը Աղջոց ս. Ստեփանոս վանքի քանդակաշարին հաղորդում է բացառիկ արժեք: Արևմտյան ձևամտածողության ներմուծումը որպես երևույթ կարևոր էր ինքնին: Այն ազատագրեց վաղուց ի վեր մշակված ու հաստատված տիպերը սխեմայի բռնակալությունից, հաղորդելով դրանց նոր շունչ, դիմամիկա, ստեղծագործական ազատություն: Դրա լավագույն վկաններն են *Պողոս, Պետրոս առաքյալների պատկերաքանդակները Աղջոցում, հինգ իմաստուն ու հիմար կույսերի քանդակային անդրադարձը Հովհանավանքի բարավորին, Թանահատի հյուսիսային մուտքի բարավորի որսի տեսարանը*, ինչպես նաև գրքարվեստի որոշ հուշարձաններ:

Աղջոց վանքի քանդակային ծրագրի ամբողջացման հարցի կապակցությամբ արժե ընդգծել Անհատի դերը, բացառիկ երևույթ հայ միջնադարում: Սա մեզ հայտնի, առաջին դեպքն է հայ մշակույթի բնագավառում, երբ ծրագրի տրամաբանական ավարտը կապվում է որոշակի անձնավորության, իր ժամանակի ուսյալ ու լայնախոհ վարդապետներից մեկի՝ Վարդան Արևելցու հետ: Նման երևույթի հանդիպում ենք ևս մեկ անգամ, XIV դարի առաջին քառորդում: Դա Ամաղու Նորավանքի Հովհաննես Նախակարապետի եկեղեցու լուսամտի բարավորի պատկերաքանդակն է, որի մտահղացման հեղինակը, ինչպես նշում է Ս. Տեր-Ներսեսյանը, մեծ իշխան Իվանե Օրբելյանն է:

Ինչ վերաբերում է Պողոս Պետրոս առաքյալների քանդակների գեղակերտման ոճին, ապա XIII դարի վերջին, XIV սկզբին այն ունեցավ հետևորդներ, բայց չդարձավ համատարած, XIV դարի քանդա-

կագործության դեմքը բնորոշող միակը: Հայկական քանդակագործության ոճական երկվությունը այդ ժամանակաշրջանում ակնհայտ է: Մեծ է այն հուշարձանների թիվը, ուր հետևում են քանդակի մշակման ավանդական ձևին: Պատճառներից մեկն էլ թերևս այն էր, որ հայ վարպետների համար շատ ավելի կարևոր էր դիտողին փոխանցել ստեղծագործության հիմքում ընկած խորհուրդը, քան այն մարմնավորել խստագույն մշակված կատարյալ ձևերի մեջ: Բայց և այնպես չմոռանանք, որ պատկերը նախ և առաջ արտաքին ձևն է, իմաստը կրող և փոխանցող ամբողջի մի մասը, և որպես այդպիսին այն իր ժամանակի ու միջավայրի չափանիշն է:

XII դարի վերջերից և գրեթե ամբողջ XIII դարը Հայաստանը ընդհատումներով նորից ուղղված գործողությունների թատերաբեմ էր: Չնայած դրան, այդ ժամանակաշրջանը իշխանական տների՝ հատկապես Ջաքարյանների վարած խելամիտ քաղաքականության շնորհիվ դարձավ խիստ կառուցողական մշակույթի ասպարեզում: Պետք է արձանագրել, որ այսպիսի իրադրության մեջ, երբ թե՛ ուղղման քաղաքական, թե՛ մշակութային ասպարեզում հիշյալ իշխանները իրական հաջողության հասան, զույգ դիմանկարի տեղադրումը խորանի ճակատակալ սալիկներից մեկի վրա անսպասելի չէր: Թերևս սա եղբայրների՝ Հայաստանի իրական տերերի պատվախնդրությունը բավարարելու միջոց էր, կամ էլ ժամանակակիցների կողմից մեծ իշխաններին մատուցված մեծարանքի մի նշանակ: Հանապազորյա պատարագի հնչյունների, առ Աստված ուղղված աղոթքների մթնոլորտում դիմանկարները ստանում էին յուրահատուկ խորհրդապատկան նշանակություն: Ժամանակի և հիշողության մեջ Ջաքարյանները ամրագրվում են որպես հավատի զինվորներ և խելամիտ, հանուն իրենց երկրի շահերի մարտնչած քաղաքագետներ: «Այսինքն՝ լուայք, զի խոստացաւ Տէրն. եթէ երկու ի ձեռն միաբանեալ՝ զոր ինչ խնդրեն հաւատով, առնուցուն» (Խորհրդածութիւն սրբազան պատարագի-բացատրութեամբ Տեառն Ներսէսի Լամբրոնացոյ արքեպիսկոպոսի Տարսնի Կիլիկեցոյ. Երուսաղէմ, 1842, էջ 6):

XIII դարում աշխուժություն էր նկատվում մշակույթի բոլոր ասպարեզներում: Վիմական և գրական հիշատակարանները ավետում

են շինարարական և հոգևոր կյանքի մի նոր վերելք: Գարեգին Հովսեփյանը այդ ժամանակաշրջանը բնորոշում է այսպես. «Մի ազնի մրցակցութիւն է սկսվում իշխանական տոհմերի մէջ, գերազանցելու միմեանց շինարարական եւ հոգեւոր կեանքի նպաստաւորման գործում»:

Հոգևոր կյանքի վերելքը հատկապես ակնառու էր ճարտարապետության մեջ: Վանական համալիրները ճոխանում են գավիթներով, որոնք XIII դարից դառնում են դրանց օրգանական մասը: Ծարտարապետները չեն խուսափում զարդաքանդակների մեջ ներմուծել օտարոտի տարրեր, մի հանգամանք, որը վկայում է շինարարների լայնախոհության ու իրենց ստեղծագործության նկատմամբ դրսևորած վերաբերմունքի՝ որպես վերժամանակյա, համայնական արժեք ներկայացնող գործի:

Բարձրակետին է հասնում խաչքարերի արվեստը՝ իր ակնապարար, թաքնախորհուրդ նախշերի շարադասությամբ տեսցնելով հավատացյալին փրկության ճանապարհը:

Նույն ավյունն է դիտարկվում և գրքարվեստի ու մատենագրության մեջ: Հիշատակման արժանի երևույթ էր վարդապետարանների կամ բարձրագույն դպրոցների հաստատումը, որոնցից ամենանշանակալին էր Գլաձորի դպրոցը, Արևելյան Հայաստանի մտավոր կյանքի կենտրոնը:

Հայաստանը XIII դարում, ըստ երևույթին, այնքան էլ միատարր չէր: Արաբական արշավանքներից հետո որոշ քաղաքներում մնացել էին արաբներ (այդ են ապացուցում Անիի ու Դվինի պեղումները): Կային և պարսիկներ, որոնց մասին վկայում է մոլլաների ու խոջաների ներկայությունը հայկական քաղաքներում: XIII դարի կեսերից սկսվել էր և եվրոպացի քարոզիչների ներթափանցումը: Այս բոլորի ներկայությունը անհետևանք չէր կարող անցնել մի մշակույթի համար, որն ի վիճակի էր ընկալել ու վերարտադրել ամեն մի նորույթ իր սեփական ստեղծագործական սկզբունքների համաձայն:

XIII, XIV դարերի արվեստին (քանդակագործություն, գրքարվեստ, կիրառական արվեստներ) բնորոշ է ժամանակի իմացականության խորքերը թափանցող միտք, որը միավորվելով ստեղծագոր-

ծական փորձառության հետ՝ կանխորոշում է գործի ներքին և արտաքին շերտերի իմաստը, հուզական ազդեցությունն ու ամբողջացման ընթացքը:

Նախորդ շրջանի նարեկյան դպրոցը ու հատկապես Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգությունը», ուր գործում էին անհատական փորձի ու ազատ ստեղծագործության ազդակները, մեծ դեր խաղացին արվեստների զարգացման մեջ: XII դարի վերջերին Ներսես Լամբրոնացին ստեղծում է «Աղոթքի արվեստի» տեսություն, որտեղ նա հստակորեն ընդգծում է մարդ-անհատի դերը: Այս տեսությունը մի նոր քայլ էր, ընդհանրապես, արվեստի միաստիկ, ներքին շերտերի մեջ խորամուխ լինելու ուղղությամբ. մի քայլ, որը մեծ ազդեցություն ունեցավ թե՛ Կիլիկիայի, թե՛ Հայաստանի մշակույթների վրա: Այս տեսակետից միաստիցիզմի ազդեցությունը գեղագիտական մտածողության վրա անուրանալի է և դեռևս կարիք ունի հետազոտման ու խորացման:

Եվ այսպես, մտքի ու ոգեղենի ներդաշնակությունը՝ աշխարհի խորհրդագրաց ճանաչողության հետ, օժտեցին հայ արվեստը այնպիսի մի ուժականությամբ ու համայնական հնչեղությամբ, որի արդյունքում ստեղծված գործերը առաջնակարգ տեղ գրավեցին հայ մշակույթի անդաստանում՝ միաժամանակ հասկանալի ու ընդունելի լինելով թե՛ Արևելքում, թե՛ Արևմուտքում:

ՀԱՎԵԼՎԱԾ

1905 թվին Կայսերական Մոսկովյան հնագիտական ընկերության Ախաձեռնությամբ սկսվում է Կովկասի հնագիտական հուշարձանների ուսումնասիրությունը: Հայաստան են գործուղվում Վ. Մ. Սիսունը և Տարագրոս Վարդանյանը. տեղում, նրանց աշխատակցում է լուսանկարիչ Խաչիկ Դադյանը: Նույն այդ թվականին ի շարս այլ հուշարձանների, նրանք այցելում են Աղջոց վանք և ընդօրինակում արձանագրությունները: Համաձայն Սիսունի դրանք եղել են 53-ը, որոնցից հրատարակության է հանձնվել 19: Սա Աղջոցի արձանագրությունների առաջին հրապարակումն էր (Материалы по археологии Кавказа, 1916):

Այնուհետև վանքին և արձանագրություններին անդրադառնում է Գարեգին կաթողիկոս Հովսեփյանը: Նա վերընթեռնում է արձանագրությունները տեղում, ըստ հնարավորին ուղղումներ մտցնում Սիսունի հրատարակած արձանագրությունների մեջ և իր Խաղբակետանք կամ Պոօշեանք աշխատության հավելվածում զետեղում Աղջոցի թվով 33 արձանագրություն: Մենք նպատակահարմար տեսանք սույն աշխատության հավելվածում բերել Գարեգին Հովսեփյանի կողմից ընթերցված արձանագրությունները, քանի որ դրանք մասնագիտական շրջանակներում արժանացել են համընդհանուր ընդունելության:

1986 թ. հանգուցյալ վիմագրագետ Սուրեն Սաղումյանը անդրադառնում է վանքի վիմագրերին, իր կողմից կարևոր լրացումներ առաջարկելով շինարարական արձանագրության մեջ: Իր հրատարակած հոդվածում, նվիրված վանքի կառուցմանն ու շինարարության

սկզբնավորման թվականին ՊԲՀ, 1986 թիվ, նո. 2, հեղինակը քննարկում է վեց արձանագրություն: Նա նշում է «Մեր հավաքածուի (արձանագրություններից) 20-ը ունեն թվական, հները՝ 1197, վերջինը՝ 1610»:

Ուրեմն, պետք է ենթադրել, որ հանգուցյալ վիմագրագետի՝ Աղջոց վանքին վերաբերող արձանագրությունները, բացի 6 հրատարակվածներից, իր հավաքածույում ունեցել է նաև այլ արձանագրություններ: Սակայն, Սաղումյանի ընտանիքը ժխտեց այս գրավոր հայտարարությունը, ասելով, որ նրա արխիվներում Աղջոց վանքին վերաբերող անտիպ նյութեր չկան:

Ստորև ներկայացնում ենք Գարեգին կաթողիկոս Հովսեփյանի կողմից ուսումնասիրված Աղջոց վանքի արձանագրությունները: Դրանք թվով 34 հրատարակված են նրա Խաղբակեանք կամ Պոռշեանք Հայոց պատմության մեջ աշխատությունում: Այդ արձանագրություններից 33-ը գտնված են հավելված Ա -ի մեջ, միայն մեկը՝ գրքի 43-րդ էջում: Բոլորն էլ ծանոթագրություններով հանդերձ մատուցված են այնպես, ինչպես տեղ են գտել աշխատության մեջ:

ՊՈՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԴՌԱՆ ԿԱՄԱՐԱԿԱԼ ՔԱՐԻ ՎՐԱ ԳԵՂԱԳՐՈՎ (էջ 43)

Թվ. Հ. 2ԺԹ առաջնոր դուրսի (s!) Երեմիայի ես վասակ թոռն
Ղաղբակայ որդի Գրգոյ ի նեղ...
Ժամանակ...

Ծանոթագրություն.— II տողի «թոռն» բառի ն-ի գլուխը կտրած. III տողի «ղաղբակայ» դեղագրով, եւ միացած ընդգծածով: Բազմակետով նշանակուած մասը կարմիր դեղագրով է եւ եղծուած:

Տաճարի արևելյան կողմում խաչքարի պատվանդանի չորս կողմին

1. Յաշխարհակալութիւն Արդուն դա/նին եւ ի թագաւորութե Դաւթի եւ հարա/պետութե (s!) տր Յովանիսի եւ ի տէրու/թե//

2. տեղոյս պարոն Աշոտոյ ես / Ղազար Ածատուր տէր Աւագ/ս բէրաք զչորս եւ կանկն//

3. Էցաք զխաչս եւ տնկեցաք զայգին Յովայն / զոր ամիր սպասալար եւ աթա/պակ Սաղուն նուվէր (s!) ետ էկեղեցոյ // զչորս անխափան ի բանի պահէ կատա/րողք գրելո/ցս արհմին յԱյ եւ ով որ զ/այգին յէկեղեցոյս եւ ի ջ//

4. ըէս հանէ յերից ժողովոյն նզով / ել եղիցի եւ զրկի կենաց ջրոյն

Առանձին՝ գարնէզի քարի վերայ՝ ի թվ 21,2 (1287թ)

ԴԱՆԻԷԼԻ ՔԱՆԴԱԿԻՑ ԱԶ

1. Ի թուի ՈԿԱ ես աթապակ Իւանէ ա? տվի / զվանաց փորն եւ զվարդ... երկ ար կենաց / որ դոյ իմոյ Աւագ /

2. ին արդ եթէ ոք ի մեծաց կամ ի փրքունց/յա զատաց կամ ի շինականաց հակառակ / կա յ եւ զհողն խլել ջանայ ի

3. վանացս Կաենի եւ Յուդաի մասնակից / ե դիցի եւ ՅԾԺԸ հայրապետացն նզովեցի:

Ծանօթ.— Օսւ. Mat. XIII. 58 Առաջին երկու տողերի ընթերցումը պետք է համարել ոչ իրական, այլ ենթադրութիւններով գրուած: Երկրորդ տողում Յյաւտարաց» պետք է լինի «ի շինականաց», «հակառակիցէ» պետք է լինի «հակառակ կայ», ընդգծուածը կտրուած, ճեղքի վերայ:

ՆԱԽԸՆԹԱՅԻ ՈՐՊԷՍ ԾԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ՆՈՅՆ ՏՈՂԻ ՎԵՐԱՅ ԵՒ ՆՈՅՆ ԳՐՈՎ

Ես Գորգի? որ դի Աբ իսալինս տ վի զ Քաբ ողդինն հողն ի Հոռոմա Աղջոց վանացն վս ար եւ իշ ատութե որ դոց իմոց եթէ ոք հակառակ (կ)ա եւ զհողն հանէ յեկեղեցոյս պ ար / ոն կամ / շինական մեր ազգի եւ մեր մեղացն պարտական եղիցի Այ Քի խաչահանողացն մասնակից եղիցի: ՅԺԸ: նզովեալ եղիցի:

Ծանօթ.– Օսւ. Mat. XIII. Առաջին տողում կարող է լինել «Գորգի» կամ «Գէրգի», հավանական է առաջինը, որ գործադրուած է եւ ուրիշ տեղ: «Աբուսալիմ ետու» պետք է լինի «Աբիսալիմ տփի», «գՔամոհն» պետք է լինի «գՔարոողի-նին», կցուած ար-ի մէջ, բ պարզ է: «Աղջոց» պետք է լինի «Աղչոց», «(կ)ա», առաջին տառը չի գրուած, ի նկատի ունենալով, որ նախընթաց բառը կ-ով է վերջանում, նման երեւոյթներ եւ ուրիշ տեղերում, չունի «պարոն» բառը «կամ մերագնէից» պետք է լինի «մեր ազգի», «է» պետք է լինի «եղիցի», «մասնակից եղիցի», ընդգծուածը բաց է թողել թէ՛ այստեղ եւ թէ՛ վերջում:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ՊԱՏԻՆ

1.
2. ԹՎի ՈԿԶ յիշխանութեւ Իւան... եւ Աբել
3. Վարդայպետաց առաջնորդ... եցաք զեկ
4. եղեցիս մեծաւ աշխատութեւ եւ... դաց եկե
5. դեցոյս : Զ: ար ժամ Սարգսի որ ի...

Ծանօթ.– Բազմակետերով նշանակուած տեղերում երկերկու քար ընկած են: Օսւ. Mat. XIII չունի:

ՏԱԾԱՐԻ ԳՐԱՆ ԿԱՄԱՐԱԿԱԼ ՔԱՐԻ ՎԵՐԱՅ, ՎԵՐՋԻՆ ԴԱՏԱՍՏԱՆԻ ՊԱՏԿԵՐԻ ՏԱԿ

1. (Թ. ՈԿ (Բ թէ Թ?) Ես Գր
2. (իգոր ?) որ դի (կամար) Ախբակ
3. ա: ազնեցի եկեղեցոյս բազում ար դե ամ բք եւ սպասաւ որ ք
4. ս որ այ ետ ու ն ինձ զաւագ խորանի Ե. շար. եւ շարբաթն արն հա
5. նապագ էթէ ոք խափանէ: ՅԺԸ: հայրապետաց նզովել եղիցի.

Անմիջապէս սորա տակն է մի արձանագրութեան մնացորդ, որ Գրիգոր Խաղբակեանի կնոջն է.

6. ...միաբանեցայ սբ ուխտիս եւ ետու զսբ նշն յեկեղեցիս եւ այլ բազում

7. ...պատարագ : Ա : ար զամէն եկեղեցիքս ԺԲ? զտաւն Ածածնին ով ոք խ...

Ծանօթ.– Երրորդ տողում Օսւ. Mat. XIII 58 ունի «Եկեղեցո Աբագա իմ», պետք է լինի «եկեղեցոյս բազում»: Չորրորդ տողում «զաւագ զատկի շարբաթն ար», պետք է ուղղել «զաւագ խորանի Ե. շար. եւ շարբաթն ար»:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ՊԱՏԻՆ, ՄԵԾ ԼՈՒՍԱՄՈՒՏԻՑ ԴԷՊԻ ԱԶ, ԽՈՇՈՐ ԵՒ ԳԵՂԵՑԻԿ ԳՐԵՐՈՎ

1. ...որդի Խաղբակա ետու զմեծ հողն որ ի
2. ...եկեղեցիս եւ այլ արդիւնք եւ առի զմատ
3. ...տակ ին շարբաթ ար ուր զժ ամ ն ինձ առնեն որ հակ
4. ...անանց հաստա... (կէս տող բաց):
 1. ... (Ես Վաս?)ակս որ բազում ընծայք ետու յեկեղեցիս
 2.

Ծանօթ.– Օսւ. Mat. XIII չունի: Բազմակետերով նշանակուած մասը թափած: Վերջին երկու տողը մաս չէ նախընթացի, թէեւ անմիջապէս տակը, այլ նոր արձանագրութիւն է, կարծում ենք Գրիգորի որդու՝ Վասակի:

ԴՐԱՆ ԱԶԱԿՈՂՄԻ ՊԱՏԻ ՎԵՐԱՅ

1. Ես Զագս մայր Վա?(սակա եւ կե)նակից Գրի
2. գ որ ո ար զնեցի տան(ս եւ ետու սպ?) ասն պատուա
3. կան եւ սպաս ար որ ք սո րա Խոստաց ան: Բ : ար ր պատ
4. արագել զՔս վարդապետին շարբաթն ար րն եւ
5. կիրակէն որ խափանէ դատի ի Բէ:

Ծանօթ.– Օսւ. Mat. XIII 56: «Ես Զագամայր կողակից», պետք է կարդալ «Ես Զագս մայր Վա(սակա եւ կե)նակից»: Չունի «տան(ս եւ ետու սպ)ան». «Եւ սպա-

սատրքս» պէտք է լինի սպասատրք սորա», «Ծարանարիս եւ Սիրակեանք...»,
անմիտ. պէտք է լինի «շաբաթն ար եւ կիրակէն, որ խափանէ դատի ի Քէ»:

ԱԶԱԿՈՂՄԵԱՆ ԱՒԱՆԴԱՏԱՆ ԳԼԽԻՆ ՆԵՐՍԻՑ

Կամաւն Այ եւ Ռստա/կէս մեղուցեալ քա/հանա ըստացա
զխո/րանս իմ հալալ արդեանց եւ սպասատրք սորա ե /Գ: ար
Ժ / րին թե ոք / եւ պարտակ / դաց իմոց:

Ծանօթ.– Ընդգծուած բառերը աղօտ, իսկ բազմակէտերով նշանակած մա-
ւերն ի սպառ փչացած: Ouw. Mat. XIII 55 կարդում է առանց պակասները ցոյց
տալու:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ՊԱՏԻՆ ՆԵՐՍԻՑ

1. Կամաւն Այ եւ Սագիս որդի Սմպա
2. տա թոռն Ծղեանց ստացա զխորանս ի հալալ արդեանց իմոց եւ
սպասաւ
3. որք սրբոցս հաստատեցին ի տարոջն
4. Գ: ար ժամ: Ա: ինձ: Ա: իմ հարն: Ա: իմ մար
5. նրնսին: ար նած եւ Սարգիս զի նեղ աւուրք երեստ զ: Կ: դահե-
կան
6. ի թս. ՈՂ?

Ծանօթ.– Թուականը մենք չենք նշանակել պարզ չլինելու համար, բայց
Ouw. Mat. XIII 56, նշանակուած «ՈԸ», որ անկարելի է, որովհետև տաճարը կա-
ռուցուած է, ինչպէս տեսանք, ԺԳ դարու առաջին քառորդին. գուցե ուղղելի է
«ՈՂ», որ համապատասխան կլինի շինութեան ժամանակին:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ՊԱՏԻՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՆԿԻՒՆՈՒՄ

1. ...պատրոնիկս եւ Արխունդիա գնեց
2. ար ի շինուած

3. սորա եւ սպասատրք ե
4. տուն ի Ժ: Բ: ար ժամ մե (s!) զկնի զատկին

Ծանօթ.– Չորրորդ տողում «գ» չի կրկնել, հետեւեալ բառի «գ»-ով սկսուելու
պատճառով. նման օրինակներ պատահում են արձանագրութիւնների մէջ: Ouw.
Mat. չունի:

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԴՐԱՆ ԿԱՄԱՐԻ ԳԼԽԻՆ

1. ... ՈՂԳ
2. (եւ) առաջն որ դ Տիրացու վարդապ
3. ետին եւ Սեւադա որ դի Սմբատա մեղուցեալ ծառ
4. ա Այ եւ ամու սի ն իմ Թաճեր տուաք զԴիքակի տափ ջրփո
5. դովն եւ զիմ ար կած այգին զՔալատակն եւ զ աւ ետ ար ան իմ
6. պատուական ի սք ու խտս եւ սպասատրք
7. ս որ ա խոստացան ինձ... պատ ար ազ ի տ
8. ար ոջն նոր կիրակէին ար դ որ զի
9. ողն եւ զայգին եւ զ աւ ետ ար անն հ
10. անէ ի վանացս եւ զժամն իս
11. ափանէ յ որ ժամ գա Քս զխափ
12. անողն Յս Քս սպա նողացն
13. համարեցի ամէն.

Ծանօթ.– Առաջին տողում կոտորուել է մի քանի տառի տեղ և պէտք է լինէր
«ի թվ» կամ «ի թու»:

Երկրորդ տողում կոտորուած սկզբի տառերը, բայց նկատուում է «եւ ա», ուստի
եւ փակագծի մէջ դրինք: Եօթերորդ տողում կէտադրուած մասում պատարագնե-
րի թիւը պիտի լինէր. «ինձ... պատարագ»: Վստահեցնում ենք, որ ամբողջը մեր
կողմից կարդացուած է տեղում եւ վերստուգուած լուսանկարչական պատկերի
համեմատութեամբ իւր կցումներով ամենայն ճշդութեամբ, ուստի եւ Ouw. Mat.
XIII 57 «Աջն է... Տեսոն աստուծոյ ի վերայ» բառերը սխալ եւ աւելորդ: Տարա-
բաղդաբար մեր կլիշէն աղօտ է եւ հնարաւոր չէ ընթերցողին անձամբ ստուգել:

**ԴՐԱՆ ԱԶԱԿՈՂՄ ՊԱՏԻ ՎԵՐԱՅ
ԶԱԶԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՏԱԿ, ՆՈՅՆ ԳՐՉՈՒԹԵԱՄԲ**

1. ես Մխիթար մեղուցեալ ծառայ եւ Սարգիս ե
2. դբայր իմ զմեր հոգո... ի սբ գաւիթս: Խ:
3. դեկան եւ զմարտիրոզոզն յեկեղեցիս եւ եղբարքս
4. խոստացան մեզ: Գ: ար պատարագ: Բ: ինձ եւ: Ա: Սարգսի
5. կատարիչքն արհնին յԱյ

Ծանօթ.- Ouw. Mat. XIII 57 կարդում է երկրորդ և երրորդ տողում բազմակե-
տերով նշանակուած փչացած մասից յետոյ, «տուաք ի. դահեկան եւ զՄարտիրո-
սի հոգ... սպասաւորքս անհամապատասխան բնագրին: Չորրորդ տողի մէջ «պա-
տարագել զՔս...» փոխանակ մեր ճիշդ ընդօրինակած բնագրին:

ՏԱԾԱՐԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՊԱՏԻՆ, ԴԷՊԻ ԱԶ ԴՐՆԻՑ

1. Ես Պետրոս եւ Հոգեդեղս աւօզն
2. եցաք տանս եւ սպասաւորք սորա
3. հաստատեցին: Ա : ժամ ինձ եւ ար: Ա :
4. Հոգեդեղին պատարագել զՔս ի
5. տաւնի առաքելոցն.

Իբրեւ շարունակութիւն ... դեղագիր ներսից
: Բ : ար

1. ժամ Տիրատրո որ : Խ: դահեկն ետ ի
2. գաւիթս որ խափանէ դատի ի Տէ

Կամաւն Այ եւ Խաչիկ ծառ... / :Խ: դկն ի սբ ուխտս:

Ծանօթ.– Ouw. Mat. չունի:

**ՀԱՐԱԻԱՅԻՆ ՊԱՏԻՆ ԴԱՆԻԷԼԻ ՊԱՏԿԵՐԱՔԱՆԴԱԿՈՎ
ԼՈՒՍԱՄՈՒՏԻ ՏԱԿ ԵՐԿՐՈՐԴ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ**

1. Ես անարժան աղախին Քի Գոհարս
2. ետու : Ի: դահեկան Երե միա
3. եւ այլ միաբանք խոստացան : Ա: ար ժամ

Սորա գլխին է նոյն գրով, անմիջապէս լուսամտի տակ

1. Ծնորհիւն Այ եւ Ա (թ. քհնա?) ետու Խ. դի: ի սբ Ստէփ
2. անոս եւ սպասաւորք խոստացան... (Բ: ար?) ժամ : Ա : ինձ : Ա :
իմ
3. հարն (թ) աթէռսի ով...»

Ծանօթ.– Առաջին արձանագրութեան մէջ ընդգծուած մասերը շատ մաշուած,
երկրորդ արձանագրութեան կասկածելի առաջին տողի փակագծի մէջ առնուած
մասը. երկրորդ տողինը մենք ենք աւելացնում, փչացած է: Երրորդ տողի մէջ «Թ»
եղծուած , մնացածի համար բոլորովին վստահ չեմ: Երկուսն էլ գրուած միաժա-
մանակ Երեմիայի օրով: Ouw. Mat. չունի:

ԽԱՉՔԱՐ, ՏԱԾԱՐԻ ՀԱՐԱԻԱՅԻՆ ՊԱՏԻՆ ԿԻՑ

1. Ծնորհիւն Այ եւ Մարտի
2. րոս քահանայ կանկնեց
3. ի զխաչս բարէխաւս ինձ եւ ծնող
4. աց իմոց որք երկրպագէ
5. ք յիշեցէք ի Քս աղա
6. ի թվ: չէ: Տր Ած Իդի լեր պ
7. ահապան Մարտիրոսի

Ծանօթ.– Ouw. Mat. XIII 60, Չորրորդ տողում «երկրպագանէք»: Վեցերոր-
դում չունի «Իդի», այսինքն «Իսրայէղի»:

ՀԱՐԱԻԱՅԻՆ ՊԱՏԻՆ ԳԷՊԻ ԱՐԵՒԵԼՔ

- 1. Յառաջնորդութե Գր. վդիմ եւ Ղարապան քարտուղար աթապա
- 2. Կ Սաղունին միաբանեցայ սբ ու
- 3. խտիս եւ էտու : Ի: դիկ : եւ սպասա
- 4. տրք խոստացան ի տարին :Ա: ար պա
- 5. տարագ ի տանի սբ Սարգսին

Ծանօթ.- Օսւ. Mat. XIII 59. Սխալ «Գր.. վդիմ-Սաղունին». «պատարա գել» ընդգծուածը չկայ բնագրում:

ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍԻ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՅ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԿՈՂՄԻՑ

- 1. Կաման Այ եւ Դեղս ետու զիմ այգին ի՛ սբ Ստեփանոս ի Հուրատն (հիրատուն?) յառաջնորդութի Յուսի (Յուսէփ) վարդն /
- 2. եւ եղբարքս ետուն :Բ: ժամ : Ա : ինձ :Ա: իմ ամուսնոյն Ուրբաթի? ով խափանէ դատի յԱյ:

Ծանօթ.- Առաջին տողի վերջում «Յուսի վարդն» պէտք է կարդալ «Յուսէփ վարդապետին», կրճատ է գրուած: Երկրորդ տողի մէջ «Ուրբաթի» կասկածելի է: Օսւ. Mat. XIII 62. «Գէորգ», փոխանակ «Դեղս», որ սխալ է. չունի «ի Հուրատն», «Յուսի վարդն» կարդացել է «...Վարդանայ», որ կարող է շփոթութեան պատճառ լինել, Վարդան անունով Առաջնորդ կայ ժե. դարում:

ՊԵՏՐՈՍԻ ՔԱՆԳԱԿԻ ՅԵՏԵԻՑ ՆԵՐՔԵԻ

Եւ շահ եր ս ետ/ու ի սբ Ստեփան/ոս:
Ի: դե. առի :Ա: / ար ժամ կատարիչքն արհնին յԱյ:

Ծանօթ.- Օսւ. Mat. XIII 62. կարդում է «շահ եմ ս», գուցէ «Շահ ետ ս» բայց ոչ երբեք «Շահեմս». ընդգծուածը կցուած:

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՂՄԸ ՄԻՋԻՆ ԹԵՒԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՐԵՍԻՆ

- 1. Յանուն Այ եւ Մխիթար որդի Յո
- 2. հանայ որ ետու արդ... (իւն) ք յեկեղ
- 3. եղիս եւ սպասաւորք սորայ ետ
- 4. ուն ինձ զքառասունք...
- 5. ..առնեն ու զգիր..
- 6. ..եմ թէ ոք մե/զ? հակառ..
- 7. եւ իմ մեղացս տր է առաջի Քի:

Ծանօթ.- Բազմակէտերով նշանակուած մասերը փչացած. վեցերորդ տողի մէջ «մեզ» ընդգծուած փչացած:

Օսւ. Mat. XIII 56. առաջին տող «Յոհաննէսի». երկրորդ տողում «այգի», փոխանակ «արդ(իւն)ք». 3-4 «ունին» փոխանակ «ետուն ինձ»:

ՏԱՃԱՐԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒ ԺԱՄԱՏԱՆ ԶԱԽ ԱՆԿԻՆՈՒՄ

Եւ Գերսամ ծա/ռա Այ ետու/ : Խ: դեկան ի տունս եւ ետուն ինձ / :Բ: պատարագ կա/տարիչքն/ արհնին յ Այ :

ՆԱԽԸՆԹԱՅԻ ՏԱԿԸ

Եւ Խաչատուր ետու զի/մ հայրենիք այգին յ/ եկեղեցիս եւ սպասա/տրք սորա խոստացան: Գ: ար պատարագ: Բ: ինձ: եւ: Ա: / Տերուանկանին որ խափ/անէ դատի յ Այ :

Եբ Յոհաննէս ծառայ Այ ետու: Խ: դեկան եւ / առի : Ա: ար պատարագ յիմ անուն կատարիչք ա./

**ԽԱԶ,
ՏԱԾԱՐԻ ԵՒ ԺԱՄԱՏԱՆ ՀԱՐԱԻԱՑԻՆ ԱՆԿԻՆՈՒՄ**

Խաչս Թաղէ / ոսի է յետ մա / հուան: Ա: քառ / ասունք:

Ես Գրիգոր Օ պե տս Հաւ(ոյ) Թառոյ միաբանեցա սբ Ստեփան ...
Խ: դեհկան եւ առի :Բ: ար պատարագ յիմ անուն:

Ծանօթ.- Ouw. Mat. XIII չունի 141-145 արձանագրութիւնները: Ծպետ Գրիգորի մասին տես մեր «Հատուց Թաղի Ամենափրկիչը», Երուսաղէմ, 1937, Եր. 23-24:

**ԳԱՆԻԷԼԻ ՔԱՆԳԱԿՈՎ ԼՈՒՍԱՄՈՒՏԻ ՊՍԱԿԻՑ ԴԷՊԻ ԱԶ,
ԻՒԱՆԷՒ ԵՒ ԳԷՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՏԱԿ,
ԲԱՅՑ ԱԻԵԼԻ ԽՈՇՈՐ ԵՒ ՏԱՐԲԵՐ ԳՐՈՎ**

1. Կ ամ աւ ամ ենայկալին Այ ես վանեհի... ամուսին... /
2. ...ուրի որ դոյ իմոյ տվի... սբ Ստեփանոսի ե... /
3. այրուրթ իւր հողով ու ջրով ամեն ցեղ... ուրթ շինուածով խա... /
4. ապա թէ ոք զայս ծոել ջանայ եւ կամ զայ ս հ... յայս եկեղեցոյս
հանե ...
5. որդի կամ ազատ կամ շինակ... պետացն նգ
6. Յուդաի եւ Կանեի ամէն:

Ծանօթ.- Այստեղ յիշուած վանեհին հաւանօրէն Զաջոտ Խաղբակեանի դուստրն է. տե՛ս Յաւել. Բ. 3 եւ 4:

ՀԱՐԱԻԱՑԻՆ ՊԱՏԻ ԱՐԵԻԵԼԵԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ

1. Ծնորհ... եւ Մխիթար կրաւ
2. Աստուր է ... մ հալալ արդեանց ... տս : Խ: դհկ: եւ
3. սպաս ... գրեցին ի տար
4. ին... Ա: ինձ: Ա: Մեղ
5. ...արողք ահնին յԱյ:

Ծանօթ.- Ouw. Mat. XIII 59. Երրորդ եւ չորրորդ տողում «սահմանեցին ի տարոջն ... միշտ Ա. ար ժամ»:

ՆԱԽԸՆԹԱՑԻՑ ԲԱՐՁՐ, ԿԻՍՈՎ ՉԱՓ ԵՂՇՈՒԱՄ

1. ... Այ ես Բարիոքս ետու ի սբ
2. ... :Խ: դկ եւ սպասաւ որ ք
3. ... ինձ: Ա: իմ մ
4. ... տ ար իչքն ահի
5. ... ն յ Այ :

Ծանօթ.- Ouw. Mat. XIII 59. Չորրորդ տողում Ա. «ար ժամ ի տարին» չկայ:

**ՀԱՐԱԻԱՑԻՆ ՊԱՏԻ ՎԵՐԱՑ, ԱՐԵԻԵԼԵԱՆ ԿՈՂՄԸ,
ՂԱՐԱՍԼԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՏԱԿ**

1. Կաման Այ ես Խաչանելս էտու
2. յիմ հալալ արդեանց: Խ: դհկ.
3. ի սբ ոխտու եւ առի: Բ: ժամ ի տարին
4. իմոցն կատարիչք
5. արհնին յԱյ եւ յետ... եկ
6. ...արթի արնեն անխափ
7. ան... Մամքանին արնեն:

Ծանօթ.- Ouw. Mat. XIII 59. Խաչանելս, «ի. դահեկան», ինչպէս եւ մնացածները սխալներով: Վեցերորդ եւ եօթերորդ տողերը գուցէ ուրիշ արձանագրութեան մաս:

**ՏԱԾԱՐԻ ՆԵՐՍԸ
ԱՐԵԻՄՏԵԱՆ ՊԱՏԻ ՎԵՐԱՑ ԴԷՊԻ ՀԱՐԱԻ**

1. Կաման Այ ես յերկայն Մխիթարս...

- 2. ուխտիս այր... միաբանեցա սր Ստեփան
- 3. ոսի եւ ետու: Կ: դեհեկան իմ հալալ... (արդեան) ց
- 4. եւ սպասաւորք սորա հաստատեցին ... Գ:
- 5. ար պատարագել զՔս: Բ: արն ինձ ... (Ա:) իմ ծն
- 6. դացն ...

Ծանօթ.– Ouw. Mat. XIII 56:

ՏԱՃԱՐԻ ՆԵՐՍԸ ԱՋ ԴԱՍԻ ՅԵՏԵԻ ԱԻԱՆԴԱՏԱՆ ՄՕՏ

- 1. Կաման Այ (ե) ս նա զ կիկ եւ եղբարքս միայբանեց
- 2. ար սր Ստեփանոսի եւ առար: Դ: ար ժամ եւ տվար: Ծ: դահ
- 3. եկան: Բ: ար ժամ... Ոհանին եւ: Բ: ար նազկիկան կատար

Ծանօթ.– Ouw. Mat. չունի:

ՀԱՐԱԻԱՅԻՆ ՊԱՏԻՆ ԴԷՊԻ ԱՐԵԻԵԼՔ

- 1. Կաման ամենայկալից Այ եւ Վարդան եպիս առաջ սր ուխտիս եւ զ տր (s!) Գալուստ փակակալ
- 2. սր եկեղեցոյս: զտր (s!) Յովանէս եւս Սք անդ ար Յլորեանց... տր Գալուստ: Ի: դիկ: տվինք
- 3. ձիթահանք շինեցար բազում աշխատանարք եւ ընչիւք եւ տվինք սր Ստեփանոս նահատակիս
- 4. ով որ հակառակի զվարձս Յուդայի եւ Կայենի առնի թվ. Զի:

Ծանօթ.– Ouw. Mat. XIII 60. բայց թերի:

ԽԱԶՔԱՐ ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍԻ ԳՐԱՆ ԱՋ ԿՈՂՄԻՑ

Սք խաչս բարեխաւս... արգ... / թվ. ՌԴ.

ՎԻՄԱԳՐԱԳԵՏ ՍԱՂՈՒՄՅԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԸ

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻՆ ԴԱՆԻԵԼԻ ՔԱՆԴԱԿԻՑ ՎԵՐ

- 1. ... Սպար|ապետութե[ան] հաոց եւ վրա[ց] զաք[արեի], ...
- 2. Թվի[ն] ՈԿԶ (1217), յիշխանութե[ան]ս Իւանեի ե[ւ] ի հայրայապետութե[ան]ս տ[է]ր Դաւթի, եւ՝ Աքել,
- 3. Վարդապետաց [վարդապետ] առաջնորդ եկե[ղ]եցոյս, միայբանութե[ան]սր եղբարս շին[ե]ցար զեկ
- 4. Եղեցիս մեծաւ աշխատութեամբ եւ հաստատեցար զգիր յիշատակի ազնողաց եկեղ
- 5. Եցոյս :Զ: ար ժամ Սարգսի, որ ի Գառնի զընձանն երես ու զեգին :Գ: ար Դաւթի եւ Գրիգոր
- 6. Եսի, .[Գ]. ար հ[ոգ] եղեղին [եւ] Սարգսի[ն] .Ա. ար Աքիսողոմիս, .Բ. ար Հայրապետիս, .Ա. ար [հ]այ[ր]
- 7. Ազնդին, :Բ: լոյստոսին եւ իւր կենակցին :Բ: Կարապետին եւ Մարգարէին, .Ա. Աւր[որդ]
- 8. Ոյ Ադոզին, :Ա: աշոտայ, .Բ. ստեփանոսի Զրքաշեանց., :Դ: Բախտկան ու Թամկան՝ [որ ի]
- 9. Նորագեղոյ մեծ այգ[ի]ն տուին, Ա: քվերն, որ զայգին երես մերձ ի բախտկան ե[ւ]
- 10. :Բ: Գէորգա եւ Յակոբա, որ զգին այգին տուին ի Նորագեղ, :Բ: Վարդանա :Բ: Մուրկան[ն]
- 11. [Ե]իս վարդանա, :Բ: Ապրստամբին եւ նազկանն, :Զ: յորոյ անուն, :Բ: Խորասուն՝ զ[նորա]տուն-

12. [Կ] այգին էրեւ. հաստատ[եցաք կ]ամաւն Ա[ստուծո]յ, էթէ ոք մ[եզ հ]ակառակի գրել այս կամ

13. Առաջնորդաց կամ ի սպասաւորաց էկեղեցոյս Ա [մ]եանցն մեղացն ինքն տացէ պ[ա] տասխան ի առաջի Ք[րիստոս]ի ի յարէն

**ԳԼԽԱՎՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻՆ
ԴԱՆԻԵԼԻ ՀԱՐԹԱՔԱՆԴԱԿԻՑ ԱՆՄԻՋԱՊԵՍ ԱԶ**

I Ի թուի[ն] ՈԿԱ (1212), [ե]յս՝ Աթապակ Իւանէ, տվի զվանաց փոր[ակ]ն եւ զվանաց փոր[ակ]ն եւ զվարդանաց փոսն Ըստ[ե]փանոսի[ն], վ[ա]ս[ն] եր[կ]ար կենաց որդոյ իմոյ աւագ

II ԻՆ: արդ, էթէ ոք ի մեծաց կամ ի փոքունց, [ա]զատաց կամ ի շինականաց [հ]ակառակ[այ] եւ զհողն խլել շանայ ի վանացս, Կաննի եւ Յուդաի մասնակից եղի[ցի] ել ՅԾԺԸ (318) Հա[յ]րապետացն նզովեսցի:

ԲԱՐԱՎՈՐԻ ԽՄԲԱՔԱՆԴԱԿԻ ԵԶՐԵՐԻՆ ՈՒ ՆՐԱ ՏԱԿ

ի ՈԿԶ (1217) ես՝ Գր / իգոր, որդի Խաղբակ / ա աւզնեցի եկեղեցոյս բազում արդեամբք եւ սպասաւորք / սորայ էտուն ինձ զաւագ խորանն .ե. շար և շաբաթն արն հա / նապագ էթէ ոք խափանէ: ՅԺԸ: (318) հայրապետացն նզովե[ա]լ եղիցի:

**ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻ
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՓՈՔՐ ՊԱՏՈՒՀԱՆԻՑ ՆԵՐՔԵՎ**

Կամաւն Ա[ստուծո]յ Ես մխիթա[ր] սպաս/աւոր հայր երէմիակ տվի :Ի: Դ[ա]հ[ե]կան եւ առի ար մի պատարագ ի տարին : բ: Ես Տիրատուր տվի / :Ի: դեկան եւ առի մի ժամ:

**ՎԱՆՔԻ ՊԱՐՍՊԻ ԱՐԵՎՄՏԱԿՈՂՄԻ
ԳԵՐԵԶՄԱՆՈՑԻ ԽԱԶՔԱՐԻ ՎՐԱՅԻ ՄԱՆՐԱՏԱՌՈՎ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ. ՎԱՆՔԻ ԵՒ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՅՈՒԹՅԱՆ ՀՆԱԳՈՒԹՆ ՎԿԱՅԱԳԻՐԸ**

Կամաւ ամենակալին Ա[ստուծո]յ այս մեր գիր է. ս[ուր]բ ուխտին / հարս եւ այլ միա / բան եղբարցս, որ գրեց / աք շատլոյսին. միաբա/նութիւնի / տարին .Բ. / Աւր ժամ / անխափան եւ / Ծատլոյսն ե[ղ]կ / եղեցոյս / արդիւնք ար/ ար եւ որ ոչ/ առնէ զժամն՝ դատ/ եսցի յա[ստուծո]յ: ՈԽԶ (1197):

**ԳԱՎԹԻ ՀԱՐԱԻԱՅԻՆ ՊԱՏԻՆ,
ՆԵՐՍԻՑ, ԲԱՐՁՐՈՒՍՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԱԾ Է**

Ես՝ Վարդան, էտու :Խ: դ[ա]հ[ե]կեա ի ս[ուր]բ ստեփ[ան]ոսիս եւ միաբանքս գրեցին ինձ ի տ/ար[ի]ն. բ. ար ժամ, .Ա. ինձ, .Ա. իմ ծնողացն, կատարիչքն ար[հն]ի[ն] Յ]Ա[ստուծո]յ:

AGHDJOTS

Saint-Stépanos

| | |
|-----|-------------------|
| 139 | APERÇU HISTORIQUE |
| 148 | L'ARCHITECTURE |
| 151 | LA SCULPTURE |
| 158 | L'ICONOGRAPHIE |
| 205 | LE STYLE |
| 229 | CONCLUSION |
| 233 | APPENDICE |

AVANT-PROPOS

La première personne à lire cette étude fut le regretté Professeur Sirarpie Der Nersessian spécialiste connue d'art médiéval, dont les travaux ont contribué à inclure l'art arménien dans le domaine général des arts médiévaux. En cette fin des années 1980, sa bienveillante approbation et son désir de voir ce travail publié, malgré certaines observations importantes, m'ont encouragée dans cette voie. Pour diverses raisons, la publication dut être ajournée.

Plus de quinze années ont passé. L'accord donné pour cette publication par le Dr Zaven Egavian, directeur du Service des Communautés arméniennes de la Fondation Calouste Gulbenkian, m'a incitée à revoir l'ouvrage, à l'enrichir et le doter d'un appendice présentant les inscriptions du monastère.

Je tiens donc à exprimer en premier lieu ma profonde reconnaissance à la Fondation Gulbenkian, et plus spécialement au Dr Z. Egavian.

Je voudrais également remercier Mme Aïda Tcharkhtchian, la traductrice du texte, pour son travail professionnel et ses conseils, M. Claude Mutafian pour son précieux et permanent soutien, M. Aram Guévorkian, archéologue, et M. Zaven Sargsian, photographe, dont l'aide a rendu possible mes visites au site lointain et difficilement accessible du monastère Aghdjots.

Je suis reconnaissante à mes collègues du Maténadaran, particulièrement à M^{lle} Loussik Stépanian, à particulièrement à dr. Vardan Devrikian, Armen Ter-Stépanian, ainsi qu'au Professeur Parouyr Mouradian ; ils ne m'ont jamais ménagé leur compétent concours dans différentes questions. Mes profonds remerciements à mes amies M^{me} Varvaré Basmadjian, M^{lle} Alice Azatkhian et M^{lle} Aïda Karniguian pour leur soutien amical. Je

suis reconnaissante au peintre Mekertitch Mathévossian pour son soutien pratique et désintéressé apporté au cours de tout mon travail.

Je voudrais remercier sincèrement Viguen Tadévossian non seulement pour le design professionnel du livre, mais aussi pour ses remarques constructives et sa participation à la collation des textes.

Mes remerciements à Gourguen Gasparian dont le travail patient et minutieux a porté à la perfection l'impression du livre.

APERÇU HISTORIQUE

Le monastère Saint-Stépanos est situé dans un petit vallon pittoresque du versant nord de la haute chaîne des monts Guégharkouniats, qui descend progressivement vers la rivière Azat, à l'est de Garni et de Havouts Thar, à proximité de Guéghard, côté sud.

La fondation du monastère et son nom sont liés à une tradition fréquente en Arménie, selon laquelle l'idée d'un lieu du culte appartiendrait à Grégoire l'Illuminateur. La variante littéraire et prolixe de cette tradition est exposée dans les Synaxaires et commémore les vierges hripsimiennes. Ainsi, dans la rédaction de Grigor Khlatétsi, il est dit : « ... trois prêtres accompagnant l'une des saintes, nommée Nouni, s'enfuient vers l'est lors de leur massacre. L'un de ces prêtres, du nom de Stépanos, se réfugie sur le mont Garni et là, trépassé en Christ, il est enterré sur place. Par la suite, saint Grégoire, inspiré par les anges, fonde en ce lieu un monastère qui porte jusqu'à présent le nom de Saint-Stépanos Aghdjots (i.e. des Vierges). Saint Grégoire apprend des anges le nom du saint. C'est pourquoi le monastère est nommé Saint-Stépanos Aghdjots »¹.

On sait que la tradition de consacrer des églises et des monastères aux vierges hripsimiennes et aux autres martyrs est très ancienne et fréquente en Arménie ; elle perdure jusqu'au bas Moyen Age. Il n'est pas exclu que le monastère Aghdjots, qui existe encore de nos jours, soit construit sur les ossements du prêtre Stépanos, là où un martyrium est élevé, probablement au IV^e siècle. Ce fait est mentionné dans les Synaxaires : « De nombreux maux sont guéris à présent dans le monastère des reliques de saint Stépanos »².

1 *Synaxaire*, p. 140, Constantinople, 1706, rédaction de Grigor Khlatétsi.

2 *Ibidem*.

Rien ne subsiste aujourd'hui de cette construction primitive. Toutefois, au XIII^e siècle, un monastère est élevé sur le même site, loin des routes fréquentées et il continue son existence jusqu'à présent, résistant sans aucune aide humaine aux sévices impitoyables du temps. Dès le jour de sa fondation, le monastère est connu sous le nom d'Aghdjots et, comme tel, il est mentionné par Vardan Aréveltsi (XIII^e siècle) ; l'historien écrit que le monastère conserve « la sainte dextre du prêtre Stépanos et la sainte dextre d'Aristakes, fils de saint Grégoire l'Illuminateur »³. Dans les années 1270, Vardan Aréveltsi visite le monastère sur l'invitation de l'archimandrite Erémia, il y travaille et termine son *Commentaire de Daniel*. On lit dans son colophon : « J'ai commencé en l'an 716 (+ 551=1267) à Saint Khor Virap et j'ai terminé en 717 sous la protection du saint et bienheureux martyr Stépanos, au saint monastère Aghdjots sous le prieuré de l'hospitalier Erémia et des frères dignes de louanges »⁴.

Les autres auteurs de l'époque ne mentionnent pas le monastère et ce n'est que bien plus tard, au XVIII^e siècle, que le père mekhitariste Mikaël Tchamtchian parle de la tradition qui lui reste liée et qui subit bien sûr certains changements au cours des siècles : « Le prêtre Stépanos du groupe accompagnant les vierges hripsimiennes construisit là un monastère qu'on nomma par la suite monastère Aghdjots »⁵. En mentionnant le monastère, l'archimandrite Ghoukas Indjidjian cite la même tradition⁶.

Heureusement, les historiens du XIX^e siècle parlent du monastère en d'autres occasions. Siméon Erevantsi en cite brièvement les possessions⁷ et Sarkis Djalalians, évoquant le séisme de 1679, prétend entre autres que le monastère Aghdjots et celui de Guéghard sont « détruits de fond en comble comme punition pour nos péchés »⁸. Il semble toutefois que la

3 VARDAN AREVELTSI, *Géographie*. Paris, 1960, p. 14, 30.

4 G. HOVSEPIAN, *Les Khaghbakians ou les Prochians dans l'histoire d'Arménie*. Antélias, Liban, 1969, p. 44 (en arm.).

5 M. TCHAMTCHIAN, *Histoire d'Arménie*. Venise, t. I, 1784, p. 397

6 *Description de l'Arménie ancienne, Arménie Majeure*, par l'archimandrite Gh. INDJIDJIAN de la Congrégation des Mekhitaristes. Venise, 1822, p. 268 (en arm. classique)

7 SIMEON EREVANTSIS, *Djambr. Vagharchapat*, 1878, p. 281

8 S. DJALALIAN, *Voyage en Arménie Majeure, Vagharchapat*, 1878, Partie II, p. 127
Le diacre Zakaria communique la même chose dans son *Histoire. Vagharchapat*, 1870 partie II, p. 104

réalité soit autre. Le monastère Aghdjots n'est pas détruit de fond en comble au XVII^e siècle, même si certaines parties de l'édifice ont probablement été endommagées, surtout le *gavit* de l'église principale et la couverture de la chapelle Poghos-Pétros.

Le père Léonce Alichan, érudit arménisant, donne plus de détails sur le monastère, mais malheureusement lui non plus ne va pas au-delà de sa description et de son histoire⁹.

La première tentative sérieuse de présentation scientifique du monastère Saint-Stépanos Aghdjots est due à l'expédition archéologique impériale de Russie au début du XX^e siècle. Apparemment, c'est la première fois que le monastère reçoit la visite de scientifiques. En 1907-1908, sur la proposition de la Société archéologique impériale de Moscou, V. Sissoyev et Taragos Vardaniants visitent l'Arménie et, accompagnés de Khatchik Dadian, font des relevés et prennent des photographies d'un certain nombre de monuments, dont le monastère Aghdjots. Cinquante-trois inscriptions sont publiées dans le XIII^e tome des documents concernant l'archéologie du Caucase¹⁰.

Dans le second tome de son ouvrage *Die Baukunst der Armenier und Europa*, publié en 1918¹¹, Josef Strzygowski parle du monastère St.-Stépanos et donne une brève analyse stylistique des sculptures en se basant sur les photographies dont il dispose¹².

Le catholicos Garéguin Hovsépian, savant éminent et grand connaisseur de la culture arménienne, parle lui aussi du monastère Aghdjots dans son ouvrage fondamental *Les Khaghbakians ou les Prochians dans l'histoire d'Arménie*¹³. C'est à lui que nous devons l'étude multilatérale de l'histoire du complexe monastique et du rôle qu'il joue en tant que centre spirituel, ainsi que la copie aussi consciencieuse que possible des inscriptions et leurs annotations. D'après les inscriptions qu'il déchiffre,

9 L. ALICHAN, *Ayrarat*. Venise, 1890, p. 352-354, 560-561 Zakaria, *Ibidem*.

10 *Documents de l'archéologie du Caucase*, vol. XIII, sous la rédaction de la comtesse P. Ouvarova et de Kh. Koutchouk-Ioanessov. Moscou, 1916, p. 54-65, 237 (en russe).

11 J. STRZYGOWSKI, *Die Baukunst der Armenier und Europa*, Band I, II. Wien, 1918.

12 *Id.* p. 813.

13 G. HOVSEPIAN, *op. cit.*

Garéguin Hovsépian date de 1212 le début de la construction de l'église principale et de 1217 sa fin¹⁴.

La contribution de l'épigraphiste Souren Saghounian est importante dans le domaine de l'étude des inscriptions¹⁵. En particulier, il met en doute la date de la fondation de l'église principale proposée par Garéguin Hovsépian, alléguant que ce dernier n'a pas pu lire de près l'inscription concernant la construction de l'église : ce n'est pas impossible. En outre, Saghounian trouve au cimetière du monastère, sur un *khatchkar* inconnu jusque là, une inscription en petites lettres qui témoigne de l'existence et de l'activité du monastère dès 1197. Compte tenu des données de l'inscription du *khatchkar*, l'hypothèse de Saghounian semble parfaitement logique. Il est probable qu'une pauvre vieille bâtisse existe à la fin du XII^e siècle en ce même lieu, incompatible avec le goût et les exigences des propriétaires du monastère, la dynastie Khaghbakian, qui commençait seulement son ascension dans la vie politique du pays. C'est à cette époque que leurs possessions s'agrandissent, incluant de nouveaux bourgs et monastères. Le vallon Kéghouats, où se trouvent les monastères Aghdjots et Vanstan, ne constituant qu'une petite partie de leur principauté¹⁶. Il est probable que les Zakarians commencent à la même époque à reconstruire la vieille église d'Aghdjots, ce qui est confirmé par la nouvelle lecture de cette inscription donnée par Saghounian.

Cette unique inscription parlant de la construction de l'église principale d'Aghdjots est gravée dans l'angle supérieur gauche de son mur sud, au-dessus du relief de Daniel. Dans les années 1980, elle est minutieusement étudiée et relue par Souren Saghounian, qui propose une nouvelle date pour la fondation de l'église principale. Son argumentation est fondée sur des faits historiques, les dates relatives à l'activité et à la mort des person-

14 G. HOVSEPIAN, *op. cit.*, p. 32, 226.

15 S. SAGHOUMIAN, « Sur la construction d'un monument historique », *Patma-banasirakan Handes*. Erevan, 1986, n° 2 (en arm.).

16 Il y a au monastère d'Aratès une inscription qui parle des limites des terres de Vassak Khaghbakian : « Moi, Vassak, fils de Khaghba..., possesseur des domaines de Gami jusqu'à Bargouchat, j'ai acquis les châteaux de la vallée Eghékiats avec l'aide de Dieu, sous le pontificat de Ter Sarkis, et j'ai nommé les prieurs des monastères et les chefs des nouveaux bourgs... » (Voir G. HOVSEPIAN, *op. cit.*, p. 31, Appendice A-3, p. 299).

nalités importantes et célèbres dont les noms sont gravés sur deux pierres découvertes par lui (leur absence est d'ailleurs signalée par Garéguin Hovsépian) et qui s'avèrent décisives pour préciser la date de la construction de l'église¹⁷.

La première ligne de l'inscription atteste que l'édifice est construit à l'époque de Zakaré, commandant des Arméniens et des Géorgiens, en 1217 ; or, Zakaré est mort en 1208. Selon Saghounian, une erreur s'est glissée dans les lettres transcrivant la date, ce qui est assez fréquent dans les inscriptions lapidaires et les colophons de manuscrits¹⁸ ; il propose de corriger la date selon « l'unique variante possible », c'est-à-dire 1207, époque où Zakaré est encore en vie, de même que l'autre personnalité mentionnée, le catholicos David III Arkayakaghnétsi, mort en 1209.

Ainsi, la fondation du monastère en 1207 semble parfaitement logique et convaincante, d'autant plus que les autres inscriptions du monastère Aghdjots présentent aussi des erreurs du même genre dans leurs chiffres exprimés par des lettres¹⁹.

Environ une quinzaine d'années plus tard, on entreprend la construction du *gavit*. Selon Garéguin Hovsépian, elle commence en 1222 au plus tard et se trouve achevée en 1234. Par conséquent, le début et la fin des travaux doivent être fixés entre ces deux dates²⁰.

L'église principale est accolée au côté nord de la petite église Poghos-Pétros. L'inscription du fronton de l'entrée est à peine lisible et Garéguin Hovsépian réussit difficilement à la déchiffrer ; le début de l'inscription est peint, la suite est gravée et incomplète. Toutefois, cette inscription permet au savant épigraphiste de dater la petite église comme postérieure à 1270. La date est ensuite précisée d'après les données des autres inscriptions du monastère. G. Hovsépian note que l'inscription du fronton de l'église Poghos-Pétros mentionne Vassak, petit-fils de Khaghbak, fils de

17 S. SAGHOUMIAN, *op. cit.*

18 Ainsi, dans la formule de la dernière ligne de l'inscription gravée à droite du relief de Daniel : « ...qu'il subisse le sort de Judas et de Caïn et qu'il soit maudit des 318 patriarches (ՅԴՇԸ), la lettre Դ est superflue, puisque sans cette lettre on obtient 318 (ՅՇԸ), nombre canonique des patriarches.

19 G. HOVSEPIAN, *op. cit.*, p. 332, annotation.

20 *Id.*, p. 229.

Grigor, à l'époque duquel ou par lequel l'église est érigée²¹. Ainsi, selon Garéguin Hovsépian, tous les édifices du monastère St-Stépanos Aghdjots doivent être considérés comme construits avec le soutien de la lignée de Grigor Khaghbakian²².

Le fait que la maison féodale en question ne soit originaire ni de cette province ni des provinces voisines empêche dans une certaine mesure de préciser définitivement les limites de ses possessions. Les informations de nos historiens concernant cette maison princière sont assez frustes. C'est à l'occasion de la bataille qui oppose en 1229, près de la ville de Gandzak, les Kiptchaks (Polovtziens) aux Géorgiens menés par l'atabek Ivané, que Kirakos Gandzakétsi mentionne, le premier, cette famille et surtout Grigor, « fils de Haghbak », qui est fait prisonnier et succombe en martyr de sa foi. Selon cet historien, les Khaghbakians sont originaires de la province de Khatchen, en Artsakh, « de foi chrétienne et de nationalité arménienne »²³. Leur participation à la guerre joue un rôle décisif dans l'essor futur de cette dynastie. Les Khaghbakians, connus par la suite sous le nom de Prochians, étaient des chefs militaires sous les Zakarides. Par leur courage et leur inflexible volonté, ils aidèrent les frères Ivané et Zakaré à reconquérir de nombreuses provinces d'Arménie.

Les recherches de Garéguin Hovsépian montrent que la principauté des Khaghbakians était composée de plusieurs fiefs plus ou moins grands. Il est toutefois difficile d'en délimiter avec précision les frontières à cause de la pénurie de documents²⁴, c'est pourquoi cet auteur s'attache à présenter les activités culturelles de cette famille en relation avec les célèbres centres culturels qui jouaient un rôle important dans la vie politique et culturelle de toute l'Arménie au début du XIII^e siècle. Il s'agit de Ketcharis, de Guéghard²⁵, du monastère de Tanahat, de l'église de la Vierge

21 G. HOVSEPIAN, *op. cit.*, p. 43,44, 229, Appendice A, p. 331, no. 124.

22 *Id.*, p. 229.

23 *Id.*, p. 33 ; KIRAKOS GANDZAKETSI, *Histoire d'Arménie*. Erevan, 1961, chapitre XII, p. 206 (en arm. classique).

24 G. HOVSEPIAN, *op. cit.*, p. 19-34.

25 Guéghard ou Ayrvank ne fait pas d'abord partie des terres de Vassak Khaghbakian. Ce n'est qu'ensuite que le grand prince Proch, fils du prince Vassak, l'acquiert. G. HOVSEPIAN, *op. cit.*, p. 31.





Վերջին Դատաստան.
 բարավորի քարը խիստ հողմահարված է,
 սակայն ի մոտո ուսումնասիրությունը հաստատում է առաջարկված տարբերակը
 Le Dernier Jugement.
 La pierre est martelée mais l'examen détaillé affirme notre identification initiale.


Գլխավոր եկեղեցու արսիդի ճակատակալ պատը՝ տասնվեց սալիկով
 Երեք բանդակազարդ սալիկ,
 որոնցից մեկը Ջաքարյան իշխանների պատկերով
 Mur frontal de l'abside de l'église principale avec seize dalles.
 Trois dalles ornementées, dont une avec des portraits des princes Zakaride.



Փոքր եկեղեցու ներսի հարավային պատի դռան բարավորը,
կենտրոնում՝ հավերժության նշանակով
Tympan à feuille ;
signe d'éternité gravé à l'entrée du mur sud de la petite église.



Փոքր եկեղեցու արեւմտյան կողմը
Պողոս, Պետրոս առաքյալների քանդակապատկերներով
Façade ouest de la petite église avec
les apôtres Pierre et Paul



Գանիերը առյուծների գրում.
 Լուաշար կամարի վերին մասում հյուսածո նախշով շրջանակ,
 երկու կողմերում՝ աղավնիներ.
 վարի փոքր կամարի խորքի վրա՝ խաղողի ողկույզներ

Daniel dans la fosse aux lions.
 Pigeons incrustés des deux côtés d'un bouclier ornementé,
 grappes de raisin sous le petit arc.

Գլխավոր եկեղեցու հարավային կողմը
 Façade sud de l'église principale.



Գլխավոր եկեղեցու արեւմտյան կողմը.
մուտքի բարավորի վրա
Վերջին Դատաստանի քանդակապատկերը

Façade ouest de l'église principale.
Sur le tympan le Dernier Jugement.

Գլխավոր եկեղեցու ինտերյերը արսիդով
Abside de l'église principale.

Spitakavor, de l'ermitage de Boloradzor, des monastères de Kouki et Votzop, ainsi que de Gladzor. Cette liste est complétée par le monastère St-Stépanos Aghdjots, centre spirituel d'une des branches de la maison Khaghbakian.

